# Hogewor erger

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Derderian, Ghougas (1878-1932). Hogewor erger. 1912.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF.Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :
*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.
*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer ici pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.
*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

# Հոգեւոր Երգեր

## Եղանակներով

Եկէք ցնծութիւն ընենք Տէրոջը առջեւ,
Աղաղակենք մեր փրկութեան Վէմին։

Թող ժողովուրդները քեզ գովեն ով
Աստուած,
Բոլոր ժողովուրդները քեզ գովեն։

Մտէք անոր դռները գոհութեամբ,
Ու անոր սրահները՝ օրհնութեամբ.
Գոհացէք անկէ ու օրհնեցէք անոր
անունը։

Քրիստոսի խօսքը ձեր մէջ բնակի առատապէս ամէն իմաստութիւնով՝ իրար սորվեցնելու ու խրատելու՝ սաղմոսներով ու օրհնութիւններով ու հոգեւոր երգերով ձեր սիրտերուն մէջ շնորհքով զԱստուած օրհնելու։

2008-129515

Նուէր Երուսաղէմի Սրբ. Յակոբայ Վանք Մատենադարանին.

Մեսրոպ Գալստեան: 1966 – 6 – 2.

# ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

## ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1912

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հոգեւոր Երգարանի բարեփոխեալ եւ ճոխացեալ հրատարակութեան մը պէտքը շատոնց ի վեր զգացուած էր Հայ Աւետարանական եկեղեցեաց կողմանէ: Երգարանին սոյն տասներորդ տպագրութեան համար մեծապէս երախտապարտ ենք մեր հանգուցեալ սիրելի եղբօր, Յակոբ էֆէնտի Մատթէոսեանի, որ հովիւներու, քարոզիչներու եւ բարեկամներու կարծիքը առաւ թէ նախկին երգերէն որո՛նք են նախասիրուածները, եւ ձեռք բերաւ Անաթոլիա Գոլէճի տնօրէնին եւ ուսուցիչներէն ոմանց եւ այլոց ձեռնտուութիւնը՝ պահուած երգերուն բարեփոխման գործին մէջ: Այս տպագրութեան մէջ հին երգերէն պահուած են 304 երգ, եւ 175 երգ զանց առնուած են: Զանց եղած երգերուն մեծագոյն մասը Սաղմոսներ են, որոնք երկար ժամանակէ հետէ կամ քիչ կը գործածուին կամ երբեք չեն գործածուիր: Իսկ գալով պահուած երգերուն, հիմնական սկզբունքը եղաւ՝ ընել միայն այնպիսի բարեփոխումներ որ, ինչպէս կը յուսացուի, հաւանութիւն պիտի գտնեն անոնցմէ որոնք կը սիրեն հին երգերը եւ ի վաղուց հետէ գործածած են զանոնք պաշտամունքի մէջ: Նոր Երգարանը կը պարունակէ նաեւ կիրակնօրեայ դպրոցի քանի մը երգեր որոնք կը գտնուին 1884ի տպագրութեան մէջ: Ասոնց վրայ աւելցուած են այլեւայլ բարեկամներէ յօրինուած կամ թարգմանուած 113 նոր երգեր: Երգերուն հին եւ նոր եղանակներու ընտրութեան գործը կատարած է Արշակ էֆէնտի Տաղլեան, Անաթոլիա Գոլէճի երաժշտութեան ուսուցիչը: Սրտագին շնորհակալութիւններ կը մատուցուին բոլոր այն անձանց որոնք Նոր Երգարանին պատրաստութեանը օգնեցին երգերու շարադրութեամբ, թարգմանութեամբ կամ ինչ ինչ թելադրութիւններով:

Նոր Երգարանը կը բովանդակէ նաեւ Առաքելական Հանգանակը, քանի մը կցուրդներ (անթեմ) եւ շարականներ եղանակներով։ Կը յուսացուի թէ ասոնք պիտի ծառայեն աւելի սիրելի եւ օգտակար ընծայելու երկրպագութեան պաշտամունքը։ Երգերուն հեղինակներուն ու թարգմանիչներուն անունները յիշուած են, սակայն կը ցաւինք որ հին երգերէն շատերուն հեղինակներուն եւ կամ թարգմանիչներուն անունները դեռ մեզի ծանօթ չեն։

Այս Երգարանին 1908 ի տպագրութիւնը սպառած ըլլալով, ներկայս կը հրատարակենք նոյնութեամբ, առանց ոեւէ փոփոխութեան, բաց ի վրիպակներու ուղղութենէ։ Նոր տպագրութեան մը խնդրանքը ստիպողական ըլլալով՝ ուրիշ փոփոխութիւններ կամ յաւելումներ կը թողունք յառաջիկային։

# ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ով Հայր մեր որ երկինքն ես, Քու անունդ սուրբ ըլլայ. Քու թագաւորութիւնդ գայ. Քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ. մեր ամէն օրուան հացը այսօր մեզի տուր. և մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն. ու մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն մեզ ազատէ. քանզի քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս: Ամէն:

# ՏԱՍՆԱԲԱՆԵԱՑ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

Աստուած աս բոլոր խօսքերը գրուցեց՝ ըսելով,

Ես եմ Եհովա քու Աստուածդ, որ քեզ Եգիպտոսի երկրէն՝ ծառայութեան տունէն հանեցի:

1 Ինծմէ ի զատ ուրիշ աստուածներ չունենաս:

2 Դուն քեզի կուռք չշինես, ոչ ալ վերը երկնից մէջ, կամ վարը երկրի վրայ, կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը. անոնց երկրպագութիւն չընես ու զանոնք չպաշտես. ինչու որ ես քու Տէր Աստուածդ նախանձոտ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս. և կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն:

3 Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ չառնես. ինչու որ Տէրը իր անունը պարապ տեղը բերան առնողը անմեղ պիտի չսեպէ:

4 Հանգստութեան օրը միտքդ բեր՝ զանիկա սուրբ պահելու համար: Վեց օր պիտի աշխատիս, ու բոլոր գործդ ընես. բայց եօթներորդ օրը Տէրոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է. ան օրը գործ մը չգործես, ոչ դուն, ոչ քու որդիդ, ոչ քու աղջիկդ, ոչ քու ծառադ ու աղախինդ, ոչ քու անասունդ, ոչ ալ տանդ մէջ եղած օտարականդ. քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքը ու երկիրը, ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը ու սրբեց զանիկա:

5 Պատուէ քու հայրդ ու մայրդ, որ քու օրերդ երկար ըլլան ան երկրին վրայ՝ զոր քու Տէր Աստուածդ կու տայ քեզի:

6 Սպանութիւն մի ըներ:

7 Շնութիւն մի ըներ։

8 Գողութիւն մի ըներ։

9 Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի ըներ։

10 Քու դրացիիդ տանը մի ցանկար. քու դրացիիդ կնոջը, կամ անոր ծառային, կամ անոր աղախինին, կամ անոր եզին, կամ անոր իշուն, և քու դրացիիդ ամենևին մէկ բանին մի ցանկար։

Լսեցէք նաև մեր Տէրոջը Յիսուսի Քրիստոսի խօսքերը, որ ըսաւ,

Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ ու քու բոլոր միտքովդ, այս է առաջին ու մեծ պատուիրանքը. ու երկրորդը ասոր նման, քու ընկերդ սիրես քու անձիդ պէս։ Այս երկու պատուիրանքէն կախուած են բոլոր օրէնքը և մարգարէները։

## ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ

Կը հաւատամ ամենակալ Հօր Աստուծոյ, երկնի և երկրի Ստեղծողին, և անոր Միածին Որդւոյն, մեր Տէրոջը Յիսուսի Քրիստոսի, որ յղացաւ Սուրբ Հոգիէն, ծնաւ Մարիամ կոյսէն, չարչարուեցաւ Պոնտացի Պիղատոսի օրով, խաչուեցաւ, մեռաւ և թաղուեցաւ, և երրորդ օրը յարեաւ մեռեալներէն, երկինք համբարձաւ և ամենակալ Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ. անկէ պիտի գայ դատել կենդանիները և մեռեալները։ Կը հաւատամ Սուրբ Հոգւոյն, կաթողիկէ սուրբ եկեղեցւոյն, սուրբերուն հաղորդութեան, մեղաց թողութեան, մարմնոյ յարութեան և յաւիտենական կենաց։ Ամէն։

# ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

## ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

### 1 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ




ՍԱՂ.·ՀԲ · 18, 19

*Փառք եւ պատիւ ու զօրութիւն*
*Հօրն ու Որդւոյն եւ Սուրբ Հոգւոյն.*
*Միասնական Երրորդութեան*
*Փառք ի բարձունըս յաւիտեան։*

## 2 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ




ւոյն, Հօրն ու Որդ—ւոյն եւ Սուրբ Հոգ-ւոյն, Հօրն ու Որդ-ւոյն եւ Սուրբ Հոգւոյն։
Ա-լէ-լու-իա, ա-լէ-լու-իա, ա-լէ-լու-իա, ա-մէն, ա-մէն, ա—լէ—լու-իա,
Ա-լէ-լու-իա, ա-լէ-լու-իա, ա-լէ-լու-իա, Ա-լէ-լու-իա, ա-լէ-լու-իա, ա-լէ-
լու-իա, ա-լէ-լու-իա, ա-մէն, ա-մէն. Ա-լէ-լու-իա, ա-մէն, ա-լէ-լու-իա, ա-մէն։
461

## 3 ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

Ղուկ. Բ. 14



**ՄԱՍՆ Ա.**

Փառք ի բարձունս | Աստու | ծոյ, || եւ յերկիր խաղաղութիւն, ի մար | դիկ . . . ¦ հաճութիւն։ ||
Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս. օրհնեալ ես, Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ եւ զո | վեմք ըզ | քեզ։ || Խոստովանիմք, Տէր, զքեզ եւ երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք, Տէր, զքէն վասն մե | ծի փա | ռաց . . . | քոց։ ||



**ՄԱՍՆ Բ.**

Տէր թագաւոր, Սուրբդ | երկնա | յին, || Աստուած եւ | Հայր Ա | մենա | կալ. ||
Տէր եւ Որդի Հօր | միա | ծին, || Յիսուս Քրիս | տոս եւ | Սուրբ Ոգ | ի. ||



**ՄԱՍՆ Գ.**

Տէր Աստուած. Գառն Աստուծոյ եւ | Որդի | Հօր, || Որ առեր զմերս ի կուսէն, ողորմե | ցար. ||
Բարձեր զմեղս աշխարհի. եւ արդ ընկալ զաղա | չանըս | մեր. || Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր, ո | ղորմեաց | մեզ։ ||



**ՄԱՍՆ Դ.**

Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յի | սուս Քրիս- | տոս. || Տէր եւ Հոգիդ Սուրբ, որ ի | փառս Աս | տուած ընդ | Հօր։ || Ա | մէն։ ||

## 4 ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ




ՄԱՏԹ. ԻԱ. 9

Փառք ի բարձունըս Աստուծոյ,
Եւ փառք Որդւոյն,
Նաեւ փառք Սուրբ Հոգւոյ.
Փառք, պատիւ Երրորդութեան,
Այժմ եւ միշտ յաւիտեանս
Յաւիտենից։ Ամէն, Ամէն։

# 5 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ







ՍԱՂ. Ղ.Ը.

1 Ամէն երկիրներ, Տէրոջմով ցնծացէք
Դողով եւ ուրախութիւնով.
Տէր Եհովային ընծաներ մատուցէք
Հոգւով եւ ճշմարտութիւնով։

2 Բանզի գերազանց բարերար է մեր Տէրն,
Որ մեզ ստեղծած է, եւ մենք՝
Անոր խոստաւէտ արօտին ոչխարներն՝
Պիտի անոր ձայնը լըսենք։

3 Անոր սուրբ դռները եկէք գոհութեամբ,
Անոր սըրահները մըտէք.
Անոր ծափ զարկէք հոն, եւ օրհներգութեամբ
Անոր անունէն գոհացէք։

4 Չի ինք մեր Աստուածն է. ի յաւիտենից
Կեցած են ու պիտի կենան
Անոր խորհուրդներն ու գործերն գըթալից,
Ազգէ մինչեւ ազգ յաւիտեան։

Թարգ. ELIAS RIGGS

## 6 ԻՋԻՐ, ԱՐՔԱՅ ՀԶՕՐ







ՑՈՎՀ. ԺԴ. 23

1 Իջի՛ր, Արքայ հըզօր,
Անունըդ փառաւոր
Տուր որ գովենք.
Ամենատէր եղող,
Ամէ՛ն տեղ միշտ յաղթող,
Եղի՛ր մեր վրայ տիրող.
Քեզ կ'աղաչենք։

2 Իջի՛ր, Յիսուս Փրկիչ,
Եղի՛ր մեզ պահպանիչ,
Մեզ միշտ օգնէ.
Քու օգնութիւնըդ մենք
Մեզի պարիսպ ընենք,
Քու վրադ մեր յոյսն դնենք.
Տէ՛ր, մեզ լըսէ։

3 Իջի՛ր, ով Սուրբ Հոգի,
Եւ հիմա տուր մեզի
Վկայութիւն,
Թէ Տէրն մեզ կը սիրէ.
Մեր սիրտն առ, դուն տիրէ,
Մի հեռանար մեզմէ,
Հոգի սիրուն։

4 Ով դու Երրեակ եւ մի,
Մեծ գովութիւնք քեզի
Անդուլ տրուին.
Քու փառքըդ տուր որ մենք
Երկնից մէջ վայելենք,
Ու քեզ փառաբանենք,
Տէր երկնային։

Թարգ. I. F. PETTIBONE

# 7 ՍՈՒՐԲ Է ԱՍՏՈՒԱԾ







ՅԱՅՏ. Դ. 8

1 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր,
Եհովայ, զօրաց Աստուած.
Տիեզերք, ամէն բաներ,
Քու զօրեղ խօսքովդ ծընած,
Բոլորտիքըդ երբ կեցան,
Աչքըդ խիստ ուրախացաւ.
Ցայնժամ լըսուեցան երգեր,
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր։

2 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր,
Մեծ Եհովայ, այժմ եւ միշտ.
Թէպէտ հող, մոխիր ենք, Տէր,
Կը սիրենք պաշտել քեզ միշտ։
Աշխարհէս անարգըւած,
Բայց անկէ մեզ ես փրկած.
Միաբան կ'երգենք քեզ, Տէր,
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր։

3 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր,
Յաղթական զօրքերն կ'երգեն.
Եւ փրկեալ անթիւ ազգեր
Քեզ պիտի երկրպագեն,
Եւ հրեշտակք, սուրբերն ամէն
Ցնծութեան ձայն վերցընեն.
Միաբան ըսուին երգեր,
Սուրբ է, սուրբ է, սուրբ է Տէր։

# 8 Կ'ՕՐՀՆԵՆՔ ՔԵԶ, ԱՍՏՈՒԱԾ



ՅԱՅՏ. Ե. 12

1 Կ'օրհնենք քեզ, Աստուած, զի Փրկիչը եկաւ,
Խաչին վրայ մեռաւ եւ վերն փառքով համբարձաւ։
Ալէլուիա, մեր Փրկիչը,
Ալէլուիա, ամէն.
Ալէլուիա, բուկդ է փառքը,
Արբէ մեզ նորէն։

2 Կ'օրհնենք քեզ, Աստուած, զի Հոգիդ ալ իջաւ,
Մեզ Փրկիչը յայտնեց եւ խաւարը անցաւ։ Ալէլուիա, եւ այլն։

3 Միշտ փառք եւ գովեստ սանք զոհուած Գառնուկին,
Որ մեր մեղքը ջնջեց ու ներեց դարձողին։ Ալէլուիա, եւ այլն։

4 Միշտ փառք եւ գովեստ շընորհաց Աստուծոյն,
Որ սիրեց մեզ, փնտռեց ու տըւաւ իր Որդւոյն։ Ալէլուիա, եւ այլն։

5 Ո՜հ, մեզ արթընցուր եւ Հոգւովդ նորոգէ,
Ամէն սիրտ երկնաւոր եռանդովըդ վառէ։ Ալէլուիա, եւ այլն։

6 Ո՜հ, մեզ արթընցուր, մեռեալներս ողջնցուր,
Յիսուսի ձայնն լըսենք, որ կ'ըսէ, «Ինձ եկուր։» Ալէլուիա, եւ այլն։

Թարգ. Miss C. E. BUSH

## 9 ՊԱՇՏԵՑԷՔ ԶՏԷՐ




ՅԱՅՏ. Է. 12

2 Փա՛ռք Բանիդ Աստուծոյ,
Օրհնեալ մեր Փրկիչ եւ Տէր.
Մեզ ա՛յնքան եղաւ քու սէր,
Մինչ իսկ մեռնիլ յանձն առեր։ Կրկնէրգ.

3 Փա՛ռք Հոգւոյդ Սրբոյ,
Սրբարար ազդմանդ անհուն,
Խղճի ազդարար անքուն,
Կցորդ փառաց Հօր, Որդւոյն։ Կրկնէրգ.



Թարգ. Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

# 10 ՍՈՒՐԲ Է ԵՀՈՎԱՆ




ՅԱՅՏ. ԺԵ. 3, 4

1 Սուրբ է, սուրբ է, սուրբ է Եհովան,
Ով դուք ազգեր, ցնծմամբ պաշտեցէք զայն.
Թող անոր խօսքով լեռներ դողան,
Թող կայտառին անդուլ բլուրներ առ այն.
Վեհ հանճարովն իր եւ սիրովն անհուն
Մեծ է Եհովան, Տէր ամենուն։
Սուրբ է, սուրբ է, սուրբ է Եհովան,
Թող կայտառին անդուլ բլուրներ առ այն։

2 Միշտ օրհնէ զայն, ով դէտ Սիօնի,
Սուրբ բերկրութեամբ պատմէ դու հին լուրը.
Իր ոյժով մեղք, մահ կը ջնջուի,
Եւ կ'երգէ երկիրն անհուն փառքը.
Շուրջ իր գահուն, սուրբեր, գովեցէք զայն,
Փառք ըզգեցած, վեհ, անզուգական։
Սուրբ է, սուրբ է, սուրբ է, Ե. այլն։

3 Միշտ օրհնեալ ես, Արքայ մշտնջեան,
Քու որդիներդ խնդիւ կը պաշտեն քեզ.
Սուրբ նուագին երկնից երբ միանան,
Հոն կրկնեն քեզ ծունըր սիրով հեզ.
Հոն, սուրբ լուսոյ մէջ, երբոր զարթնունք մենք
Հոն, տեսնենք պիտ' քեզ եւ միշտ երգենք,
Սուրբ է, սուրբ է, սուրբ է, Ե. այլն։

Թարգ. Ա. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

# 11 ՏԷՐՈՋ ԱՀԵՂ ԳԱՀՈՒՆ ԱՌՋԵՒ







ՍԱՂ. Ղ.Ը.

1 Տէրոջ ահեղ գահուն առջեւ
Խոնարհեցէք սուրբ բերկրանքով.
Գիտցէք թէ Տէրն է սոսկ Աստուած,
Ինք կեանք եւ մահ տայ իր ձեռքով։

2 Աստուածային իր աջ հզօր
Մեզ ձեւացուց եւ մարդ ըրաւ,
Երբ զերդ ոչխար էինք մոլոր,
Կրկին մեզ իր փարախ բերաւ։

3 Իր հօտն ենք. իրն է մեր հոգին,
Եւ մահացու այս կերպարան.
Ի՛նչ փառք անվերջ տանք սրտագին,
Հզօ՛ր Աստուած, քու սուրբ անուան։

4 Մտնենք դռներդ օրհներգութեամբ,
Մինչեւ երկինք ելլէ մեր ձայն.
Եւ այս երկրի բիւր բարբառներ
Մէջ տաճարիդ արձագանգ տան։

5 Մեծ է սահմանդ, անհունութի՛ւն,
Եւ սէրդ անհուն, անմահ է, Տէր.
Ճշմարտութիւնդ՝ ժա՛յռ հաստատուն,
Կեցցէ երբոր անցնին դարեր։

Թարգ. Ս. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

## 12 ՍՈՒՐԲ ԵՍ, ՍՈՒՐԲ ԵՍ, ՍՈՒՐԲ ԵՍ




ԽՍ. Ձ. 3

2 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, քեզ կ'օրհնեն սուրբերը՝
Ոսկեղէն թագերը դըրած գահիդ քով պերճ.
Անդադար կ'երգեն քեզ հրեշտակաց խումբերը
Քեզ պաշտելով, Աստուածդ անսկիզբ, անվերջ։

3 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր, մեծ փառքովըդ,
Դու մաքուր հոգւոյն կու տաս բարիքներըդ բիւր.
Փրկութեան նըշոյլ մը չի կենար քու քովըդ.
Ո՛վ ջինջ սիրոյ ակ, սուրբ կեանքի աղբիւր։

4 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, ո՛վ հըզօր Աստուած մեր,
Անհամար գործերդ կը գովեն քու վեհ անուն.
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, ո՛վ ամենազօրմ Տէր,
Ո՛վ դու Երրեակ անձ, մի Աստուած անհուն։

## 13 ԱՊԱՀՈՎ ՏԷՐՆ ՄԵԶ ՊԱՀԵՑ




ԽՍ. ՏՐ. 13, 14

1 Ապահով Տէրն մեզ պահեց
Այս շաբաթ ալ մահուանէ,
Եւ այսօր մեզ հոս ժողվեց,
Որ շընորհք խնդրենք իրմէ։
Ի՜նչ հաճոյ է Կիրակին,
է նըման երկնաւորին։

2 Երբ շընորհքըդ, Տէր, խնդրենք
Սիրելի Փրկչին ձեռքով,
Լուսափայլ երեսդ տեսնենք,
Մեր մեղքերն քաւուին քեզմով։
Թող աշխարհ անյայտ ըլլայ,
Եւ քու փառքըդ երեւնայ։

3 Երբ որ քեզ փառաբանենք,
Տուր որ քեզ ներկայ ճանչնանք.
Եւ քու փառքըդ մենք տեսնենք՝
Երբ մէկտեղ տաճարդ կու գանք։
Հաճիս առնել տուր, Տէր, մեզի
Ցաւխտենական ճաշի։

4 Քարոզուած ճշմարտութիւնն
Մեղաւորն թող նորոգէ,
Սիրողներն զարդարութիւն
Եւ սուրբերն մխիթարէ։
Թող ամէն մէկ Կիրակի
Պատրաստէ մեզ երկինքի։

## 14 ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՕՏ



ՍԱՂ. Դ.Բ.

1 Ո՜հ, պայծառ ու գեղեցիկ օր տէրունի,
Կ'ողջունենք քու լոյսդ ըղձալեփ,
Որ, այս գիշերուան խաւարը ցըրուելով,
Փայլեցաւ ժըպիտներով։
Ո՜հ, օր խաղաղ, սուրբ, օր երկնային,
Օր սեպհական, աստուածային,
Առաւօտ զըւարթարար ու տէրունի,
Ողջո՜յն քեզ, լոյսդ բերկրալի։

2 Վեց օրերն աշխատութեան անցան գացին,
Մարմնաւոր գործերն վերջացուցին.
Արդ ուրախանանք, հասաւ օրն հանգըստեան,
Օրն զըւարթ, տէրունական։
Ո՜հ, օր խաղաղ, սուրբ, և այլն։

3 Ուստի վայելենք այս պատուական ժամերն,
Ինչպէս պատուիրեց Աստուած մեր Տէրն,
Որ առաջնորդուինք երկնից սուրբ հանգըստեան
Վայելենք փառք յաւիտեան։
Ո՜հ, օր խաղաղ, սուրբ, և այլն։

## 15 ՕՐՆ ԶՈՐ ՏԷՐՆ ՕՐՀՆԵՑ




ՍԱՂ. ՃԺԸ. 24

1 Այս է այն օրն զոր Տէրն օրհնեց,
Երկինքը թող ցնծայ.
Այս օրն իրեն սեփհականեց,
Երկիրն ուրախանայ։

2 Այս օր մեր Տէրն սատանային
Յաղթեց, երբոր յարեաւ.
Ննջեցելոց երախայրին
Գերեզմանէն ելաւ։

3 Այս օր սուրբերն կը ժողվուին,
Որ զինք սիրով յիշեն.
Իրենց Փրկչովը կը զմայլին,
Իր փառքը կը յայտնեն։

4 Ահա մեզ օրհնելու կու գայ
Մեծ Դաւիթի Որդին.
Յիսուս, ողջո՜յն քեզ, ովսաննա
Օծեալ Թագաւորին։

Թարգ. ELIAS RIGGS

# 16 ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՕՏ





ՍԱՂ. Ե. 3

1 Այս առաւօտն օրհնեալ
Ի՜նչ քաղցր է իմ հոգւոյս,
Անոր ճառագայթներն
Կու տան հրճուանք եւ յոյս։
Գործ աշխարհի, զբաւարճութիւն
Չաւրեն թող իմ հանգիստ սիրուն։

2 Արքայն կենաց իջած՝
Բաշխէ շնորհք երկնային.
Զայն պաշտելով՝ ազգերն
Հաւատան ու փրկուին.
Թող ընդունին մեղաւորներ
Քու խօսքդ սուրբ, շնորհքդ, Տէր։

3 Սուրբ Աղաւնիդ բարձրեալ,
Դու մեզ այսօր օրհնէ.
Սրբէ, ո՛հ, մեր սրտերն,
Անոնց մէջ բնակէ.
Որ մեր հոգին կեանք գտնելով,
Տէրոջը փառք տայ ցնծալով։

Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՊԻՐԷՋՃԵԱՆ

## 17 ՏԷՐՈՒՆԻ ՕՐՆ ՀԱՃԵԼԻ




ՍԱՂ. ՂԲ.

1 Գործ հաճելի հոգւոյս է, Տէր,
Կարդալ անուանդ օրհնութիւններ.
Առաւօտն քու սէրդ գովաբանել,
Իր'կուն խօսքերըդ մըտածել։

2 Վայել է այս օրն հանգստեան
Որ խորհուրդներս յերկինս ըլլան.
Քնար ներդաշնակ թող սիրտս ըլլայ՝
Տեառն օրհնութիւն երգել հիմա։

3 Սիրտըս ցնծաց Տէրոջ համար,
Իր գործքն ու խօսք փառաւորեալ.
Խիստ մեծ է գործըն փրկութեան,
Տնօրէնութիւն իմաստութեան։

4 Թէ կատարեալ է փրկութիւնս,
Է պատուական երկնից բաժինս,
Թշնամիէս, որ է մեղք իմ,
Ո՜հ, յաւիտեան ես կ'ազատուիմ։

5 Հոս ունեցած բաղձանքս բոլոր
Լեցուած պիտի տեսնեմ ես հոն.
Հոն տալ գովեստ քու սուրբ անուան
Ըլլայ իմ գործըս յաւիտեան։

Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՋՃԵԱՆ

## 18 ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԻՐԻԿՈՒՆԸ




ԵՍ. ԾԶ. 2, 6, 7

1 Սուրբ օրն իր վախճանին
Հիմա ալ մօտեցաւ.
Իմ վրաս այս Կիրակին
Ի՞նչպէս հաշիւ տըւաւ։
Արդեօք ինծ փոխ տըրուած
Ժամերը յարգեցի՞,
Թէ օրըդ, ով Աստուած,
Պարապ տեղ վատնեցի։

2 Դատապարտեալ հոգին
Ի՛նչ մեծ ցաւով կ'ողբայ
Վատնած այն Կիրակին,
Որ պիտի չը դառնայ։
Ի՛նչ յուսահատութիւն՝
Երբ ինքնիրեն ըսէ,
«Պատրաստ կար փրկութիւն,
Բայց մերժեցի ինծմէ։»

3 Կիրակիին ժամերն
Չը յանդըգնինք պղծել,
Կամ աղօթքի օրերն
Ունայն կերպով վատնել։
Սուրբ օրը թող ըլլայ
Մեզի երկնից նըման.
Կանխաւ ճաշակը տայ
Վերին սուրբ հանգստեան։

Թարգ. ELIAS RIGGS

## 19 ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ







ՄԱՏԹ. Զ. 9-13

2 Քու օրհնեալ կամքդ ալ նոյնպէս
Վեր երկինք կը կատարուի,
Այդպէս, ով Տէր Թագաւոր,
Հոս ալ միշտ ի գործ դրուի։

3 Ով Հայր, տուր այսօր մեզի
Մեր ամէն օրուան հացն ալ.
Որ առողջութեամբ քեզի
Ծառայենք, ով Տէր օրհնեալ։

4 Սիրելի Որդւոյդ համար
Մի յիշեր մեր յանցանքներ.
Մենք ալ միշտ կ'ուզենք մոռնալ
Մեր եղբօր ամէն պարտքեր։

5 Փորձութեան մեզ մի տանիր,
Ազատէ մեզ միշտ չարէն.
Զի քուկդ է փառք եւ պատիւ,
Ով Տէր, յաւիտեանս։ Ամէն։

Թարգ. ELIAS RIGGS

## 20 ՏԷՐՈՒՆԻ ԱՂՕԹՔԸ



Ով Հայր մեր որ յերկինս ես, քու ա | նունըդ | սուրբ ըլ | լայ. || քու թագաւորութիւնդ գայ, քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ | նոյնպէս | երկրի | վրայ. ||

Մեր հանապազորդ | հացը . . տուր | մեզ այս | օր. || եւ ներէ մեզ մեր պարտքերը. ինչպէս եւ մենք կը ներենք մեր | պարտա | պաննե | րուն. ||

Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ ազա | տէ ըզ | մեզ չա | րէն. || քանզի քուկդ է թագաւորութիւնը եւ զօրութիւնը եւ փառքը | յաւի | տեանս։ Ա | մէն։ ||

## 21 ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ




1 Ով Հայր մեր երկնաւոր,
Անունըդ սուրբ ըլլայ.
Դուն ես մեծ Թագաւոր,
Արքայութիւնըդ գայ։
Քու կամքըդ ալ բարի
Մարդիկ թող կատարեն,
Ինչպէս կը կատարուի
Երկնից հրեշտակներէն։

2 Ձեւքէդ հաց կը խնդրենք.
Շնորհէ մեզ թողութիւն.
Մենք ալ պիտի ների՛նք
Մեր պարտականներուն։
Մեզ մի տար փորձութիւն,
Այլ ազատէ չարէն.
Քուկդ է արքայութիւնն
Եւ ոյժն ու փառքն։ Ամէն։

Թարգ. ELIAS RIGGS

## 22 ԺԱՄՆ ԱՂՕԹՔԻ




ՍԱՂ. ՃԸ.

1 Ժամն աղօթքի, ժամն աղօթքի,
Որ աշխարհէս զիս կը զատէ,
Որ Հօրըս աթոռին դիմեմ,
Ու իմ կարօտութիւնս յայտնեմ։
Երբ ցաւ ու վիշտ վրաս կը տիրէ,
Հոգիս հանգիստ միշտ կը գտնէ,
Փորձութենէ ալ կ'ազատի
Քու հասնելովդ, ժամ աղօթքի։

2 Ժամ աղօթքի, ժամ աղօթքի,
Աղերսըս թեւերովդ տարուի
Շնորհաց աթոռը նստողին,
Զղջացողին ձայնն լսողին։
Իրեն դիմել կը պատուիրէ,
Շընորհք խնդրել կը հրաւիրէ.
Հոգերս անոր ձըգեմ պիտի,
Քեզ ըսպասեմ, ժամ աղօթքի։

3 Ժամ աղօթքի, ժամ աղօթքի,
Մըխիթարիչ ըլլաս ինծի,
Մինչեւ Փասգա լեռնէն նայիմ,
Տեսնեմ իմ տունըս երկնային։
Տըկար մարմինս պիտի ձըգեմ,
Տէրոջըս քով պիտի ելլեմ,
Ու երթալով երգեմ պիտի,
«Ժամն աղօթքի, ժամն աղօթքի։»

# 23 ՇՆՈՐՀԱՑ ՍՈՒՐԲ ԳԱՀ




ՍԱՂ. ՃԺԶ. 7

1 Ազատ ամէն խիստ հովերէ,
Ազատ ամէն փոթորիկէ,
Կայ տեղ մ'անդորր ու ապահով,
Եւ այն Շնորհաց գահուն է քով։

2 Կայ տեղ մը ուր Յիսուս հեղու
Սուրբ իւղն օծման վրայ մեր գլխու,
Տեղ ամէնէն անուշ, սիրուն,
Եւ այն է մօտ Շնորհաց գահուն։

3 Հոգեպարա՛ր, վե՛հ տեսարան,
Ուր սերտ սրտեր կը միանան,
—Թէեւ զատուած — ջերմ հաւատքով,
Շնորհաց գահուն շուրջն անվրդով։

4 Օ՛ն, արծիւի առած թեւեր,
Ըսեմ երկրէս թռչինք ի վե՛ր.
Մեզ ողջունել երկինք կու գայ,
Եւ փառք պսակէ Շնորհաց սուրբ գահ։

Թարգ. Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

## 24 ՔՈՒ ՇՆՈՐՀՔԴ, ՏԷՐ







ՅԱԿ. Ե. 15

2 Քու շնորհքըդ, Տէր, թող զիս սրբէ.
Քու բընութիւնդ ինծի ալ տուր.
Քու սուրբ խօսքով դուն զիս մաքրէ,
Ինչպէս որ է Փրկիչս մաքուր։

3 Քու շնորհքըդ, Տէր, թող ինծ օգնէ,
Քանզի ես ինքս եմ խիստ տըկար.
Թշնամիէն միշտ պաշտպանէ,
Երբեք ինծմէ մի հեռանար։

4 Քու շնորհքըդ, Տէր, թող զիս պահէ.
Ինծ պատուիրած ես որ հսկեմ.
Դուն ալ զիս քու ձեռքովդ բռնէ,
Որ փորձութեան մէջ չը մտնեմ։

5 Քու շնորհքըդ զիս զօրացնէ,
Զիս կերակրէ երկնից հացով.
Քու խորհրդովդ առաջնորդէ,
Եւ ընդունէ վերջն ալ փառքով։

Թարգ. ELIAS RIGGS

## 25 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆ ՏԵՂ Է






## 26 ԱՂՕԹՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԷՏՔԸ




ՅԱԿ. Ե. 16

2 Մարդիկ անով կեանք կը գտնան,
Ազատութիւն մեղքի ուժէն.
Եւ յաղթելով ղըրանց մահուան
Ուրախութեամբ երկինք կ'ելլեն։

3 Անով երկիր, երկինք վերին
Նորէն սիրով կը միանան.
Զի Հայր Աստուած, Աստուածորդին
Անով կ'իջնան ի մէջ մարդկան։

4 Եւ Սուրբ Հոգին մեզ օգնելով
Մեր աղօթքին Տէրն կը լսէ.
Յիսուս իր ուխտը յիշելով
Ամէն բան մեզ կը պարգեւէ։

5 Յիսուս, ձայնիս դուն ունկըն դիր,
Եւ ընդունէ իմ սիրտս բոլոր.
Դուն որ անդուլ աղօթք ըրիր,
Աղօթք ընել ինձ սորվեցուր։

## 25 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆ ՏԵՂ Է

ՄԱՏԹ. ԺԸ. 20

1 Շնորհաց աթոռն փնտռող
Ձայն ամէն տեղ կը գտնայ.
Մենք երբոր ենք աղօթող,
Տէրն է միշտ մեր մէջ ներկայ։

2 Թէ հարուստ ենք թէ աղքատ,
Թէ առողջ կամ թէ տկար,
Երբ մեր ձայնն է անընդհատ,
Տէրն է միշտ մեր մէջ ներկայ։

3 Երբ ճամբերս կը հատնին,
Ու ինծի հանգիստ չըկայ,
Թող ուժերս չը լքանին,
Զի իմ Տէրս է միշտ ներկայ։

4 Ով հոգիս, Փրկչիդ եկուր,
Ինչ տագնապ որ վրադ կու գայ.
Ան պարապ քեզ չը թողուր,
Զի մեր Տէրն է միշտ ներկայ։

# 27 ՈՎ ՍՈՒՐԲ ՀԱՅՐ




ՍԱՂ. ԺԽԵ. 18, 19

1 Ով Սուրբ Հայր, ինձ ցուցուցեր ես,
Յոյսըս է միայն քեզմէ.
Օրէ օր զիս անցուցեր ես
Բազմաթիւ վըտանգներէ։
Դուն, Տէր, մոլորած ատենըս
Առաջնորդեցիր ինծի.
Միշտ եղիր, Տէր, ապաւէնըս,
Թող ապրիմ միայն քեզի։

2 Խորամանկ թըշնամիներըս
Միշտ կը յարձակին վըրաս.
Ես գիտեմ, բոլոր օրերըս
Կռիւ պիտի չըլլայ պակաս։
Երկնաւոր շնորհաց աթոռը,
Հոն միայն պիտի դիմեմ,
Որ իմ նեղութեանըս օրը
Զօրութիւն քեզմէ զտնեմ։

3 Հայր իմ, քու պաշտպանութեանըդ
Տուր որ միշտ ապաւինիմ,
Եւ քու առաջնորդութեանըդ
Ձաւկիդ պէս թող հետեւիմ։
Քու աչքովըդ, Տէր, ուղղէ զիս,
Փորձիչէն քեզի դառնամ.
Թեւերուդ տակ, Տէր, պահէ զիս,
Միշտ քու քովըդ թող կենամ։

Թարգ. ELIAS RIGGS

# 28 ՏԷՐՈՋԸ ՏԱՐ




ԵԼԻՑ ԻՆ․ 22

1 Ի՛նչպէս բարեկամ է Տէրը,
Միշտ մեզի կը համբերէ,
Կը ներէ մեր յանցանքները,
Մեր վիշտերն ալ կը կրէ։
Քրիստոնեայ, արտօնութիւնըդ
Այս է, միշտ բերկրապատար,
Քու ամէն փորձառութիւնըդ
Աղօթքով Տէրոջը տար։

2 Շատ անգամ խաղաղութիւնը,
Ո՛հ, ի զուր կը կորսնցնենք,
Աղօթքի արտօնութիւնը
Երբ մոռնանք կամ զանց ընենք։
Մէկը կա՞յ որ Յիսուսի չափ
Քեզի ցաւակից ըլլար.
Վստահէ անոր, հոգերըդ
Աղօթքով Տէրոջը տար։

3 Դուն յոգնա՞ծ, բեռնաւորուա՞ծ ես.
Սիրելիըդ հեռացա՞ն.
Քու Փրկիչըդ քեզ կանչած է,
Ինք կ՚ըլլայ քեզ ապաստան։
Յիսուսի բաց բազուկները
Ապաւէն են փրկարար.
Տուտ դիմէ հոն, եւ ամէն բան
Աղօթքով Տէրոջը տար։

Թարգ. ELIAS RIGGS

## 29 ԶԻՍ ԱԼ, ՏԷՐ







ՍԱՂ. ԶԵ. 6

1 Տէր, այցելութեամբդ երկիրը
Շուտ կ'ընես խիստ պըտղաբեր.
Հիմա օրհնութեանդ անձրեւը
Թող կաթի իմ վրաս ալ, Տէր.
Վրաս ալ, Տէր,
Թող կաթի իմ վրաս ալ, Տէր։

2 Մի անցնիր ինձմէ, ով Հայրըս,
Կորսըւածըս դուն փնտռէ.
Ջրիապէս նորէ մեղքերըս,
Գըթութիւնդ ինձ պարգեւէ.
Ինձ ալ, Տէր,
Գըթութիւնդ ինձ պարգեւէ։

3 Մի անձնիր ինձմէ, Փրկիչըս,
Քեզ սիրեմ, քեզի յարիմ.
Քաղցրը ձայնդ լըսէ ականջըս,
Զիս կանչէ, քեզ հետեւիմ.
Զիս ալ, Տէր,
Զիս կանչէ, քեզ հետեւիմ։

4 Ուրիշներ քու ձայնդ լըսած են,
Եւ գըտած են փրկութիւն,
Քու շընորհքըդ ընդունած են.
Տուր ինծի ալ օրհնութիւն.
Ինձ ալ, Տէր,
Տուր ինծի ալ օրհնութիւն։

5 Թէեւ քեզ շատ հեղ մոռցած եմ,
Սուրբ Հոգի, մ'անցնիր ինձմէ.
Քեզ մեղքովս վշտացուցած եմ,
Ո՛հ, ներէ եւ զիս փրկէ.
Զիս ալ, Տէր,
Ո՛հ, ներէ եւ զիս փրկէ։

Թարգ. ELIAS RIGGS

# 30 ԱՍՏՈՒԱԾ ՊԱՇՏՊԱՆ







ՅՈՎՀ. ԺԴ. 18

1 Մի թողուր զիս, ով Աստուածըս,
  Թող քեզմէ չըմոլորիմ.
Ուժովցուր, Տէր, իմ քայլուածքըս,
  Եթէ ոչ ես կ'ընկղմիմ.
Պահպանէ զիս, պաշտպանէ զիս,
  Որ երբեք չըկորսըւիմ։

2 Աշխարհիս անթիւ հոգերը
  Կ'արգիլեն զիս, Տէր, քեզմէ.
Սատանան իր հրապոյրները
  Իմ առջեւըս կը դնէ.
Վարմերովը, նենգերովը
  Թող զիս չըմոլորցընէ։

3 Ով Յիսուս, ցըրուէ վախերըս,
  Քու խոստմունքդ է հաստատուն.
Դուն կրնաս ներել մեղքերըս,
  Ինձ լըսել տուր ձայնդ սիրուն.
Դուն ես լոյսըս, դուն ես յոյսըս,
  Մի միայն Փրկիչըս դուն։

4 Ո՛հ, թէ ես սիրոյդ ուժովը,
  Տէր Յիսուս, քեզի ձըգուիմ.
Ինձ օգնէ Հոգւոյդ շնորհքովը,
  Աշխարհէս հըրաժարիմ.
Տէր, կանչէ զիս, ու քաշէ զիս,
  Ես ալ պիտի հետեւիմ։

5 Իմ ներքին սենեակիս մէջը
  Դուռը ետեւէս գոցեմ.
Ու սրտիս անկեղծ աղերսը
  Աստուծոյս մատուցանեմ.
Արարիչըս եւ Փրկիչըս
  Առանձին տեղ թող գտնեմ։

Թարգ. ELIAS RIGGS

## 31 ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ




ԽՆ. ԺԳ. 19

1 Եհովա, առաջնորդէ զիս,
Զի պանդուխտ եմ ու կարօտ.
Շատ տըկար եմ, զօրացուր զիս
Ամենակարող ձեռքովդ.
Դուն, երկնի Հաց,
Կերակրէ զիս որ ապրիմ։

2 Բաց, ո՛վ Տէր, մաքրող աղբիւրը,
Այն ջուրով բըժըշկըւիմ.
Թող ամպին, կրակին սիւնովը
Այս տըխուր ծորէն անցնիմ.
Դուն, Փրկիչ մեծ,
Ինծ եղիր ոյժ եւ վահան։

3 Երբ որ Յորդանան հասնիմ ես,
Յուրտ մահուան երկիւղն վերցուր.
Դուն որ մահը մեռցուցած ես,
Զիս երկինքը, Տէր, հասցուր.
Փառք, պատիւ քեզ
Միշտ պիտի մատուցանեմ։

# 32 ԲԱՐԻ ՀՈՎԻՒԸ







ՍԱՂ. ԽԳ.

1 Քաղցրութեամբ առաջնորդէ մեզ,
Մինչ կ'ելլենք ցաւոց ձորէն.
Թող շընորհքդ զօրացընէ մեզ,
Խափանէ մեր վախն ամէն.
Զօրացուր մեզ
Քու անհուն շնորհքովըդ, Տէր։

2 Թէպէտ եւ ցաւ ու շատ դառն վիշտ
Մեզ ամէն կողմէն պատէ,
Բայց Յիսուս մեզ կը փրկէ միշտ,
Մեղքն ու դժոխքը կը յաղթէ.
Խօսքն հաստատ է,
Տէրն պիտի զայն կատարէ։

3 Երանի՜ թէ պաշտէի ես
Քեզ, Փրկիչ իմ բարերար.
Ըլլայի երկնից զօրաց պէս,
Որ գովեն քեզ անդադար.
Երջանիկ են,
Ե՞րբ պիտի ես հոն հասնիմ։

## 33 ՏԷՐՈՋԸ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՂԻՆ ԱՂՕԹՔԸ







ԵԼԻՑ Դ. 12, 15

1 Խօսէ ինծ, Տէր, խօսիմ եւ ես,
Արծագանգեմ քու պատգամներ.
Դու փնտռեցիր, փնտռեմ նոյնպէս,
Քու կորուսեալ հէք զաւակներ։

2 Ուսո ինծ, Տէր, ուսուցանել
Քու խոստումներ շնորհատու.
Թեւ տուր բանիցըս թափանցել
Խեղճ, յուսահատ շատ սրտերու։

3 Ուղղէ զիս, Տէր, ես եւս ուղղեմ
Մոլորեալներն մեծաւ փութով.
Զիս կերակրէ, եւ կերակրեմ
Անօթիներն քոյդ մանանայով։

4 Լիութենէդ, Տէր, զիս լեցու,
Մինչեւ սրտէս բղխին գետեր.
Պարզ կենդանի բանիւ ազդու
Յայտնեմ քու փառք, պատմեմ քու սէր։

5 Երբ, ինչպէս, ուր յարմար դատես,
Զիս գործածէ ըստ քու կամաց.
Մինչեւ տեսնեմ քու սուրբ երես,
Եւ մասնակցիմ քուկին փառաց։

Թարգ. ՏԻԿԻՆ ՀՌԻՓՍԻՄԷ ՇՄԱՒՈՆԵԱՆ

# 34 ԱՂՕԹՔ




ԵՌՐ. Բ. 18

1 Չիկայ, Տէր, ցաւ մ'այնքան չընչին
Որ չը բերուի քեզ աղօթքով.
Չիկայ տագնապ մը դոյզն ինքնին
Որ չը շարժէ, Տէր, քու զօրով։

2 Դուն, որ վշտաց եղար տեղեակ,
Մեր վիշտերուն չես անտարբեր.
Սէրդ, որ հեծեց բեռներու տակ,
Մեր ծանր բեռներն, ո՛հ, չանտեսեր։

3 Չիկայ լըսին հոգւոյ հառաչ
Որ, Տէր, չըլլայ քեզ լըսելի.
Բարձր է ուսիս ամէն կերպ խաչ,
Երբ քու խաչդ է ինծ հովանի։

4 Դուրսէն տագնապ, ներսէն մեղքեր.
Ա՛հ, սիրտըս հէզ ինչպէս տոկար,
Թէ Տէրն ցաւոց վրայ չարտասուէր,
Եւ չը մեռնէր մեղաց համար։

Թարգ. Ց. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

## 35 ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ







ՍԱՂ. Ե. 3

2 Տէր, այս լուսոյն հետ երեսիդ
Լոյսն ալ շնորհէ քու ծառայիդ.
Անով հոգւոյս խաւարն մէկդի
Առ, որ ըլլամ լուսոյ որդի։

3 Այսօր ալ ինծ առաջնորդէ,
Ազատ պահէ չարիքներէ.
Օգնէ ինծ որ բարիք գործեմ,
Քեզ եւ մարդիկ սրտանց սիրեմ։

## 36 ԱՌՏՈՒԱՆ ԵՒ ԻՐԻԿՈՒԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԳ







ՈՂԲ Գ. 22, 23

2 Ամէն գիշեր զիս կը պահես
Զըտեմըւած վըտանգներէ.
Եւ առտըւանց դուն կը դրկես
Արեւդ որ զիս արթընցունէ։

3 Իմ անձըս քեզ կը նուիրեմ
Գիշեր ցորեկ, դուն իմ Տէրս ես.
Անթիւ շնորհքներ քեզմէ կ'առնեմ,
Փառք յաւիտեանս պիտի տամ քեզ։

# 37 ԵՐԳ ԱՌԱԻՕՏԵԱՆ




ՄԱՏԹ. ԺԴ. 22-33

1 Ի՛նչ սըրտաշարժ այն քաղցր երգեր,
Որոնք մեզ կը հասնին,
Երբ մաղթելու՝ Տէրն սիրողներն 5
Առտուանց կը հաւաքուին։

2 Դէպ ի երկինք անուշ հովեր
Մաղթանքը կը տանին,
Հայրն կը լսէ անոնց ձայներ,
Կ՚օրհնէ ալ լիովին։

3 Նոյնպէս Յիսուս կանուխ ելաւ՝
Ըղձիւ աղօթելու,
Ինքն անապատն առանձնացաւ
Հօրն հետ հաղորդելու։

4 Նոյնպէս հիմա ինք կ՚աղօթէ
Լուսոյ մէջ երկնային,
Մեզի համար կը միջնորդէ,
Որ դեռ ծովն ենք մըթին։

Ով Տէր, մեր նաւն մըտիր այսօր,
Ալիքն հանդարտեցուր,
Եղիր մեզ նաւավար հըզօր,
Եւ զերծ ցամաքն հասցուր։

Թարգ. C. H. WHEELER

# 38 ԵՍ ԿԸ ՍԻՐԵՄ ԱՌԱՆՁՆԱՆԱԼ







Ղուկ. Ժ. 38-42

1 Ես կը սիրեմ առանձնանալ՝
Հոգերըս ծըգելով,
Որ իրիկուան ժամերս անցնեմ
Յնծմամբ աղօթելով։

2 Ես կը սիրեմ լուռ, առանձին
Զղջման արցունք թափել,
Իր խոստումունքներն յիշել, երբ Տէրն
Միայն կրնայ լըսել։

3 Ես կը սիրեմ իմ միտքս բերել
Զայն որ զիս կը հոգայ,
Բոլոր հոգերս, վիշտերս ծըգել
Գըթած Տէրոջըս վրայ։

4 Ես կը սիրեմ երկինք նայիլ
Բաց հաւատոյ աչքով.
Նեղուած հոգիս կը զօրանայ
Այն ցնծալի տեսքով։

5 Եւ վշտալից կեանքիս վերջին
Օրն երբ իմ վրաս հասնի,
Նըման ըլլայ այս մեղմ ժամուն,
Ու զիս երկինք տանի։

Թարգ. I. F. PETTIBONE

# 39 ՔՈՎՍ ԿԵՑԻՐ




ՂՈՒԿ. ԻԴ. 29

1 Ով Փրկիչս, օրն իջած է,
Կաղաչեմ քեզ, քովս կեցիր.
Թանձր մութն արդէն կոխած է,
Այս գիշեր իմ հիւրս եղիր։
Երբ պակսին օգնականներս,
Դուն միայն ես օգնական.
Բազմաթիւ են վըտանգներս,
Ո՛հ, եղիր ինծի պաշտպան։

2 Աշխարհիս պայծառութիւնը
Շատ չանցած կը մըթննայ.
Փառքն ու մեծվայելչութիւնը
Շուտ աներեւոյթ կ'ըլլայ։
Բայց դուն ես յոյսի արեւը,
Յաւիտեան դուն չես փոխուիր.
Ճառագայթներուդ պարզեւը
Շնորհէ ինձ, իմ քովս կեցիր։

3 Շատ անգամ, Տէր, քեզ մոռցած եմ,
Սակայն դուն զիս մի մոռնար.
Շատ անգամ քեզ թողուցած եմ,
Բայց ինձմէ մի հեռանար։
Ով Յիսուս, հոգւոյս Փրկիչը,
Հետս կենալ դուն խօսք տուիր.
Երբոր զօրաւոր փորձիչը
Յարձակի վրաս, քովս կեցիր։

4 Եւ վերջին թշնամիին վրայ
Տուր որ յաղթանակ երգեմ.
Իմ վրաս յարձակած ատենը,
«Ո՞ւր է քու խայթոցդ» ըսեմ։
Որ մահէն, Տէր, ազատուիմ ես,
Դառն մահուան քեզ յանձնեցիր.
Թող մահուան մէջ չընկղմիմ ես,
Մինչեւ վերջը քովս կեցիր։

Թարգ. ELIAS RIGGS

# 40 ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ




ԱՌԱԿ. Գ. 24

2 Տիեզերքն է քու խորան,
Այս կամարն՝ մեր սրբարան.
Տունդ անհուն մեզ կը պատէ,
Հայր, նոյնպէս սիրովդ զրկէ
  Քու զաւակներդ։
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես,
  Ո՜վ Տէր զօրաց.
Յաւիտեան ես պաշտելի,
Տիեզերք քեզմով է լի,
Աղբիւրդ բարեաց։

3 Արդ կը ծանրանայ գիշեր,
Մօտ, ա՜լ մօտ եկուր, ով Տէր.
Քու սրտիդ տրոփումն լեցուց,
Եւ քու սէրդ փայլեցուց
  Համայն երկինք։
Սուրբ ես, սուրբ ես, եւ այլն։

4 Այս կամարն երբ խորտակի,
Այս երկիր երբոր անցնի,
Քու փառացըդ լոյսն, ով Տէր,
Մեզ յայտնէ, եւ թող շուքեր
  Աննետանան։
Սուրբ ես, սուրբ ես, եւ այլն։
  Ամէն։

Թարգ. C. C. TRACY

# 41 ԵԿԷՔ, ՀՈՍ ԵԿԷՔ




ՍԱՂ. ԺԷ. 8

1 Եկէք, հոս եկէք, ա՛լ հանգչելու ատեն է.
Գործքերն թողէք, հոգերն թողէք.
Եկէք, հոս եկէք.
Եկէք ուր կայ խաղաղութիւն,
Ընտանեկան ուրախութիւն,
Եւ եղբայրսիրութիւն.
Եկէք, հոս եկէք։

2 Յոբեկը բոլոր աշխատութեան ատեն է,
Երեկոյեան ժամն՝ հանգստեան.
Եկէք, հոս եկէք.
Հայր, մայր, քոյրեր ու եղբայրներ,
Միացընենք ուրախ ձայներ,
Երգենք յուսոյ երգեր.
Եկէք, հոս եկէք։

3 Արեւը մրտաւ, լուսինը եւ աստղերը
Արծաթեղէն լուսով կ'ելլեն.
Եկէք, հոս եկէք.
Ձանոնք եւ մեզ Ստեղծողին
Մեր երգն ուղղենք ի միասին
Աղօթքով կաթոգին.
Եկէք, հոս եկէք։

## 42 ԵՐԳ ԵՐԵԿՈՅԵԱՆ




ՍԱՂ. Դ.Ա. 5

2 Ցօղնած, քունով թմրած՝
Մեր աչքը կը գոցենք.
Գեթսեմանիին մէջ՝ շատ չանցած
Ամէնքս պիտի ննջենք։

3 Գիշերս մեզ, Տէր, պահէ
Բոլոր վըտանգներէն.
Հրեշտակդ ղրկէ, որ մեզ հսկէ
Մինչ գայ առտու նորէն։

4 Եւ երբ առտուն կանուխ
Անխռով արեւն տեսնենք,
Տուր որ անոր նման անդուլ
Մեր ասպարէզն վազենք։

5 Երբ մեր վախճանը գայ,
Եւ աս կեանքէս զատուինք,
Շնորհէ, Փրկչին սիրոյն համար,
Որ մենք քու գիրկդ հանգչինք։

## 43 ՏՂՈՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔԸ



## 44 ԻՄ ՔՈՎՍ ԿԵՑԻՐ




ՍԱՂ. Դ. 8

2 Շուտով կ'ենայ օրերն կը փախճանին,
Անյայտ կ'ըլլայ ամէն ցնծում երկրին.
Հոս հաստատուն, անշարժ բան չերեւիր,
Ո՛վ դուն, որ անփոփոխ ես, քովս կեցիր։

3 Ներկայութեանդ կարօտ եմ անդադար,
Առանց շնորհիդ փորձչին յաղթող չըլլար.
Քեզի պէս ո՞վ կայ առաջնորդ ընտիր.
Ուր որ ըլլամ, ով Տէր, իմ քովս կեցիր։

4 Երբ զիս կ'օրհնես, երկիւղ չունիմ բընաւ,
Անոյշ կ'ըլլան ինծ արտասուք եւ ցաւ.
Դըժոխք եւ գերեզման աւ ոյժ չունին,
Երբ քովս կենաս անոնք կը յաղթըլին։

5 Մինչեւ վերջին օրերս մօտենան,
Մինչեւ երկինքից դռները երեւնան,
Խաւար ճամբուս մէջ առաջնորդ եղիր.
Կենաց, մահուան մէջ ալ, Տէր, քովս կեցիր։
Ամէն։

Թարգ. ELIAS RIGGS

---

## 43 ՏՂՈՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔԸ

ՈՂՍ. Ի. 18

1 Ո՛հ, նայէ ինծ եւ լսէ զիս,
Բարեգութ Հօրիւ, Յիսուս.
Այս բոլոր գիշերն պահէ զիս
Մինչ փառուան զըւարթ նոր լոյս։

2 Դուն այսօր զիս պաշտպանած ես,
Գոհութիւնըս ընդունէ.
Հազցուցած եւ կերակրած ես,
Տէ՛ր, հիմա ձայնիս լըսէ։

3 Կ'աղաչեմ, բոլոր մեղքերըս
Ջրհալէս ներէ, ջնջէ,
Եւ սիրած բարեկամներըս
Պաշտպանէ ու միշտ օրհնէ։

4 Հոս փորձութենէ պահէ զիս,
Քու սիրովդ թող ապրիմ.
Ետքն երկնից մէջ ընդունէ զիս,
Հոն քեզի հետ բընակիմ։

Թարգ. ELIAS RIGGS

# 45 ՄԻԱՅՆ ԱՅՍ ՕՐ




ՄԱՏԹ. Զ. 31-34

1 Վաղուան համար չեմ աղօթեր,
Հայր երկնաւոր.
Զիս պահպանէ մեղաց բիծէն,
Միայն այս օր։
Օգնէ, գործեմ եւ աղօթեմ
Եռանդով նոր.
Անոյշ լեզուով զայն ըսփոփեմ,
Միայն այս օր։

2 Ոչ թէ իմ կամք՝ այլ քուկդ ընեմ,
Տէր Թագաւոր.
Իմ անձս զոհեմ սիրոյդ համար,
Միայն այս օր։
Խօսք չը խօսիմ անգութ կամ չար,
Կամ թունաւոր.
Դիր քու կնիք լեզուիս վըրայ,
Միայն այս օր։

3 Սրբէ իմ սիրտս, մեղքերս ներէ,
Ով Տէր, իմ Վէմ.
Եթէ մեռնիմ այսօր, կանչէ
Վերինն եղեմ։
Վաղուան համար չեմ աղօթեր,
Հայր երկնաւոր.
Դու զիս բռնէ, չարէն պահէ,
Միայն այս օր։

Թարգ. ՏԻԿԻՆ ՀՈՒՓՍԻՄԷ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 46 ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՐԳԵՒՆ Է




ՍԱՂ. ՃԻԷ.

2 Ջուր է կանուխ ելլել առտուն,
Եւ ուշ հանգչիլ ու քիչ ուտել.
Զի Տէրն կ'ուզէ իր սիրելւոյն
Հանգստութիւն միայն շնորհել։

3 Ահա որդաք ու աղջիկներ
Ժառանգութիւն են Աստուծմէ.
Քեզի յանձնենք մեր զաւակներն,
Եւ օրհնութիւն խնդրենք քեզմէ։

## 47 ԾԵՐՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՍՏԱՀԻԼ




ՍԱՂ. ԻԳ. 4

2 Ինծ առաջնորդ քեզ ունեցայ,
Դու միշտ եղար սերտ բարեկամ.
Կեանքիս մէջ քե՛զ միայն ճանչցայ,
Թող կեանքս քեզմով գտնէ վախճան։

3 Երբ ծերութեան օրեր թշուառ
Հասնին վրաս, զիս մի թողուր.
Դուրս մի ձըգեր յուսահատեալ՝
Վերջին օրերս ողբալ տխուր։

4 Մինչեւ կ'ապրիմ դու ես ինծ վէմ,
Երկրպագեմ քեզ ի մահուն.
Մահէն ետքն ալ քեզ պիտ' օրհնեմ
Անվերջ դարեր հետ սուրբերուն։

Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ԲԻՐԷՋՃԵԱՆ

## 48 ՄԵՆՔ ՉԵՆՔ ՁԳԵՐ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ



ՍԱՂ. ՃԺԹ. 105

1 Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը,
Աստուածաշունչ մատեան.
Քանզի մանկանց է առաջնորդ,
Ծերոց ալ գաւազան։
Ճրագ է ան. լոյս փառաւոր
Կու տայ մեր մութ ճամբուն.
Կը ցուցնէ փառք երկնաւոր,
Բնակարան սիրուն։
Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը,
Աստուածաշունչ մատեան.
Քանզի մանկանց է առաջնորդ,
Ծերոց ալ գաւազան։

2 Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը,
Քանզի միայն անկէ
Երկնից ճամբան կրնանք գտնել,
Փախչիլ ալ դժոխքէ։
Անոր մէջ կը կարդանք թէ ո՛վ
Իջաւ հոս երկինքէն,
Որ իր արիւնը թափելով
Մեզ ազատէ մեղքէն։
Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը, և այլն։

3 Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը,
Այլ քարոզենք պիտի,
Որ արձագանգը ազգերէն,
Ծովէն անդին լսուի,
Եւ փրկութեան ձայն լսեն
Մարդիկ ամէն երկիր.
Մենք ալ, Տէրոջը Սուրբ Խօսքէն
Բնաւ չենք հրաժարիր։
Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը, և այլն։

Թարգ. ELIAS RIGGS

## 49 ՀՐԱՇԱԼԻ ԽՕՍՔ ԿԵՆԱՑ

ՅՈՎՀ. ԺԲ. 21




Թարգ. ՀՐԱՆՏ ԲԻՐԻՉՃԵԱՆ

## 50 ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ




ՍԱՂ. ԺԹ. 7-11

1 Քու Սուրբ Գիրքդ է ինծ հաճելի,
Լոյս կ'ընծայէ խիստ ցնծալի՝
Խեղճին որ խաւարի մէջ է.
Քու խօսքդ մոլար ճամբաս կ'ուղղէ,
Եւ վախըդ սանձ է իմ սրտիս,
Խոստումունքդ հանգիստ կու տան խղճիս։

2 Քու սուրբ օրէնքդ ինծ կը յայտնեն
Ան կանոններն որ ինծ պէտք են.
Անոնք ազնիւ ուսում են ինծ,
Եւ քան ըզմեղր անուշ են ինծ.
Բովքէն զըտուած մաքուր ոսկի
Սըրտիս այնքան չէ ցանկալի։

3 Ըսպառնալիքդ կ'արթընցընեն,
Ու իմ վըտանգս ինծ կը յայտնեն.
Բայց Տեառն օրհնեալ Աւետարան
Զիս կը փրկէ մինչ յաւիտեան.
Մեղքս կը յաղթէ, հոգիս կ'ուղղէ,
Ձըրի բայց մեծ վարձք կը շնորհէ։

4 Իր սըխալները ո՞վ գիտէ.
Ով Տէր, դո՛ւն իմ մեղքերս քաւէ,
Ամէն մեղքէ զիս ետ պահէ,
Երգս օրհնութեան միշտ ընդունէ.
Զըլլայ անշահ եւ անպիտան
Այն կենսատու Գիրքդ յայտնութեան։

## 51 ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՆ ԸԼԼԱԼՈՒ Է




ՍԱՂ. ՃԺԹ. 9

2 Բոլոր սրտով քեզ խնդրեցի,
Թող մի տար մոլորիմ.
Պատուիրանքներդ մըտածեցի,
Խօսքիդ պիտի նայիմ։

3 Քու օրէնքովդ կ'ուրախանամ
Անգին գանձի մը պէս.
Եւ թող մի՛ տար որ խօսքդ մոռնամ,
Որպէս զի զիս փրկես։

## 52 ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՆՁԱՒՈՐՈՒԹԻՒՆ




ՍԱՂ. ՃԺԹ. 27

2 Քու Սուրբ Խօսքիդ պատուիրանքներն
Միշտ լոյս կու տան մարդուն.
Միամիտներն ու տըգէտներն
Կ'ընեն շատ իմաստուն։

3 Բերանս բացի, հառաչեցի,
Խօսքիդ ես ցանկացի.
Ճամբուդ մէջ դուն զիս հաստատէ,
Որ չարն չշիլէ ինծի։

4 Իմ վրաս քու լոյսդ փայլեցուր,
Ծառայդ լուսաւորէ.
Քու սուրբ օրէնքդ ինծ սորվեցուր,
Որ ինծ ճամբադ յայտնէ։

5 Կ'իջնեն լացող իմ աչքերէս
Արցունք՝ գետի նման,
Զի շատ մարդիկ չը պահեցին
Օրէնքըդ սրբազան։

## 53 ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ




Բ ՏԻՄ. Գ. 16

2 Մոլորեալըս կը խրատես,
Եւ Փրկչին սէրն կը յայտնես.
Դուն ինծի ես կառավար,
Դատաւոր ես բարերար։

3 Նորոգուիլ մեզ Սուրբ Հոգւով,
Ընտանալ կեանքն հաւատքով,
Դուն կ'ըսես թէ կայ հընար,
Ու մեզ ես միշտ մըխիթար։

4 Երկնային փառքն կը պատմես,
Եւ կորուստն ալ կը յայտնես.
Ո՛վ դուն Սուրբ Գիրք երկնային,
Պատուական գանձս ես իմին։

## 54 ԿԵՆԱՐԱՐ ԲԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ



## 55 ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԷՆ ՕԳՏՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ




ՍԱՂ. ճԺԹ.

2 Ես քու ծառայդ եմ կամաւոր,
Զիս իմաստուն, ըզգաստ ըրէ.
Վըկայութիւնդ՝ խօսքդ զօրաւոր
Հոգւոյս ազդէ, սըրտիս տիրէ։

3 Ատենն եկաւ որ Տէր Աստուած
Իր զօրութիւնն ի գործ դընէ.
Զի անհաւատն եւ անաստուած
Տէրոջն օրէնք կը խափանէ։

4 Անոր համար ես սիրեցի
Պատուիրանքներդ բոլոր սրտով.
Ազնիւ ոսկին ես սեպեցի
Ոչինչ քան քու պատգամիդ քով։

5 Անոր համար ամէն քու կին
Պատուէրդ ուղիղ կը համարիմ.
Եւ սրտութեան ճամբան մըթին
Միշտ ատելով ետ կը քաշուիմ։

---

## 54 ԿԵՆԱՐԱՐ ԲԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀՌՈՎՄ. Ժե. 4

1 Թող քու Սուրբ Խօսքդ, Տէր իմ Փրկիչ,
Իմ վշտակիր սրտիս ազդէ.
Նա առաջնորդ եւ լուսատու
Ըլլայ ինձ միշտ, ու ինձ օգնէ։

2 Խաբող հաճոյք իմին հոգիս
Երկար ատեն մոլորցուցին.
Սուտ բարիքներ աս աշխարհիս
Իմ սէրս առ քեզ խափանեցին։

3 Բայց ձայնըդ, Տէր, հաւատարիմ,
Խորունկ քունէ զիս արթընցուց.
Առ քեզ դարձուց անսանձ սիրտ իմ,
Եւ իմ աչքէս արցունք վազցուց։

4 Աշխարհասէրք միշտ կը զրուցեն,
Մեզ ո՞վ պիտի տայ բարութիւն.
Տէր, դէմքըդ ցոյց աստուածեղէն,
Տուր ինձ Որդւոյդ խաղաղութիւն։

## 56 ԵՐԳ ՕՐՀՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ




ՍԱՂ. ՃԳ.

1 Յաւիտենական Էակ,
Եհովայ, Աստուած միակ,
Գոյ ըրիր աշխարհ համայն,
Կառավար ամենիշխան.
Դըրութիւնն տիեզերաց
Լոկ քեզմով է ըստեղծուած,
Բընութեան կարգադրութիւն
Լոկ քեզմով է հաստատուն։

2 Մեծութեանդ չի կայ սահման,
Գիտութիւնդ է անպայման,
Անպայման եւ զօրութիւնդ,
Մաքէ վեր է բարութիւնդ.
Դու պատճառ ես ամէնուն,
Եւ աղբիւր բարիքներուն.
Դու ողորմութիւն, սէր ես,
Ամէնուն կը հաղորդես։

3 Ով երրեակ եւ մի Աստուած,
Ինքնակալ Տէր զօրութեանց,
Խընամող, նայող, սիրող,
Ինձ եղիր առաջնորդող.
Մութ ատեն՝ կենացըս լոյս,
Եւ սրտիս՝ ցաւոց մէջ յոյս,
Մահուան մէջ՝ տըւիչ կենաց,
Ինձ եղիր ուխտիս Աստուած։

Թարգ. Ա. Հ. ՃԷՃԻՋԵԱՆ

## 57 ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԲԵՐԴ Է ՀԱՍՏԱՏՈՒՆ




ՍԱՂ. ԽԶ.

1 Աստուած մեր բերդ է հաստատուն,
Եւ է հզօր պաշտպան մը.
Երբ վիշտ պատէ եւ փորձութիւն,
Ինքն է քաջ օգնական մը։
Զի խաւարի իշխան,
Արթուն եւ ժրաջան,
Դարանամուտ կ՚ըլլայ,
Բռնել մեզ կը փութայ,
Որ տապալէ անդունդը։

2 Մեր զօրութիւն է սնոտի,
Մեր քաջութիւն խոտան է.
Այլ զօրապետ կայ խիստ արի,
Յաղթութեան Իշխանն է։
Ո՞վ է այս զօրակալ.
«Յիսուս Քրիստոս Օծեալ։»
Փորձիչը նա յաղթեց,
Եւ մահը խափանեց.
Ամենազօր Փրկիչ է։

3 Թող սատանան յոյժ աշխատի
Իւր դաւերով բռնել մեզ.
Մենք վախ չունինք, զի Տէրն բարի
Կարող է պաշտպանել մեզ։
Դեւք ալ պատիր, անթիւ,
Մեզ պաշարեն խըստիւ,
Կրնանք հաստատ կենալ
Մինչ Տէրն ամենակալ
Անյաղթ մեր ապաւէնն է։

Թարգ. M. P. PARMELEE

## 58 ՈՎ ԱՐԱՐԻՉ ՀԸԶՕՐ




ԾՆՆ. Ա. 3

2 Լըսէ, ով սուրբ Աստուած,
Ձայն մանկանացութեան,
Երբ մեղաւորք սիրոյ Աղբիւրն
Օրհնաբանել բաղձան։
Զուարթունք անթիւ, որ վերն
Ծովու ձայնով կ'երգեն,
Լըռեն ապշած, երբ յաղթական
Երգն փրկելոց լըսեն։

3 Ով դու երրեակ եւ մի,
Աղբիւր ողորմութեան,
Ո՞ւր կայ հըրաշք ըսքանչելի
Քու մեծ սիրոյդ նման։
Ոչ երկնային մի քնար,
Ի ձեռն հըրեշտակաց,
Կրնայ պատմել ըսքանչելիքն
Աստուածային շնորհաց։

4 Ով դու Գառնուկ զենեալ,
Քոյդ է փառաց աթոռ.
Դու ես երկնից գեղեցկութիւն,
Դու ես կեդրոն անոր։
Շնորհէ մեզ, ով Փրկիչ,
Լոյսիդ մէջ բընակիլ,
Մեր գործն ըլլայ քեզ յաւիտեան
Սիրել, փառաբանել։

C. C. TRACY

## 59 ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ




ՍԱՂ. ԿԶ.

2 Կ'երգեմ, Տէ՛ր, քու բարիքդ անգին
Որ լնու երկիրը յար,
Ամէն բան քու բարի կամքին
Նշանն է յայտարար.
Աչքերս, Տէ՛ր, ուր որ դարձընեմ,
Տեսնեմ հրաշք մեծափառ.
Երկիրն, երկնից կամարն վըսեմ
Փառքիդ ցոյցք են պայծառ։

3 Ամէն չնչին ծաղիկ կամ բոյս
Սիրոյդ է, Տէ՛ր, նըշան.
Ամպերն, հովերն մըրըրկայոյզ
Ծառայ են քեզ միայն.
Փոքրիկ ու մեծ կենդանիներ
Խնամքիդ են առարկայ.
Հեռու կամ մօտ չիք տեղ մը, Տէ՛ր,
Ուր որ դուն չես ներկայ։

Թարգ. Յ. Ս. ԱՃԻՊԵՄԱՆԵԱՆ

## 60 ՋԱՍՏՈՒԱԾ ՓԱՌԱԲԱՆԵԼՈՒ ՀՐԱՒԷՐ




ՍԱՂ. ԻԹ.

2 Աստուած կ'որոտայ երկնից բարձունքէն,
Ծովեր, անդունդներ համակ կը յուզուին.
Անոր ահաւոր ձայնով՝ համօրէն
Աշխարհ կը սարսի դողով ահագին։

3 Աստուած հովերուն թեւով կը սուրայ,
Լեռներ կը հալին անոր երկիւղէն.
Սակայն կը տեղայ բարիք անխընայ,
Եւ է իր որդւոց ամուր ապաւէն։

## 61 ԱՂՕԹՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ



ՍԱՂ. ԿԷ.

1 Աստուած ողորմի մեզի, ու | օրհնէ մեզ, || երեսը փայ | լեցը | նէ մեր | վրայ, ||

2 Որ երկրի վրայ քու ճամբադ | ճանչցը | ւի, || ու ամէն ազգաց | մէջ քու | փըրկու | թիւնդ։ ||

3 Թող ժողովուրդները | քեզ գո | վեն, || ով Աստուած, բոլոր ժողովուրդ | ները | քեզ գո | վեն։ ||

4 Ազգերը թող ուրախանան | ու ցըն | ծան. || վասն զի ժողովուրդները ուղղութիւնով պիտի դատես, ու երկրի ազգերուն դուն պի | տի ա | ռաջնոր | դես։ ||

5 Թող ժողովուրդները | քեզ գո | վեն, || ով Աստուած, բոլոր ժողովուրդ | ները | քեզ գո | վեն։ ||

6 Երկիրը իր պտուղը | պիտի | տայ. || ու Աստուած, մեր Աստուածը, | մեզ պի | տի օրհ | նէ։ ||

7 Աստուած մեզ պի | տի օրհ | նէ, ու երկրի ամէն ծայրերը ան | կէ պի | տի վախ | նան։ ||
Ա | մէն։ ||

## 62 ԵՐԿՆԱԿԱՄԱՐ




ՍԱՂ. ԺԹ. 1-6

2 Ու երբ պատէ մութ վերըստին,
Վարէ լուսին նոյն երգն ընտիր.
Եւ պատմութիւնն իր ծընունդին
Կրկնէ երկրին լուռ, ունկընդիր.
Մինչ իր դրացի ջահեր պայծառ,
Հանդիսաւոր վազքին ատեն,
Սփռեն այն լուրն ծայրէ ի ծայր,
Եւ վեհօրէն զայն հաստատեն։

3 Նոյն լըռութեամբ հանդիսաբար
Դառնան անոնք շուրջ մեր երկրին,
Թէեւ չունին ձայն կամ բարբառ,
Բայց մարդ կը զգայ որ կը բերկրին.
Ու ծիրանի շըջաններով
Կ'երգեն անդուլ վերերն յառած,
Եւ լուսատառ նըշաններով
Կ'ըսեն, «Գործքն ենք անոր ձեւաց։»



Թարգմ. Յ. Թ. ԳԱՅԱԽԱՆ

## 63 ԲՆՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆ




ՑԱՅՏ. Ե. 13

1 Տէր, դուն համայն բնութեան իշխան,
Քու փառքդ պատմեն երկիր, երկին.
Արեւ, աստղեր քեզմով կենան,
Բայց ի՛նչ մօտ ես դու մեր սրտին։

2 Դուն մեր կեանքի արեւն շողուն,
Շողերդ պարզեն ուղին խաւար.
Աստղ մեր յոյսին, քու լոյս ժպտուն,
Վանէ գիշերն մըթին, երկար։

3 Ժըպիտ քո այգն է մեր շքեղ,
Դէմքդ անժպիտ՝ մըթին գիշեր.
Քու գութն է մեր պայծառ աղեղ,
Մերն են միայն մեղքին ամպեր։

4 Դուն ես ամէն կեանքի արեւ,
Անոյշ շողերդ սըփռեն քու սէր.
Քու լուսափառ գահիդ առջեւ
Լոյսէդ ուրիշ լոյս չենք ուզեր։

5 Ոհ, Տէր, տուր մեզ ճշմարտութիւնդ,
Եւ քու սիրով վառուած սրտեր.
Ամէն մարդ թող պաշտէ անունդ,
Եւ լոյսդ վանէ մեղքին գիշեր։

Թարգ. Յ. Ս. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

## 64 ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԳՈՐԾԵՐՈՎԸ ՓԱՌԱՒՈՐԵԱԼ Է




ՍԱՂ. ԺԹ.

2 Լեզու չունին եւ չեն խօսիր,
Անոնց ձայները չեն լըսուիր.
Բայց խօսքերնին այն տեղ կ'երթայ,
Ուր որ արեւն իր լոյսն կու տայ։

3 Տէրոջն օրէնքն է երկնային,
Կը նորոգէ մարդոց հոգին.
Վըկայութիւնն է ճշմարիտ,
Կ'ընէ տըգէտն ըզգօնամիտ։

4 Իր կանոններն շիտակ, սիրուն,
Սրտից կու տան ուրախութիւն.
Պատուիրանքներն են շատ պայծառ,
Աչաց կու տան լոյս մշտավառ։

5 Անոնք ընտիր են ոսկիէն,
Ախորժելի՝ անոյշ մեղրէն.
Երբ քու ծառադ զանոնք պահէ,
Մեծ հատուցում պիտի առնէ։

## 65 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԳԷՏ ԵՒ ԱՄԵՆՈՒՐԵՔ Է

ՍԱՂ. ՃԼԹ.

1 Ո՛վ Տէր, դուն զիս միշտ կը քննես,
Իմաստութեամբդ զիս կը ճանչնաս.
Նստելս՝ ելլելս դուն միշտ գիտես,
Միտքս հեռուէն կը հասկընաս։

2 Ես ո՞ւր երթամ քու Հոգիէդ,
Որ տիեզերքն է տարածուած.
Ես ո՞ւր փախչիմ քու երեսէդ,
Որմէ բան մ'ալ չէ ծածկըւած։

3 Թէ որ երբեք երկինք ելլեմ,
Դուն հոն ներկայ կը գտնըւիս.
Թէ որ դըժոխք մահիճս ընեմ,
Ահա հոն ալ կ'ելլես առջիս։

4 Ես փառք կու տամ, ով Տէր, քեզի,
Որ զիս ըրիր ահեղ կերպով.
Գործքերդ են շատ զարմանալի,
Զանոնք գիտցայ հաճութիւնով։

5 Տէ՛ր, զիս փորձէ եւ սիրտս քննէ,
Իմ խորհուրդներս բոլոր ճանչցիր.
Թէ որ ճամբաս թիւր ու չար է,
Առաջնորդէ ճամբուդ ընտիր։

## 66 ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

ՍԱՂ. Ը.

1 Աստուած, Տէր մեր, ի՛նչ փառաւոր
Է քու անունդ երկրի վըրայ.
Անճառ լուսովդ երկինք բոլոր
Յաւէրժաբար կը ցոլանայ։

2 Երբ կը տեսնեմ երկնից կամար,
Որ է գործք քու ճարտար մատանց,
Պար աստեղաց, լուսինն պայծառ,
Որ քու խօսքովդ են ըստեղծուած,

3 Ես զարմանքով յանժամ կ'ըսեմ,
Մարդն ո՞վ է, Տէր, որ դուն յիշես.
Արդեօք ա՞յնչափ է մարդ վըսեմ,
Որ դուն անոր միշտ այց կ'ընես։

4 Քանզի դուն զայն պըսակեցիր
Իբրեւ պատուով հրեշտակային.
Վերակացու դուն զայն դըրիր
Ձեռագործիդ՝ բոլոր երկրին։

5 Արջառ, թռչուն եւ ձուկ անոր
Տըւիր որ հընազանդ ըլլայ.
Աստուած, Տէր մեր, ի՛նչ փառաւոր
Է քու անունդ երկրի վըրայ։

## 67 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆՈՒՆ ՎՐԱՅ ԿԸ ՏԻՐԷ







ՍԱՂ. ՂԷ.

2 Արդարութիւնն երկինք պատմեն,
Բոլոր ազգեր իր փառքն տեսնան.
Ամէն մարդիկ որ կուռք պաշտեն
Թող քու առջեւըդ ամըչնան։

3 Քանզի, ո՛վ Տէր, դուն բարձրը ես
Բոլոր երկրիս մարդիկներէն.
Շատ բարձրացար եւ շատ մեծ ես
Բոլոր երկրիս աստուածներէն։

4 Ո՛վ Տէրն սիրող բարեպաշտներ,
Միշտ ատեցէք ըզչարութիւն.
Տէրն կը պահէ ամէն սուրբեր,
Կու տայ անոնց իր փրկութիւն։

5 Արդարներուն լոյս ծագեցաւ,
Յայտնըւեցաւ ճշմարտութիւն.
Ուրախութիւն պարգեւեցաւ
Արտով ուղիղ եղողներուն։

## 68 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐՉԻՆ

ՍԱՂ. ՂԵ.

1 Եկէք ցնծանք Տէրոջն առջին,
Զի նա է մեզ կեանք եւ պաշտպան.
Աղաղակենք մեր մեծ Փրկչին,
Զի նա է մեզ վէմ փրկութեան։

2 Ինչու որ Տէրն է մեծ Աստուած,
Աստուածներուն մեծ Թագաւոր.
Անոր ձեռքին մէջ է աշխարհս,
Լեռներ, դաշտեր, գանձեր բոլոր։

3 Իրենն է ծովն, զայն ինք շինեց,
Եկէք ծըռնինք Տէրոջ առջին.
Ձեռքով ցամաքն ան ըստեղծեց,
Տանք գոհութիւն Ըստեղծողին։

4 Ինչու որ ան է մեր Աստուած,
Մենք ոչխարներ իր արօտին.
Անոր խօսքերն են լուսապանծ,
Մըտիկ ընենք անոր ձայնին։

## 69 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ




ՍԱՂ. ձԽԵ.

1 Ով փառաւորեալ Արքայ երկնաւոր,
Երկնի ու երկրի Տէր եւ Դատաւոր,
Տըկար մարդիկներ կարող չեն երգել
Քու իշխանութիւնդ մեծ եւ ահաւոր։

2 Տէր, քու զօրութիւնդ պատմել կարող չեն,
Շնորհքիդ մեծութիւնն խորհիլ կարող չեն
Ոչ այս աշխարհիս բոլոր բընակիչք,
Ոչ ալ երկինքի սուրբերը ամէն։

3 Տէրոջը առջեւ անթիւ հրեշտակներ
Գիտնալ կարող չեն անոր խորհուրդներն.
Իրենց պաշտօնն է զայն փառաբանել,
Ու միշտ կատարել իր սուրբ հրամաններն։

4 Այն սուրբ հանդէսին հետ ես ալ կ'ուզեմ
Որ անձըս քեզի, Տէր իմ, զոհ բերեմ.
Զնչին ընծաս դուն անտես մի ըներ,
Հաճէ ընդունիլ զիս, երբ քեզ կ'երգեմ։

## 70 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱՏԵՍ Է

ՍԱՂ. ձԼԹ.

1 Քննողդ համայնից, ով Տէր իմ Աստուած,
Գիտես դուն մեղքերս գաղտնի գործըւած.
Աչքէդ յարարթուն ոչ մէկ ծածուկ բան
Կրնայ վըրիպիլ, թէպէտ աննըշան։

2 Ամէն տեսակ մեղք խօսքի, խորհըրդի,
Որով իմ հոգիս միշտ կը խըռովի,
Գրքիդ մէջ անջինջ գըրուած կը մնան
Մինչեւ գայ վերջին ահեղ դատաստան։

3 Ահա ես համակ զըգուած իմ անձէս,
Վըստահ քու գըթոյդ, կու գամ միայն քեզ.
Ջնջէ, Տէր, մեղքերս մինչդեռ չեմ մեռած,
Ըրէ զիս ժառանգ կեանքի եւ փառաց։

4 Յիշէ այն մեծ գին, որով Տէր Յիսուս
Կամաւ վըճարեց պարտքերը հոգւոյս.
Անոր արիւնով սուրբ եւ պատուական
Մաքրէ զիս, ըլլամ զաւակ քեզ արժան։

## 71 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ




ՍԱՂ. ՃԽՁ.

1 Լեզուովս պիտի Աստուած գովուլի,
Ու երբ մահուամբ իմ ձայնս կտրի,
Ալ աւելի պիտի երգեմ.
Անոր փառք տալս չունի վախճան,
Ջի երբ օրերս հոս լըմնան,
Վերն յաւիտեանս պիտի երգեմ։

2 Բիւր երանի յուսացողին
Մեծ Աստուծոյն Իսրայէլին,
Տիեզերաց Ըստեղծողին.
Տէրոջը խօսքն է հաստատուն,
Ինքն է Փրկիչն աղքատներուն,
Միշտ խոստմունքներն կը կատարուին։

3 Լեզուովըս միշտ պիտի գովուլի,
Ու երբ մահուամբ իմ ձայնս կտրի,
Ալ աւելի պիտի երգեմ.
Անոր փառք տալս չունի վախճան,
Ջի երբ օրերս հոս լըմնան,
Վերն յաւիտեանս պիտի երգեմ։

## 72 ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ




ՍԱՂ. ՃԴ.

2 Հազարաւոր շնորհքներ քեզմէ
Ամէն օր կ'ընդունիմ.
Բայց քու պարգեւներուդ մեծն է
Այս շնորհակալ սիրտ իմ։

3 Բոլոր կենացս օրերն երգեմ
Տէրոջը սէրն գթած.
Երկնից մէջ զայն պիտի կրկնեմ
Ի մէջ հրեշտակաց։

4 Ես յաւիտեանս ուրախ երգեր
Կ'ուզեմ քեզի երգել.
Չեն բաւական անթիւ դարեր
Քու սէրդ փառաբանել։

## 73 ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ




ՂՈՒԿ. ԺԲ. 6, 27-31

2 Առանց իր բարձրր հրամանին
Ճնճղուկ մ'անգամ գետին չիյնար.
Սանկ գթած Հօր մը որդին
Ի՞նչպէս անվախ իրեն չերթար։

3 Միայն մեղքէն թող մենք վախնանք,
Այն ատելի է Աստուծոյ.
Թէ իր պատուէրն պահած չըլլանք,
Կ'արժանանանք սաստիկ պատժոյ։

## 74 ԱՍՏՈՒԱԾ ԵՐԿՆԱՒՈՐ ՀԱՅՐ ՄԵՐ







Միք. է. 18

2 Մեր սիրտն անոր կամաւ զոհենք,
Ինքն աղօթքի խիստ կը հաճի.
Իր սէրն անհուն՝ գիշերն յիշենք,
Թող ինքը միշտ փառաւորուի։

3 Երբ Աստուծոյ դէմ մեղանչենք,
Իր թողութիւնն սրտանց խնդրենք.
Մեզի համար մեռաւ Յիսուս,
Չունինք ուրիշ Փրկիչ մը մենք։

4 Գթած հօր պէս սիրով վառուած՝
Ներողութեամբ ինք կ'ողորմի.
Թէ՛ հոս ծնողքէ ենք զրկըւած,
Անմահ Հայր մը ունինք յերկնի։

## 75 ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԼԽՈՒՆ ՓԱՌՔԸ







ՍԱՂ. ՁԹ.

2 Որքա՜ն հզօր ես, ով Աստուած,
Աղբիւր նաեւ ամէն բարեաց.
Քեզի պէս մեծ չի կայ էակ,
Որ մեզ սիրէ գըթով համակ։

3 Երկինք, երկիր են քոյդ միայն.
Քու ձեռքդ հիմնեց զանոնք համայն.
Թաբոր, Հերմոն, ազգեր մարդկան
Անունդ կ'օրհնեն միաբերան։

4 Արժա՛ն, իրօք, համերգս այս պերճ.
Հայր, բարձր ըլլայ բազուկ քու մեծ.
Զի հիմ գահիդ արդար օրէնք
Եւ լոյս դէմքիդ է սէր աննենգ։

5 Երնե՜կ անոնց որ չեն անմիտ,
Սիրով կ'անսան խրատու ձայնիդ.
Անոնք պիտի ցնծան, հրճուին
Գործովք իրենց միակ Փրկչին։

## 76 ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՆԵՐՈՒՆ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ




ՍԱՂ. ձէ.

2 Երնե՜կ անոնց որ կը պահեն
Տէրոջ օրէնքն եւ պատուիրան.
Երնե՜կ անոնց որ միշտ կ'ընեն
Գործ գըթութեան, արդարութեան։

3 Տէր, զիս յիշէ, ինչպէս կ'ընես
Քու սիրելեացդ. ինձ տես եկուր.
Ճշմարտութիւն սիրեմ քեզ պէս,
Եւ միշտ պահեմ իմ սիրտս մաքուր։

4 Ընտրեալներուդ միշտ հետն ըլլամ,
Տեսնեմ քու փառքդ ու վայելեմ.
Խաղաղ սրտով ուրախանամ,
Եւ անվախճան կեանք ժառանգեմ։

5 Փրկէ ըզմեզ, ո՛վ Տէր Աստուած,
Մարդոց մէջէն ըզմեզ ժողվէ.
Մենք միշտ կ'երգենք անունդ գըթած,
Արդարութեամբըդ մեզ փրկէ։

## 77 ԿԱՅ ԱՄԵՆՈՒՐԵՔ ԱՍՏՈՒԱԾ




ՍԱՂ. ձԼԹ.

2 Ծով, ցամաք, ամպերն երկնից,
Հով մեղմ կամ մրրըրկալից,
Կը գոչէ մէկտեղ համայն
Տիեզերքը բարձրաձայն,
Թէ գործքովը յայտնըւած
Կայ ամենուրեք Աստուած։

Թարգ. ELIAS RIGGS

## 78 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ




ՍԱՂ. ՃԽԶ.

1 Պիտի երգեմ քեզի,
Աստուած իմ Թագաւոր.
Անունդ ի՛նչ սիրելի,
Գործքերդ ի՛նչ փառաւոր.
Քեզ գովելու կը փափաքիմ,
Մինչեւ մահուամբ փառաց հանիմ։

2 Մարդոց իշխաններուն
Ինչո՞ւ համար յուսամ.
Մահկանացուներուն
Ինչո՞ւ ես հաւատամ.
Շուտով կ'ելլէ անոնց հոգին,
Եւ խորհուրդներն կը կորսուին։

3 Աստուած է որ կոյրին
Աչքերը կը բանայ,
Խեղճին ու պանդուխտին
Պաշտպանութիւն կու տայ.
Եւ որբն ու անյոյս այրին
Միայն անոր կ'ապաւինին։

4 Աստուած զանոնք գիտէ
Ու յաւիտեան կ'ապրիս։

Թարգ. ELIAS RIGGS

## 166 ՄԵՂԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԽՐԱՏ ԵՒ ՅՈՐԴՈՐ







ՄԱՏԹ. ԺԶ. 26

2 Փուճ բաներու դուն խելք մի տար,
Պէտք է զանոնք մոռնաս.
Զի այս աշխարհս յանկարծաբար
Պիտի թողուս երթաս։

3 Յիսուս նստած աթոռ փառաց՝
Մեղքերդ պիտի քննէ.
Դուն մի յուսար որ ոսկոյ գանձ
Այն օրն քեզի օգնէ։

4 Քեզ պատրաստուած է փառք դրախտին,
Դեռ չես անկէ զրկուած.
Քեզ կը կանչէ ձայն Յիսուսին,
Լըսէ որ ետք չի լաս։

5 Այն սուրբ ձայնին հընազանդէ,
Վաղուան զայն մի ձըգեր.
Այս մեծ շընորհքն ու ժամն յարգէ,
Դուցէ ա՛լ չես գտներ։

## 167 «ԵԿԷՔ ԻՆՁԻ, ԵՒ ԵՍ ՁԵԶ ՊԻՏԻ ՀԱՆԳՉԵՑՆԵՄ»






## 168 ՄԵՂԱՒՈՐԻՆ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ







ՅՈՎՀ. Գ. 16

2 Բոլոր մեր մեղքեր վըրան ինք առաւ,
Խաչին վըրայ Տէրն մեր տեղը մեռաւ.
Իր ամենասուրբ արիւնը եւ կեանք
Ըզմեզ փրկելու անհուն գին տըւաւ։

3 Տեսէք մեր Փրկիչն, որ մահը յաղթած՝
Անճառ մեծ փառքով երկինք է ելած.
Մեզի համար հոն կը բարեխօսէ,
Իր Հօրն Աստուծոյ աջ կողմը նստած։

4 Տէրն դատաստանի վերէն պիտ՝ իջնէ,
Անեղ փողերով պիտի մեզ կանչէ.
Իսկոյն ալ բացուի ամէն գերեզման,
Ու ննջեցեալներն առջեւը բերէ։

5 Արդար Դատաւոր, ինծի շընորհք տուր,
Անկէ ապահով իմ անձըս անցուր,
Եւ քու արիւնովդ մեղքէն մաքրըւած՝
Սուրբ հրեշտակաց մէջ հոգիս բազմեցուր։

---

## 167 «ԵԿԷՔ ԻՆՃԻ, ԵՒ ԵՍ ՁԵԶ ՊԻՏԻ ՀԱՆԳՉԵՑՆԵՄ»

ՄԱՏԹ. ԺԱ. 28

1 Ահա Աստուած գըթած
Քեզի հրաւէր կու տայ.
Շնորհաց գահին վրայ է նստած,
Խեղճ մեղաւոր, գնա։

2 Դիմէ անոր անվախ,
Խնդրէ որ հաշտըւիս.
Անսուտ է ինք, եւ անյապաղ
Ջըրի պիտի ներուիս։

3 Իր Սուրբ Հոգին խնդրէ,
Որ նոր սիրտ տայ քեզի,
Երկնից համար քեզ պատրաստէ,
Ու միշտ մէջդ բընակի։

4 Հիմա պատրաստ է տալ
Այս պատուական պարգեւն,
Վերջն ալ հանգիստը կատարեալ
Իր աթոռին առջեւն։

## 169 Ո՞ՒՐ Է ՈՐԴԵԱԿՍ ՀԷՔ

ՂՈՒԿ. ԺԵ. 11-32






Թարգ. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## 170 ԱՍՏՈՒԾՄՈՎ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ




ԵԲՐ. Դ. 9-11

1 Թափառական հոգիս,
Դադրէ. այս աշխարհիս
Մէկ բեւեռէն մինչեւ ի միւսն
Հանգիստ չը կայ քեզի։

2 Տես Աստուծոյ տապան,
Նայէ այն բաց դըրան.
Շուտով մըտիր, հոն բընակէ,
Ունայն յոյսերդ ծըգէ։

3 Հանգիստ պիտի ըլլաս,
Եւ շատ ուրախանաս.
Ամէն երջանկութեամբ լեցուիս,
Տէրոջմով փրկըւիս։

4 Ով անհանգիստ հոգիս,
Դադրէ. այս աշխարհիս
Մէկ բեւեռէն մինչեւ ի միւսն
Հանգիստ չը կայ քեզի։

## 171 ՀՐԱՒԷՐ ԱՌ ՄԵՂԱՒՈՐՍ




ՅԱՅՏ. ԻԲ. 17

2 Ամէն լըսող ըսէ
Ամէն մարդու, «Եկուր.
Եթէ արդարութիւն կ'ուզես,
Միակ աղբիւրն եկուր։»

3 Այո, ով ծարաւի,
Ուրախութեամբ եկուր.
Կենաց ջուրն է առատ, ծըրի.
Յիսուս կ'ըսէ, «Եկուր։»

## 172 ԿԷՍ ՀԱՄՈԶՈՒԱԾ



ԳՈՐԾ. ԻԶ. 28, ԻԹ. 25

2 Կէս համոզուած դուն, մի ուշանար,
Մեծ հրաւէրին անհոգ մի ըլլար.
Կանչողն Փրկիչդ է,
Սիրով քեզի կ'ըսէ,
«Հանգիստ կու տամ քեզի,
Եկուր ինծի։»

3 Կէս համոզուած դուն, հունձքը կ'անցնի,
Շուտ քու վըճիռդ պիտի կնքուի.
Զգուշ որ ետ մընաս
Եւ ետքը դառնի ողբաս.
«Ո՜հ, ո՜հ, կէս համոզուած,
Բայց կորսուած։»

Թարգ. ELIAS RIGGS

## 173 ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՒԷՐԸ



ՄԱՏԹ. ԺԱ. 28-30, ՅԱՅՏ. ԻԲ. 17

1 Եկէք ինծի, բոլոր յոգնած եւ բեռնա | ւորած | ներ, || եւ ես պիտի հանգ | չեցընեմ ըզ | ձեզ։ ||

2 Առէք իմ լուծս ձեր վրայ, եւ սորվեցէք ինծմէ որ հեզ եմ եւ խո | նարհ սըր | տով, || եւ ձեր անձերուն հան | գիստ պիտի գըտ | նէք. ||

3 Քանզի իմ լուծս քաղցր է, եւ իմ | բեռս՝ թե | թեւ։ || Քանզի իմ լուծս քաղցր է, || եւ իմ բեռս՝ թե | թեւ։ ||

4 Եւ Հոգին եւ հարսը կ'ըսեն, Եկ, եւ ով որ կը լսէ՝ թող | ըսէ, | Եկ. || եւ ով որ ծարաւի է՝ թող գայ, եւ ով որ կ'ուզէ՝ կենաց | ջուրն առնու ձըր | րի։ ||
Ա | մէն, | Ա | մէն։ ||

## 174 ԱՌ ՇՆՈՐՀԱՑ ԱԹՈՌՆ




ԵԲՐ. Դ. 16

2 Հոս մոլորեալն կը գտնէ կենաց լոյսը,
Հոս ալ տրտմեալըն գնծում անբասար.
Մխիթարիչն կու տայ հոս խորախոյսը.
Դեղ կը գտնէ հոս ամէն ցաւ դժուար։

3 Հոս կենսատու երկնից ջուրը բղխեալ է,
Սէր կը վազէ աթոռէն անդադար.
Քեզ է կոչումը, պայմանն հաւատալ է.
Դեղ կը գտնէ հոս ամէն ցաւ դժուար։

Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԻՉՃԵԱՆ

## 175 ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ




Բ ԿՈՐ. Զ. 2

2 Այսօր Աստուած կը հրաւիրէ.
Կենաց խօսքը ի՜նչ քաղցր է.
Ով մեղաւոր, վազէ, եկու,
Պատրաստ է Տէրն քեզ ներելու։

3 Արագ թեւերն ժամանակին
Քեզ գերեզմանը կը տանին.
Եւ այն աշխարհն ուր յոյս չը կայ՝
Հոգիդ պիտի ներկայանայ։

4 Այն աւերակ, անյոյս երկիր՝
Ուրախութեան յոյս չը ծագիր.
Աստուած չը կայ աղօթք լսող,
Յիսուս չը կայ հոգիդ փրկող։

## 176 ԱՂՕԹՔ ՈՐ ՔՐԻՍՏՈՍ ՃԱՆՉՑՈՒԻ




Ես. ԾԳ. 1-3, 10-12

2 Քեզ՝ մէկ հատիկդ ի բիւրս բիւրոց,
Անունդ՝ անուանց մէջ սիրելի,
Պաշտեն, սիրեն դասք զըւարթնոց,
Իսկ սիրտ մարդկան քեզ դէմ գոցուի։

3 Մարդիկ միայն քեզ կը տեսնան
Անարգըւած եւ վիրաւոր.
Քու դէմք աւրած, ցաւդ աններման,
Արիւնաներկ մարմինդ բոլոր։

4 Ով Թագաւոր փառաց, շնորհաց,
Տէր իմ, Փրկիչ իմ սիրական,
Քաղցր դէմքդ ծածկող այդ քօղը բաց,
Գեղեցկութիւնդ մարդիկ տեսնան։

ՏԻԿԻՆ ՀՌԻՓՍԻՄԷ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 177 ՄԷԿ ԺԱՄ ՄԸ ԿԱՅ, ՄԷԿ ԿԷՏ ՄԸ ԿԱՅ



## 178 ՅԻՍՈՒՍԻ ԵԿ ԱՅՍՕՐ




ԽՈՐ. Գ. 13, 15

1 Յիսուսի եկ այսօր։
2 Կը փրկէ քեզ այսօր։
3 Հաւատա դուն այսօր։
4 Ինք կարող է այսօր։
5 Ինք պատրաստ է այսօր։
6 Կ'ընդունի քեզ այսօր։
7 Արդ փնտռէ զինք այսօր։
8 Ո՛հ, կանչէ զինք այսօր,
9 «Ողորմէ ինծ» այսօր։
10 Կը լսէ քեզ այսօր։
11 Կը ներէ քեզ այսօր։
12 Կը մաքրէ քեզ այսօր։
13 Կը սիրէ քեզ այսօր։
14 Մի մերժեր զինք այսօր։

Թարգ. ELIAS RIGGS

---

## 177 ՄԷԿ ԺԱՄ ՄԸ ԿԱՅ, ՄԷԿ ԿԷՏ ՄԸ ԿԱՅ

ԾՆՆ. Զ. 3

2 Գիծով մը անտեսանելի,
Անյայտ մեր աչքերէն,
Տէրոջը գութը կը զատուի
Անոր բարկութենէն։

3 Բայց մարդը այն գիծէն անցած՝
Կուզէ անհոգ մնալ,
Մինչեւ անյոյս եւ կորսուած՝
Դժոխքի մէջ արթննայ։

4 Տէրն ո՞րչափ պիտի համբերէ
Անոնց որ մեղք գործեն.
Ե՞րբ բարկութեամբ պիտի ըսէ,
«Հանգիստըս չը մտնեն։»

5 Ո՞ւր է այն ահաւոր սահման.
Յոյսն ե՞րբ կը վախճանի.
Ով մեղաւորք այս պատասխան
Վերէն կու գայ ձեզի.

6 «Այսօր ձեր Աստուծոյն ձայնին
Թէ որ պիտի լսէք,
Ձեր սիրտը ապստամբութեամբ
Ա՛լ մի խստացունէք։»

Թարգ. ELIAS RIGGS

## 179 ՏԷՐՈՋԸ ՁԱՅՆԸ




ՄԱՏԹ. ԺԱ. 28

2 Ինչպէս էի անոր եկայ,
Կոյր՝ մերկ՝ յոգնած՝ սրտում.
Հոս ապաստանարան գըտայ,
Ան ինծ տըւաւ խնդում։

3 Տէրոջը ձայնը լըսեցի.
«Ձըրիաբար խըմէ
Կենաց ջուրէն,» ըսաւ ինծի,
«Եւ խըմելով ապրէ։»

4 Եկայ, զաւաթըս լեցուցի
Այն կենսատու ջըրով.
Անով ծարաւըս անցուցի,
Հիմա կ'ապրիմ անով։

5 Տէրոջը ձայնը լըսեցի.
«Ես աշխարհի լոյսն եմ.
Եկուր, գիշերդ պիտի անցնի,
Ցորեկդ փայլեցընեմ։»

6 Եկայ, եւ ան եղաւ ինծի
Արեւ, լուսոյ շրջան.
Եւ այն լուսով քալեմ պիտի
Մինչեւ ճամբուս վախճան։

Թարգ. ELIAS RIGGS

## 180 ՁՂՋԱՑԵԱԼ ՄԵՂԱՒՈՐԻՆ ԱՂՕԹՔԸ



## 181 ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻ







ՂՈՒԿ. ԺԵ. 17-19

1 Եղո՜ւկ ինծի, ի՜նչ էր ըրի.
Իմ բարերար Հայրս թողուցի,
Եւ չանսալով բարի խրատին,
Մեղայ, մեղայ յամենայնի։

2 Դառն ցաւերով եւ վիշտերով
Արդարապէս կը պատժըւիմ,
Կամաւ իմ Հօրս տունէն ելայ
Որ սովամահ հոս կորընչիմ։

3 Ինծ փրկութեան ա՛լ յոյս չի կա՞յ.
Դառնամ առ Հայրս, գոչեմ, «Մեղայ,
Ձեմ արժանի որդի ըլլալ,
Ջիս ընդունէ իբրեւ ծառայ։»

4 Այո, մեղայ, Աստուած իմ Հայր,
Քու ոտքդ կ՚իյնամ ես կորսըւած,
Անթիւ մեղքերըս ինծ ներէ,
Եւ ընդունէ զիս, Հայր գըթած։

Թարգ. Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

## 180 ՋՂՋԱՑԵԱԼ ՄԵՂԱՒՈՐԻՆ ԱՂՕԹՔԸ

ՂՈՒԿ. ԺԸ. 13

1 Ով Տէր գըթած, որ կը լըսես
Աղօթքը խեղճերուն,
Ամէն արցունք ալ կը սրբես
Աչքէն տրտմածներուն,

2 Տես աթոռիդ առջին ինկած
Ծառադ, խեղճ մեղաւոր.
Ըզքեզ փնտռել չե՞ս հրամայած,
Ինծի չըսի՞ր, «Եկուր։»

3 Միթէ մեղքիս վախը կրնա՞յ
Զիս քու քովէդ վանել.
Ինծի միայն յոյս կը մընայ
Առջիդ շընորհք գտնել։

4 Թող քու անհուն ողորմութիւն
Իմ յոյսըս հաստատէ.
Թող բըժըշկող ձայնդ՝ ցնծութիւն
Սըրտիս մէջ տարածէ։

Թարգ. C. C. TRACY

## 182 ՄԵՂԱՒՈՐԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԴԻՄԵԼԸ




ՅՈՎՀ. Ա. 29

2 Իմ մէջս չի կայ արդարութիւն,
Յոյս, փրկութիւն կամ քաւութիւն.
Ինչպէս որ եմ, քու ոտքդ կ'իյնամ,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

3 Դուն քու արիւնըդ թափեցիր,
Եւ խեղճ մեղաւորիս ըսիր,
«Քու փրկութիւնըդ ես կ'ըլլամ.»
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

4 Հոգին եւ հարսն՝ «Եկուր,» կ'ըսեն,
«Ջրի խըմէ կենաց ջուրէն.»
Ես կը լըսեմ ու կ'արտորամ,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

5 Դուն ալ սիրով զիս ընդունէ,
Բոլոր մեղքերըս, Տէր, ներէ.
Լըւա զիս որ մաքուր ըլլամ,
Գառն Աստուծոյ քեզի կու գամ։

Թարգ. ELIAS RIGGS

## 183 ՅՈՐԴՈՐ ԱՌ ՄԵՂԱՒՈՐՍ

ՅՈՎՆ. Ա. 6

1 Քեզ ի՞նչ եղաւ. մի՛ քընանար,
Մի՛, Յովնանի պէս մի՛ խորդար.
Ել, արթընցիր, ով իմ հոգիս,
Վըտանգի մէջ կը տեսնեմ զիս։

2 Անե՛ղ վըտանգ, մահը կու գայ,
Արագութեամբ կը մօտենայ,
Որ խեղճ մարմինըդ հոս ծըգէ,
Քեզ ատեանին առջեւ հանէ։

3 Անե՛ղ ատեան, սուրբ եւ արդար,
Ողորմութիւն չիք, չես գտնար.
Ամենագէտ, ատող չարաց,
Բազմի դատել, ՈՐ է՛Ն Աստուած։

4 Անե՛ղ Աստուած, «մաշող կըրակ,»
Քննող սրտից, որոնց միակ
Ինքն է տեղեակ. վըկայ չուզեր.
Վըճառ կու տայ, ա՛լ ետ չառներ։

5 Ուրեմն ելիր, մի՛ յապաղիր,
Փութով այն նեղ դըռնէն մըտիր.
Բնաւ մի՛ շեղիր, յառաջ վազէ,
Եւ անդադար շընորհք խնդրէ։

Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 184 ԼԱՒԸ ՁՓՐԿԵՐ ԶԻՍ



ԵՓԵՍ. Բ. 8, 9

1 Լաւը չըփրկեր զիս.
Անդադար դառն արցունքներս
Չեն կրնար սրբել մեղքերս,
Ոչ հեռացընել վախերս.
Լաւը չըփրկեր զիս։
Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
Ինծ համար չարչարուեցաւ,
Զիս փնտռել յերկնից իջաւ.
Ինք պիտի փրկէ զիս։

2 Գործը չըփրկեր զիս.
Անձնուրաց երախտիքներ,
Ծիգն ու ջանք ալ մարդասէր,
Բնաւ հոգիս չեն նորոգեր.
Գործը չըփրկեր զիս։
Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
Ինծ համար չարչարուեցաւ,
Զիս փնտռել յերկնից իջաւ.
Ինք պիտի փրկէ զիս։

3 Ոչ ալ ըսպասելը.
Ըսպասելըն է մեռնիլ.
Ինծ չօգներ անյոյս պառկիլ,
Արարչիս դէմ զանգատիլ,
Ոչ ալ ըսպասելը։
Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
Ինծ համար չարչարուեցաւ,
Զիս փնտռել յերկնից իջաւ.
Ինք պիտի փրկէ զիս։

4 Կը փրկէ հաւատքը.
Սատուծոյ Որդւոյն նայիմ,
Եւ իր բազուկներն նետուիմ,
Ա՛լ անոր ապաւինիմ.
Կը փրկէ հաւատքը։
Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
Ինծ համար չարչարուեցաւ,
Զիս փնտռել յերկնից իջաւ.
Ինք պիտի փրկէ զիս։

Թարգ. ELIAS RIGGS

## 185 ՈՒՇ ՄՆԱԼՈՒՆ ՎՏԱՆԳԸ




ԵՍ. ԾԵ. 6, 7

2 Թէ որ այլըստամբ հոգիս անարգէ
Տէրոջը շընորհքն անհուն եւ բարի,
Վերջն ալ Սուրբն Աստուած զիս պիտի մերժէ,
Երկնից փառաց մէջ պիտի չընդունի։

3 Երբոր բարկանայ, ալ ես ի՞նչ ընեմ,
Ու երբ սիրելու տեղ Տէրն զիս ատէ,
Որ իր շընորհքներն հիմա կ'անարգեմ,
Ու սիրտս չարութիւն եւ մեղք կը սիրէ։

4 Ո՛հ, ի՛նչ սոսկալի է իր ձեռքն իյնալ,
Իր ուժը անհուն ի՛նչպէս հասկընամ.
Երբ ինք ըսկըսի ինծի բարկանալ,
Անգամ մը զարնէ, դըժոխքը կ'երթամ։

5 Այն ժամը կանչել պարապ է բընաւ,
Ներում, թողութիւն ու շնորհքը խնդրել.
Ապաշխարութեան ատենը անցաւ,
Եւ յոյս չը մընաց իմ Տէրըս տեսնել։

## 186 ՅԱՏՈՒԿ ՇՆՈՐՀԱՑ ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ



## 187 ՄՈԼԱՐ ՈՉԽԱՐ




ՂՈՒԿ. ԺԵ. 4-7

2 Զոր անապատ եւ մեծ,
Անտառ խիտ, անազին.
Փնտռեց Հովիւը իր ոչխարն,
Ու Հայրը իր որդին։
Մահուան մօտ զիս գտան,
Սաստիկ վիրաւորուած.
Զիս փաթթեցին սիրոյ կապով,
Եւ վեր առին՝ մարած։

3 Յիսուս է իմ Հովիւս,
Ինքն է որ զիս սիրեց.
Որ զիս լուաց իր արիւնով,
Հոգիս ալ դարմանեց։
Մոլար ու կորսուած,
Ինկած, ան զիս գտաւ.
Զիս ան առաւ ուսին վրայ,
Եւ իր փարախն բերաւ։

4 Ա՛լ չեմ մոլար ոչխար,
Փարախըս կը սիրեմ.
Հովուիս ձայնն ա՛լ ինծի քաղցր է,
Ուղղուիլ յօժար եմ։
Այլ եւս չեմ անառակ,
Իմ տունըս կը սիրեմ.
Քաղցր է ինծի իմ Հօրըս ձայնն,
Իր մօտ կենալ կ'ուզեմ։

Թարգ. ELIAS RIGGS

## 186 ՅԱՏՈՒԿ ՇՆՈՐՀԱՑ ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ

ՆԲՐ. Բ. 17, 18

2 Անշուշտ պիտի ես կորսուիմ
Այս խղճալի վիճակիս մէջ,
Թէ որ շուտով չը՛նորոգուիմ,
Զը մաքրուիմ շնորհքովդ մեծ։
Զի անարգած եմ, շատ անգամ,
Քու Սուրբ Հոգիդ՝ ինծ պարգեւուած։

3 Գիտեմ որ ես եմ անարժան
Աստուածային քու շնորհաց.

4 Ուխտով կրկին քեզ կ'աղաչեմ,
Տէր, Սուրբ Հոգիդ ինծ պարգեւէ.
Թող համաձայն անոր քալեմ,
Զգոյշ, հեռու ամէն մեղքէ։

ՄԿՐՏԻՉ Տ. ՊԻՐԼԸՁԵԱՆ

## 188 ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ




ՍԱՂ. ՃԽԳ.

2 Քու ծառայիդ հետ մի մտներ
Դատաստանի, Տէր մարդասէր.
Քանզի բընաւ մարդ մ'ալ չը կայ,
Որ քու առջիդ արդարանայ։

3 Իմ ձեռքս քեզի կ'երկնցընեմ,
Զի քեզ միայն իմ Տէրս գիտեմ.
Զորցած երկրի պէս՝ անձս քեզի
Մեծ փափաքով կը ծարաւի։

4 Ինծի սուրբ կամքդ սորվեցուր,
Կատարելու շընորհքդ ալ տուր.
Զի անձս քեզի եմ վերցուցած,
Դուն ես ինծի միակ Աստուած։

5 Բարի Հոգիդ առաջնորդէ,
Ուղիղ երկիրդ զիս մտցունէ.
Զիս ապրեցուր անուանդ համար,
Զարէն փրկէ, Աստուած արդար։

## 189 ՅԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ԻՆՉՈ՞Ւ ՄԵՌՆԻՍ

ԵԶԵԿ. ԼԳ. 11

1 Ով անձըս, շուտ ապաշխարէ,
Ատկէ քեզի փարձք մահ ունիս.
Քեզմէ մեղաց լուծը ձըգէ.
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս։

2 Հեզ Յիսուսի հիմա դիմէ,
Իսկոյն կտրէ յոյսերդ քեզմէ.
Յիսուսի պէս Փրկիչ ունիս,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս։

3 Դուն յարաժամ պատրաստ կեցիր,
Եւ քու պարտքերըդ լաւ ճանչցիր.
Բարիք գործէ, միշտ ունիս,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս։

4 Ով Սուրբ Հոգի, դուն ինծ օգնէ,
Մահուան համար զիս պատրաստէ.
Սրբացուցիչ որ քեզ ունիմ,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիմ։

5 Ով Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի,
Երրորդութիւն ըսքանչելի,
Ես որ կընիքդ ճակտիս ունիմ,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիմ։

Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 190 ԱՆՁՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ




ՅՈՎՀ. ԻԱ. 16

2 Թէ սիրեմ, այսպէս կ'ըլլա՞մ
Ցրտացած եւ անկենդան.
Իր անուան ծանօթ չեղողք
Վատ ինծմէ կ'ըլլա՞ն արդեօք։

3 Ընթերցմունք, քարոզ, աղօթք,
Ինչ ընեմ լի է մեղօք.
Դուք, սրտանց Տէրն սիրողներ,
Ա՞ս է, ո՛հ, վիճակըն ձեր։

4 Տէր, ցըրուէ իմ տարակոյս,
Դու սրբոցդ արեւ ու լոյս,
Լոյս ծագէ գործիդ շնորհաց,
Եթէ այն է ըսկըսուած։

5 Քեզ որչափ սիրած ալ եմ,
Տուր որ աւելի սիրեմ.
Ո՛հ, սիրած չեմ նախ թէ որ,
Ինձ օգնէ, սկըսիմ այսօր։

Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՓԻՐԷԶՃԵԱՆ

## 191 ԽՈՐՈՒԹԻ՛ՒՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ

ՈՎՍ. ԺԱ. 8

1 Խորութի՛ւն ողորմութեան.
Միթէ Տէրն ինծի նըման
Չար մէկուն կրնա՞յ ներել,
Գլուխն մեղաւորաց փըրկել։

2 Աստուծոյ Որդին մերժած,
Խաչն ալ ոտնակոխ ըրած,
Իր շնորհքներն անարգեցի,
Զինքն ստէպ տրտմեցուցի։

3 Բայց Յիսուս է Միջնորդ իմ,
Իր արեանն ապաւինիմ.
Տէրն է սէր, գիտեմ, կը զգամ,
Ալ ինչո՞ւ վախկոտ ըլլամ։

4 Համարձակ անոր երթամ,
Աթոռին առջեւն իյնամ,
Մեղքերուս ներումն առնեմ,
Եւ առատ շընորհք գտնեմ։

5 Տէր, օգնէ ինձ որ զղջամ,
Մեղքերուս վըրայ ողբամ,
Որ մոլար ճամբաս ծըգեմ,
Քեզ դառնամ ու ծառայեմ։



Թարգ. C. H. WHEELER

## 192 ՄԻ ԱՆՑՆԻՐ ԻՆԾՄԷ, ՓՐԿԻՉՍ




ՄԱՏԹ. Ի. 30

1 Մի անցնիր ինծմէ, Փըրկիչըս,
Աղաղակս լըսէ.
Ընդունէ խոնարհ աղերսըս,
Մի անցնիր ինծմէ։
Ով Փըրկիչըս, և այլն։

2 Ո՛հ, իմ անարժանութեանըս
Թողութիւն շնորհէ,
Եւ իմ անհաւատութեանըս
Դուն, ով Տէր, օգնէ։
Ով Փըրկիչըս, և այլն։

3 Քու արժանաւորութեանըդ
Ես կ'ապաւինիմ.
Զիս փրկէ որ գըթութեանըդ
Մեծ շնորհքովն ապրիմ։
Ով Փըրկիչըս, և այլն։

4 Մըխիթարութեանս աղբիւրը,
Բաց ի քէն, ով Տէր,
Թէ երկնից մէջ թէ՛ երկրիս վրայ
Մէկը չեմ ուզեր։
Ով Փըրկիչըս, և այլն։

## 193 ՔԵԶԻ ԿԱՐՕՏ ԵՄ



## 194 ՅՈՅՍ ԱՆՅՈՅՍԻՆ




Ա. ՏԻՄ. Ա. 1, ԿՈՂ. Ա. 27

2 Աստուծմէ օտարացած՝
Մեղքերէս եմ տանջըւած,
Ազատում ես կը փնտռեմ.
Ո՞ւր պիտի Փրկիչ գտնեմ։

3 Շատ օրեր քեզմէ հեռի՝
Զիս փրկել ես ջանացի.
Արդ բոլոր յոյսերս հատած՝
Քեզ կու գամ, ո՛վ «Գառ մորթուած։»

4 Քեզ գտնել է, Տէր, իմ ջանք,
Առ քեզ է իմ հառաչանք.
Քու վէրքերդ մեղքիս դարման,
Գին կենացս՝ շիթ քու արեան։

5 Տէր Յիսուս, յոյս անյոյսին,
Ինծ դարձուր նայուած քու կին.
Այս պահուս մինչ կ'աղօթեմ՝
Ո՛հ թէ քեզ հոգւովս գտնեմ։

## 193 ՔԵԶԻ ԿԱՐՕՏ ԵՄ

ԵԲՐ. Դ. 15, 16

2 Քեզի կարօտ եմ, Տէր,
Եղիր ներկայ.
Երբ մօտ ըլլաս, փորձանքն
Կը թեթեւնայ։
Կարօտ եմ, եւ այլն։

3 Քեզի կարօտ եմ, Տէր,
Շուտով եկուր,
Թէ ոչ՝ իմ կեանքս բոլոր
Կ'անցնի ի զուր։
Կարօտ եմ, եւ այլն։

4 Քեզի կարօտ եմ, Տէր,
Քու կամքդ յայտնէ,
Եւ քու մեծ խոստումներդ
Ինծ կատարէ։
Կարօտ եմ, եւ այլն։

5 Քեզի կարօտ եմ ես,
Տէր բարերար.
Զիս մի թողուր, Յիսուս,
Որբ եւ անճար։
Կարօտ եմ, եւ այլն։

Թարգ. C. C. TRACY

## 195 «ԱՇԽԱՐՀԻ ԼՈՅՍՆ ԵՄ»




ՅՈՎՀ. Ը. 12

2 Կըսեր էի թէ մեղք ունիմ,
Եւ թէ դըժոխք բաժինս է իմ.
Հոն կ'երթայի ես չարաչար,
Վա՜յ եղկելւոյս, չէի ըզգար։

3 Կըսեր էի թէ սէր ես դու,
Կեանք եւ հանգիստ կու տաս մարդու,
Եւ թէ ըզչարն կ'ընես արդար,
Վա՜յ եղկելւոյս, չէի ըզգար։

4 Բայց երբ ըզքեզ բաժինս ըրի,
Իմ սիրտս ու սէրս քեզ տուի,
Հաւատացի, տեսայ, կը զգամ.
Օգնէ ինձ որ ա՛լ չը կուրնամ։

5 Ինծի նըման շատեր ալ կան,
Որ տակաւին կոյր կը մընան.
Բաց աչքերնին որ քեզ տեսնեն,
Եւ նեղ դռնէն շուտ ներս մտնեն։

Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 196 ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ՄԵՌԵԱԼ ԱՇԽԱՐՀԻ

ԳԱՂ. Զ. 14

1 Եթէ աշխարհ է գեղեցիկ,
Ու իր փառքերն են շողշողուն,
Հարըստութիւն, պատիւ, բարիք
Կը զըրաւեն ըզսիրտ մարդուն,

2 Զըւարճութիւնք հեշտացուցիչ
Են ցանկալի հաճոյք մարմնոյն,
Անարգ սէր իբր գոհացուցիչ
Թէ կը խաբեն ըզսիրտ մարդոյն,

3 Թող ինձ ըլլայ մեռած ամէն.
Ոչ գեղեցիկ, ոչ շողշողուն
Բընաւ ինծի չը ներգործեն,
Չի են խաբող ունայնութիւն։

4 Աշխարհ ինծի է խաչ ելած,
Ես աշխարհի՝ բոլորովին.
Ով Սուրբ Հոգի, օգնէ 'բարձանց,
Կենդանացուր զիս երկինքին։

5 Իմ փառքս ըլլայ խաչն Յիսուսի,
Զըւարճութիւնս՝ անոր խօսքերն.
Թող ես ապրիմ միշտ կենդանի՝
Կատարելու իր պատուէրներն։



ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՋՃԵԱՆ

## 197 ՔՐԻՍՏՈՍ ԻՄՍ Է




ՑԱՑՏ. Գ. 20

1 Տէրը դուռըս կը զարնէր՝
Ցայտնելով իր սէրն անհուն,
Ինծ իր մահը կը յիշէր,
Եւ իր քաւչական արիւնն.
«Ես մեղքերդ ներել կ'ուզեմ,
Ով մեռնող հոգի, մտնե՞մ։»

2 Երբ այս շնորհալի խօսքերն
Իմ թըշուառ հոգիս լըսեց,
Իր սիրոյն ուժովը Տէրն
Կարծըր սիրտըս շուտ կոտրեց.
Ցանժամ դուռը լայն բացի,
«Տէր Յիսուս, մտիր,» ըսի։

3 Խօսքն հազիւ բերնէս ելած՝
Ներս մըտաւ. ես ալ իսկոյն
Ոտքերուն առջեւն ինկած՝
Խնդրեցի ողորմութիւն.
Իմ անձէս, գետի նման,
Սէր եւ վիշտ մէկտեղ անցան։

4 Քանի որ անոր ոտքերն
Արցունքովս կը լըւայի,
«Ես ծըրի բոլոր մեղքերդ
Կը ներեմ,» ըսաւ ինծի.
«Հաստատուն դուն գըտնըւէ
Մինչեւ մահ, եւ պըսակուէ։»

5 Այս խօսքով իսկոյն իմ սիրտս
Սուրբ ուրախութեամբ լեցաւ,
Եւ մըրըրկածուփ հոգիս
Փառաւոր հանգիստ մըտաւ։
Հիացայ իր սուրբ սիրոյն,
Երկնաւո՛ր երանութիւն։

6 Երազի պէս սուտ հաճոյք
Ա՛լ անհետ եղան աչքէս.
Մերժեցի բոլոր աշխարհք,
Որ ա՛լ չըզատուիմ Փրկչէս.
Ես անորն եմ, սէր նորա
Արդ իմս է. Ալէլուիա։

ELIAS RIGGS

## 198 ՄԵՂԱՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ




ՍԱՂ. ԾԱ.

1 Աստուած ողորմած, ինծի ողորմէ,
Անհուն զըթութեամբդ իմ մեղքըս քաւէ.
Ամէն յանցանքէս լըւա, զիս մաքրէ,
Եւ իմ մեղքերէս, ով Տէր, զիս սրբէ։

2 Քանզի յանցանքներս յայտնի են ինծի,
Մեղքս ալ միշտ աչքիս առջին կը կայնի.
Մինակ քեզի դէմ ես մեղանչեցի,
Ու մեծ չարութիւն առջեւդ գործեցի։

3 Թէ որ զիս պատժես, դուն կ'արդարանաս
Ու դատաստանովդ անբիծ կը մնաս.
Քանզի յանցանքով մօրմէս յղացայ,
Ծընած ատենս ալ մեղքի մէջ ծընայ։

4 Մաքրէ մշտիկով որ ես սըրբանամ,
Ձիւնէն աւելի ճերմակ ես ըլլամ.
Ամէն մեղքերէս դուն զիս ազատէ,
Մըխիթարութեամբդ ուրախ զիս ըրէ։

5 Ով Տէր, ներսի դիս սուրբ սիրտ ըստեղծէ,
Ինծի նորոգուած հոգի մը շնորհէ.
Զիս քու երեսէդ բընաւ մի ծըգեր,
Ու քու Սուրբ Հոգիդ ինծմէ մի առներ։

6 Քանզի, ով Տէր, դուն զոհեր չես կամիր,
Եւ ողջակէզներ բընաւ չես հաւնիր.
Տէրոջ հաւնած զոհն կոտրած հոգին է,
Խոնարհ սրտին սէրն անոր հաճոյ է։

## 199 ՏԷՐ, ՁԱՅՆԴ ԿԸ ԼՍԵՄ




ՍԱՂ. ԾԱ. 7, 8

2 Տըկար եւ պիղծ կու գամ,
Դու, Տէր, ինծ ոյժ կու տաս,
Եւ, որ ծիւնէն ճերմակ ըլլամ՝
Սուրբ արիւնովդ կը լուաս.
Տէր, քեզի կու գամ,
Հիմա զիս լըւա,
Զիս մաքրէ սուրբ արիւնովդ
Հեղեալ ի Գողգոթա.

3 Զիս, Տէր, վստահութեան,
Յուսոյ եւ հաւատոյ,
Կը հրաւիրես, խաղաղութեան
Եւ կատարեալ սիրոյ.
Տէր, քեզի կու գամ,
Հիմա զիս լըւա,
Զիս մաքրէ սուրբ արիւնովդ
Հեղեալ ի Գողգոթա.

4 Թող յարձակին փորձանք,
Կու տաս ինծ յաղթանակ,
Կու տաս հոս շնորհք եւ ըսփոփանք,
Վերջն ալ փառաց պըսակ.
Տէր, քեզի կու գամ,
Հիմա զիս լըւա,
Զիս մաքրէ սուրբ արիւնովդ
Հեղեալ ի Գողգոթա.

5 Փառք քաւութեան արեան,
Փառք Քրիստոսի շնորհաց,
Մեր կատարեալ արդարութեան
Եւ անվախճան կենաց.
Տէր, քեզի կու գամ,
Հիմա զիս լըւա,
Զիս մաքրէ սուրբ արիւնովդ
Հեղեալ ի Գողգոթա.

Թարգ. ELIAS RIGGS

## 200 «ԵԿԷՔ ԻՆԾԻ»







ՄԱՏԹ. ԺԱ. 28

2 Հոգիս կեանքէս է ձանձրացած՝
Այս չոր ձորին եզերքն.
Սիրտս ներսի դիս է խըռուված՝
Մեղքիս ճնշող բեռէն։ Կու գամ, եւ այլն։

3 Ունայն տեղ ես շատ ջանք ըրի
Փրկել զիս իմ ուժովս.
Յանցանքս սրբել ես չըկրցի.
Բարեգործութիւնովս։ Կու գամ, եւ այլն։

4 Քու սուրբ արիւնըդ թափուեցաւ
Խաչափայտին վըրայ.
Բոլոր իմ մեղքս հոն քաւուեցաւ
Արդար գլխուդ վըրայ։ Կու գամ, եւ այլն։

5 Ո՛րչափ սուրբեր արդէն եկան
Քու տեսութիւնդ վայ'լել
Դուն ես ճամբան որով կրցան
Այն սուրբ հանգիստն մտնել։ Կու գամ, եւ այլն։

Թարգ. Ա. Հ. ՃԷՃԻՋԵԱՆ

## 201 ԿԸ ՀԱՒԱՏԱՄ

ՓԻԼ. Գ. 7-11

1 Ես յաւիտեան հանգիստ կ'ըլլամ
Միայն քու քովդ, Յիսուս.
Քու վէրքերէդ կեանք կը ստանամ,
Փրկիչ, դուն ես ինձ յոյս։
Կը հաւատամ, կը հաւատամ
Որ Յիսուսի մահուամբ,
Եւ իր արեամբ, անգին արեամբ,
Մեղքէ ազատ կ'ըլլամ։

2 Խաչեալ Փրկիչս եւ իմ Աստուածս,
Մեղաց քաւիչ աղբիւր,
Քու արիւնէդ սրսկէ վըրաս,
Պահէ զիս միշտ մաքուր։
Կը հաւատամ, եւ այլն։

3 Լըւա զիս, Տէր, եւ քուկդ ըրէ,
Լըւա, եղիր դուն իմս.
Ոչ թէ միայն ոտքերս մաքրէ,
Ձեռքերս, գլուխս եւ սիրտս։
Կը հաւատամ, եւ այլն։

4 Քու արիւնովդ իմ սիրտս սրբէ,
Մինչ քեզ տեսնեմ աչքով.
Փառաց յուսով աչքերս զոցէ,
Հոգիս լեցուի սիրով։
Կը հաւատամ, կը հաւատամ
Որ Յիսուսի մահուամբ,
Եւ իր արեամբ, անգին արեամբ,
Մեղքէ ազատ կ'ըլլամ։

Թարգ. ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

## 202 ԼՈՅՍ ԲԱՐԵՐԱՐ




ՅՈՎՀ. Ը. 12

1 Լոյս բարերար, տիրող մէգին մէջէն
Դուն զիս ուղղէ.
Մութ է գիշերն, եւ ես հեռու՝ տունէն,
Զիս հոն ուղղէ.
Պահէ քայլերս, խնդիրքըս չէ բընալ
Տեսնել հեռուն. ինծի մէկ քայլ է բաւ։

2 Այսպէս չէի միշտ. ես չէի խնդրեր
Որ զիս ուղղես.
Իմ ելքս ու մուտքս ես կ'ընտրէի, բայց արդ
Դո՛ւն զիս ուղղէ.
Շէն օր սիրող, անվախ եւ անտարբեր,
Կամքս էր հըպարտ. անցեալըս մի՛ յիշեր։

3 Քու աջդ հըզօր օրհնած է ցարդ, եւ դեռ
Զիս պիտ' ուղղէ
Ճայռին, ճահճին վրայէն՝ խոր ստուերներ
Մինչեւ քաշուին,
Եւ հետ այգուն ժպտին իմ սիրելիք,
Զորս կորուսեր էի ես մէկ պահիկ։

Թարգ. Ց. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

## 203 ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ




ԽՍ. ԽԵ. 22

1 Հաւատքս քեզ կը նայի,
Ով Գառն Գողգոթայի.
Փրկիչ, իմին
Ձայնիս մըտիկ ըրէ.
Իմ մեղքըս, Տէր, քաւէ.
Ըլլամ ես յայմհետէ
Միայն քուկին։

2 Թող քու շընորհքդ անհուն
Ընէ սիրտս հաստատուն,
Նախանձս վառէ.
Մահուամբդ զիս կը փրկես.
Ուստի բոցի մը պէս
Իմ սէրըս սաստկապէս
Վառիլ կ'արժէ։

3 Այս մութ ճամբուս վախճանն
Մինչեւ աչքերս տեսնան՝
Յառաջ տար զիս.
Խաւարըս լոյս ըրէ,
Աչքիս արցունքն սրբէ.
Եւ մի՛ թողուր քեզմէ
Զատուի հոգիս։

4 Կեանքիս երազն անցած՝
Երբ մահը իմ վըրաս
Կը յարձակի,
Օրհնեալ Փրկիչ, սիրով
Ամէն վախ յաղթելով՝
Վեր առ զիս ապահով,
Ուր անձս այրի։

## 204 ԵՐԲ ՀԱՒԱՏՔՈՎ ԿԱՐՈՂ ԸԼԼԱՄ



## 205 ԻՆՉՊԷՍ ՈՐ ԵՄ




ՅՈՎՀ. Ա. 29, ԵՍ. Ա. 18

2 Ինչպէս որ եմ, չըսպասելով
Հոգիս սրբել պարապ յոյսով,
Լոկ արիւնիդ վստահելով,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

3 Ինչպէս որ եմ, շատ տանջըւած,
Ու բազմաթիւ մեղքով պատած,
Ահղին անդին միշտ տատանած,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

4 Ինչպէս որ եմ, դուն, Տէր, գիտես,
Բոլոր մեղքերըս կը ջնջես,
Աղտոտ հոգիս դուն կը սրբես.
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

5 Ինչպէս որ եմ, այնպէս կու գամ.
Շնորհէ որ միշտ քու քովդ ըլլամ,
Ու յաւիտեան երեսդ տեսնամ.
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

## 204 ԵՐԲ ԶԱԻԱՏՔՈՎ ԿԱՐՈՂ ԸԼԼԱՄ

Բ ՊԵՏ. Ա. 10

2 Թող դէմս ելլեն մեծ զօրութեամբ
Աշխարհքն ու Սատանան.
Կրնամ նայիլ հանդարտութեամբ
Անոնց կատաղութեան։

3 Թէեւ իմ վրաս անթիւ հոգեր՝
Փոթորիկի նման,
Եւ կամ ցաւեր ու դառն վիշտեր
Ցարձակելու ըլլան,

4 Երբէք պիտի չը յաղթըւիմ,
Այլ ամէնուն յաղթեմ.
Միայն թէ Հայրենիքս հասնիմ,
Փրկչիս երեսն տեսնեմ։

5 Հոգւոյս հանգիստը հոն պիտի
Ծովու նըման ըլլայ,
Եւ ալ վշտաց ալիք չանցնի
Խաղաղ սրտիս վըրայ։

Թարգ. ELIAS RIGGS

## 206 ՃԱՄԲԱՍ ԴՈՒՆ, ՏԷՐ, ԸՆՏՐԷ




ՅՈԲ. ԻԴ. 10, ՄԱՏԹ. ԻՁ. 39

1 Ճամբաս, դուն, Տէր, ընտրէ,
Թող ինծ խաւար ըլլայ.
Ջեռքովդ առաջնորդէ,
Ընտրէ ինծի ճամբայ։
Ես չեմ համարձակիր
Բընաւ վիճակս ընտրել.
Դուն կառավարս եղիր,
Սորվիմ շիտակ քալել։

2 Խնդրած արքայութիւնս
Է քուկըդ, ով Տէր իմ.
Քուկդ ալ ըլլայ շաւիղս,
Թէ ոչ՝ կը մոլորիմ։
Դուն որոշէ վիճակս
Անհուն իմաստութեամբ.
Առ եւ լեցուր բաժակս
Վիշտով կամ վայելմամբ։

3 Ընտրէ բարեկամներս,
Ախտերս, առողջութիւնս,
Փորձանքըս ու հոգերս,
Եւ կամ հանգստութիւնս։
Ինծի խոստմունք տըւիր
Որ ազատես չարէն.
Տէր, առաջնորդս եղիր,
Իմաստութիւնս։ Ամէն։

Թարգ. ELIAS RIGGS

## 207 ՏԷՐ, ԻՆՉՊԷՍ ՈՐ Կ'ՈՒԶԵՍ




ՄԱՐԿ. ԺԴ. 26

1 Տէր, ինչպէս որ կ'ուզես.
Քու կամքըդ իմս ընեմ.
Սիրոյ ձեռացըդ մէջ
Ամէն բան կը յանձնեմ.
Առաջնորդէ ինծի,
Ընտրէ ինծի ճամբայ.
Թող միշտ սրտանց երգեմ,
«Քու կամքըդ, Տէր, ըլլայ»

2 Տէր, ինչպէս որ կ'ուզես.
Թէ տաս ուրախութիւն,
Թէ լաւագոյն սեպես
Վիշտ, ցաւ ու նեղութիւն,
Եւ արտասուաց մէջէն
Թէ աստղըս երեւնայ,
Թող յոյսըս չըմարի.
«Քու կամքըդ, Տէր, ըլլայ»

3 Տէր, ինչպէս որ կ'ուզես.
Ինչ որ ըլլայ վիճակս,
Զիս քեզ նըման ընես,
Ըլլաս իմ օրինակս.
Երկրիս վրայ դուն լացիր,
Ծառադ ալ հոս թող լայ,
Միայն թէ հետս եղիր.
«Քու կամքըդ, Տէր, ըլլայ»

4 Տէր, ինչպէս որ կ'ուզես.
Դուն հետս ըլլաս. իրաւ
Ինչ որ ալ որոշես՝
Ինծի ամէնն է լաւ,
Ամէն բան ապահով՝
Ներկայ եւ ապագայ.
Երգեմ միշտ ցնծումով,
«Քու կամքըդ, Տէր, ըլլայ»

Թարգ. ELIAS RIGGS

## 208 ԻՄ ՏԷՐՍ ԻՆՁ Կ'ԱՌԱՋՆՈՐԴԷ



ՍԱՂ. ԻԳ. 2, 3

1 Իմ Տէրըս ինծ կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը զիս կ'ուղղէ.
Ուր որ ըլլամ, ինչ որ ընեմ,
Առաջնորդող ձեռքն կը տեսնեմ։
Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը զիս կ'ուղղէ.
Ես աշակերտ միշտ զանըլիմ,
Եւ հետեւող հաւատարիմ։

2 Թէ անապատը թափառիմ,
Կամ Եդեմի շուքէն անցնիմ,
Լոյս կամ խաւար թէ զիս պատէ,
Դարձեալ Աստուած կ'առաջնորդէ։
Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը զիս կ'ուղղէ.
Ես աշակերտ միշտ զանըլիմ,
Եւ հետեւող հաւատարիմ։

3 Տէր, ձեռքդ ձեռքիս մէջ ես բռնեմ,
Այսուհետեւ չը տրտընջեմ,
Գոհ եմ, վիճակըս ինչ որ է,
Զի Տէրըս ինծ կ'առաջնորդէ։
Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը զիս կ'ուղղէ.
Ես աշակերտ միշտ զանըլիմ,
Եւ հետեւող հաւատարիմ։

4 Երբ հոս ընթացքըս կատարեմ,
Շնորհքովդ երբ աշխարհիս յաղթեմ,
Մահուան ցուրտ գետն զիս չըխռովէ.
Հոն ալ Տէրն ինծ կ'առաջնորդէ։
Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը զիս կ'ուղղէ.
Ես աշակերտ միշտ զանըլիմ,
Եւ հետեւող հաւատարիմ։



Թարգ. ELIAS RIGGS

## 209 ՓՐԿՉԻՍ ԲԱԶՈՒԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ



ՍՈՓ. Գ. 17

1 «Փրկչիս բազուկներուն մէջ
Պիտի հանգչի հոգիս,
Անոր սիրոյն պրօշակը
Պիտ' ըլլայ հովանիս։»
Հրեշտակային երգի պէս
Ձայն մը յերկնից կու գայ,
Ինծ ամենայն վշտաց մէջ
Քաղցրը հրճուանք կու տայ։
Փրկչիս բազուկներուն մէջ, և այլն։

2 Հոն աշխարհիս հոգերը
Զիս չեն կրնար նեղել.
Սատանային հրապոյրքը
Ա՛լ չեն կրնար խաբել։
Հոս քիչ մ'ալ աշխատանք կայ,
Քիչ մըն ալ փորձութիւնք,
Քիչ մըն ալ ցաւ եւ վիշտ կայ,
Ու դեռ քիչ մ'ալ արցունք։
Փրկչիս բազուկներուն մէջ, և այլն։

3 Յիսուս, քաղցր ապաստանըս,
Հոգւոյս համար մեռաւ.
Ա՛լ այս անշարժ վէմին վրայ
Յոյսըս հաստատուեցաւ։
Անորը հոս կը սպասեմ ես
Մինչեւ գիշերն անցնի,
Եւ ոսկեղէն եզրին վրայ
Այգ փառաւոր ծագի։
Փրկչիս բազուկներուն մէջ, և այլն։

Թարգ. ELIAS RIGGS

## 210 ՀԱՅՐ ԻՄ, ՔՈՒ ԿԱՄՔԴ ԹՈՂ ԸԼԼԱՅ




ՄԱՏԹ. Զ. 10

2 Երբեք սիրով լեցուած զաւակն
Իր հօրը դէմ տրտունջ կ'ընէ՞.
Ըստեղծողիս հետ թող իմ սիրտս
Հըլու զաւկի պէս միշտ գործէ.
Թ՚էեւ արեւ, անձրեւ ինձ գայ,
Հայր իմ, քու կամքըդ թող ըլլայ։

3 Ինձ որոշուած կենաց վիճակն
Ամենալաւ կ'ուզեմ սեպել,
Եւ երբ իյնայ վրաս շուք մահուան,
Ուրախութեամբ սա երգն ըսել.
Թ՚էեւ արեւ, անձրեւ ինձ գայ,
Հայր իմ, քու կամքըդ թող ըլլայ։

Թարգ. *Miss C. E. BUSH*

## 211 «ՔՈՒ ՀՈԳԴ ԻՄ ՎՐԱՍ ԶԳԷ»



## 212 ՏԷՐՆ Է ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴ




ՍԱՂ. ԽԸ. 14

2 Ինչպէս կը խնամէ ոչխարներն իր հօտին,
Ինք կ'առաջնորդէ մեզ կանանչ արօտին.
Խոպան դաշտերուն մէջ գառներն կը զրկէ,
Որոգայթներէ մոլորեալն կը փրկէ։

3 Երբ ամպ մեզ պատէ, մեր Աստուածն է մեր լոյս,
Մրրիկ թէ մեր շուրջ գոռայ, Տէրն է մեր յոյս.
Թէեւ պարտասած՝ մեր ճամբուն մէջ բերկրինք,
Զի Տէրն առաջնորդ է, մեր տունն է երկինք։

Թարգ. Ա. Խ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

---

## 211 «ՔՈՒ ՀՈԳԴ ԻՄ ՎՐԱՍ ԶԳԷ»

ՍԱՂ. ԾԵ. 22

1 Ի՜նչ քաղցր է, Տէր, ապաւինել
Քոյին մեծ զօրութեան,
Առաջնորդող բազուկդ տեսնել,
Ըզգալ լի ներութեան։

2 Դուն, Տէր, կ'ուզես որ քեզ յայտնեմ
Բոլոր ցաւերս, վիշտերս,
Որ վրադ վստահութեամբ, ծըգեմ
Ամէն օրուան հոգերս։

3 Կ'ուզես որ քեզ միայն նայիմ,
Խընամքդ խնդրեմ սրտով,
Ներլիչ վախերըս փարատեմ
Խոնարհ, ջերմ աղօթքով։

4 Արդ, ով իմ սիրտս, ինչո՞ւ խռովիս
Գալիք չար վախերէ,
Մինչդեռ Փրկչին հրաւէրն ունիս,
«Քու հոգդ իմ վրաս ծըգէ։»



Թարգ. Ն. Ս. Թ. ՆԱՀԻԿԵԱՆ

## 213 ՅԻՍՈՒՍ ՀԱՍՏԱՏ ՀԻՄ



ԽՍ. Խգ. 1-7

1 Ո՛րքան հաստատուն է հիմն ձեր հաւատքին՝
Դրրուած Աստուծոյ խօսքին մէջ սրրբազան.
Անսուտ են անոր խոստումներն թանկագին,
Ձեզի՝ որ ընտրած էք Յիսուսն ապաստան։

2 «Երբեք մի՛ վախնար, բընաւ մի՛ վըհատիր,
Քանզի ես Աստուածդ եմ, պատրաստ քեզ նեցուկ.
Միշտ հետըդ կ'ըլլամ, խոստումներս չեն պատիր.
Ասպար, զօրավիգ է հըզօր իմ բազուկ։»

3 «Խորունկ ջուրերէ երբ անցնիս սըրտաթունդ,
Գետեր վիշտերու չի պիտի կոխեն քեզ.
Ներկայութիւնովս կ'օրհնեմ միշտ փորձութիւնդ՝
Սըրբագործելով թախիծներդ հոգեկէզ։»

4 «Հոգին, որ կ'ընտրէ զիս իրեն ապաւէն,
Բընաւ չեմ մատներ ձեռքը իր ոսոխին.
Եթէ յարձակի դըժոխքն ալ համօրէն,
Բընաւ, ո՛հ, բընաւ չեմ լըքեր այն հոգին։»

Թարգ. Գ. Ց. ԿԻՒԼԵԱՆ

## 214 «ԵՍ ՁԵԶ ԲԱՐԵԿԱՄ ԱՆՈՒԱՆԵՑԻ»




ՅՈՎՀ. ԺԵ. 15

1 Երգէ, ով հոգիս, օրհներգ մը անոր,
Որ կ'առաջնորդէ իմ կեանքս յարաժամ.
Անվախ կը մտնեմ ամէն ճամբայ նոր,
Քանզի Տէր Յիսուս է ինծ բարեկամ։

2 Լոյսի, ըստուերի մէջ պիտի երգեմ,
Վըստահ շեշտերով բերկրիմ ու ցընծամ.
Կարող չէ համնիլ ինծ չարիք դըժխեմ,
Քանզի Տէր Յիսուս է ինծ բարեկամ։

3 Թող գիս ապաշարեն վիշտեր դըժընդակ,
Վըրաս յարձակի կասկած ալ տարտամ.
Փոյթ չէ, կը տանի հաւատքս յաղթանակ,
Քանզի Տէր Յիսուս է ինծ բարեկամ։

4 Մահն ալ իմ հոգիս բաժնել չի կըրնար
Անկէ որ տըւաւ ինծ կեանք անթառամ.
Մէկղի կը գլորի իմ տապանաքար,
Քանզի Տէր Յիսուս է ինծ բարեկամ։

Թարգ. Գ. Յ. ԿԻՒԼԵԱՆ

# 215 ՏԷՐ, ԻՆԾԻ ԱՌԱՋՆՈՐԴԷ



# 216 ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԱՌ ՏԷՐ




ՍԱՂ. ԻԷ. 1

2 Քեզ վստահ, միակ իմ լոյս
Գիշերոյ մըթին ժամուս.
Թէ՛ առողջ եւ թէ՛ հիւանդ,
Թէ՛ հարուստ եւ թէ՛ տընանկ,
Թէ՛ տըխուր եւ թէ՛ ուրախ,
Յարաժամ ի քեզ վստահ։
Երջանիկ կ՚ըլլամ միշտ ես
Երբ վստահ եմ լոկ ի քեզ։

3 Յոյս իմ է խաչիդ ատեանն,
Եւ հաւատքս ի շնորհ միայն.
Լոկ ի քեզ կ՚ապաւինիմ,
Քեզ, Յիսուս, քաջ Փրկիչ իմ,
Թէ՛ ի կեանս եւ թէ՛ ի մահ
Միշտ, ո՛հ, միշտ ի քեզ վստահ։
Երջանիկ կ՚ըլլամ միշտ ես
Երբ վստահ եմ լոկ ի քեզ։

Թարգ. Ա. Ս. ՏԱՐԱԳՃԵԱՆ

---

# 215 ՏԷՐ, ԻՆԾԻ ԱՌԱՋՆՈՐԴԷ

ՍԱՂ. ԻԵ. 4, 5

2 Դուն հոգւոյս լեր ապաստան,
Երբ ցաւոց ալիք զոռան.
Ապահով եմ, Տէր, քու քով,
Կեանք անդորր ունիմ քեզմով։
Տէր իմ, Տէր իմ, և այլն։

3 Տէր Յիսուս, ուղղիչ կենաց,
Զիս հասցուր երկիրն փառաց.
Հոն երգեմ երգ յաղթութեան,
Եւ գովեմ քեզ յաւիտեան։
Տէր իմ, Տէր իմ, և այլն։

## 217 ՏԷՐՈՋԸ ԹԵՒԵՐՈՒՆ ՏԱԿ







ՍԱՂ. ՂԱ. 1, 4

2 Այս աշխարհի կեանքի շրջան
Լի է վախով ամէն վայրկեան.
Թեւերուդ տակ միայն, ով Տէր,
Կրնամ ապրիլ ես անվեհեր։

3 Արիւն, քրտինք, հոսին ճակտէս,
Կը հալածուիմ ոսոխներէս,
Կ'ուզեմ գտնել հանգիստ անձիս.
Թեւերուդ տակ, խնդրեմ, առ զիս։

4 Գողգոթայի սարին վըրան
Լացող աչքերս թող քեզ տեսնան,
Տէր իմ, խաչին շուքովը ես
Թող պաշտպանուիմ իմ մեղքերէս։

5 Տէր, տարածէ թեւերդ իմ վրան,
Անոնք ըլլան թող ինծ վըրան.
Մինչեւ վերջին րոպէն կեանքիս
Թեւերուդ տակ հանգչի հոգիս։

Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## 218 ՔՈՒ ԿԱՄՔԴ ԸԼԼԱՅ




ՄԱՏԹ. ԻԶ. 42

1 «Քու կամքդ ըլլայ». ‖ արազընթաց
Կեանքիս հոսանք ժայ | ռուտ ա | փանց |
| Մէջ թէ հոսէ, կ'երգեմ սրտանց, |
Քու կամքդ ըլ | լայ։ ‖

2 «Քու կամքդ ըլլայ». ‖ զըւարթ արեւ
Եթէ փայլի գըլ | խուս վե | րեւ, |
Ցնծմամբ կ'երգեմ ես արդարեւ,
| Քու կամքդ ըլ | լայ։ ‖

3 «Քու կամքդ ըլլայ». ‖ թէեւ ամպոտ
Ըլլան երկինք, ճամ | բան ա | ղօտ, |
Պիտի կրկնեմ շեշտով նուաղկոտ, |
| Քու կամքդ ըլլայ։ ‖

## 219 ՄԻԱՅՆ ՓՐԿՉՈՎ



ՍԱՂ. ԿԱ. 1-4

1 Ինծմէ բարձրագոյն սուրբ Վէմին հաւատքի՝
Հոգիս իր ցաւով, վիշտերով կը թռչի.
Թէպէտ մեղաւոր, սակայն քուկդ եմ, Տէր իմ,
Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ'ապրիմ։
Փրկիչ իմ, քեզմով, Փրկիչ իմ, քեզմով,
Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ'ապրիմ։

2 Մենիկ ժամերուս, տանջանքի դառն ատեն,
Երբոր փորձութիւնք խեղճ հոգւոյս շուրջն պատեն,
Կեանքի ալէծուփ ծովուն մէջ երբ թաղուիմ,
Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ'ապրիմ։
Փրկիչ իմ, քեզմով, Փրկիչ իմ, քեզմով,
Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ'ապրիմ։

3 Շատ հեղ, զու մարտի մէջ ճնշեալ ոսոխէն,
Քեզի դիմելով ես գտայ ապաւէն.
Եւ որչափ յաճախ, ա՜հ, սուրբ Վէմ հաւատքիս,
Քեզմով կորուստէ պաշտպանուած է հոգիս։
Փրկիչ իմ, քեզմով, Փրկիչ իմ, քեզմով,
Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ'ապրիմ։

Թարգ. Ց. Ս. ՓԱՇԿԵԱՆ

## 220 ՅԻՍՈՒՍ ԿԱՐՈՂ Է ՓՐԿԵԼՈՒ




ԵԲՐ. Է. 25

2 Անյոյս, անլոյս, մեղսազըրաւ
Հոգիս վիճակէ աննախանձ
Ի լոյս հանեց, եւ զայն ըրաւ
Ժառանգ թագուց եւ պալատանց։
Այո, նա կարող է, և այլն։

3 Սիրոյն բարձունք, ոհ, ի՜նչ բարձր են,
Շնորհաց խորերն՝ ի՜նչ անյատակ.
Ա՜հ, ծըծէի ես իր սէրէն
Եւ ապրէի իր թեւոց տակ։
Այո, նա կարող է, և այլն։



Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՅԵԱՆ

## 221 ԿԱ՞Յ ԵՐԲԷՔ ԸՆՏԻՐ ՀՈՎԻՒ ՄԸ




ՅՈՎՀ. Ժ. 11, 15, ԺԵ. 13

1 Կա՞յ երբէք ընտիր հովիւ մը
Սիրելի Փրկչին Նըման.
Կա՞յ անոր Նըման հըզօր մը
Որ ըլլայ մեզի պաշտպան.
Գըթութիւնն անոր անհուն է,
Սէրն անոր՝ Աստուածային.
Մեր խորհուրդը, մեր երազը
Չեն հասնիր անոր չափին։

2 Քան զովկիան վըսեմ ու լայն է
Աստուծոյ ողորմութիւնն.
Իր արդարութեան մէջ գութ կայ,
Պատուական է փրկութիւնն։
Դատապարտեալին շընորհք կայ,
Փրկեալին ալ օգնութիւն.
Մեռեալին, ո՛հ, յոյս եւ կեանք կայ,
Այն է Յիսուսի արիւնն։

3 Յաւիտեան մեր Հօրը գութը
Կը մընայ անչափելի.
Եւ անհուն էակին սիրտն է
Ակ սիրոյ ըսքանչելի։
Ո՞ւր էր որ անկեղծ սրտով մը
Մեր Տէրոջը յուսայինք,
Անպաղար անոր լոյսին մէջ
Բերկրութեամբ միշտ քալէինք։

Թարգ. C. C. TRACY

# 222 ԳԵՐԱԶԱՆՑ Է ՍԷՐ




ԵՓԵՍ. Գ. 18, 19

2 Քան խօսք ճարտար է գերազանց քու սէր,
Յիսուս Փրկիչ իմ, բայց խեղճիս շրթներ
Պիտ' ամբարշտաց պատմեն, հեռու կամ մօտ,
Քու սէր, որ կը վանէ երկիւղ, ամօթ,
Եւ սէր կ'առթէ։

3 Քան գոյութիւն է գերազանց քու սէր,
Յիսուս Փրկիչըս, բայց իմ սիրտըս դեռ
Կ'ուզէ երգել այն սէր, զեղուն, ազատ,
Որ ապըստամբս ըրաւ մի հարազատ
Որդի երկնից։

4 Սիրոյդ զեղմունքն հոս չեմ կարող թէպէտ
Գիտնալ, պատմել եւ զայն երգել յաւէտ,
Կընամ սակայն սիրոյդ ակին մաքուր
Մօտը բերել իմ խեղճ սիրտըս թափուր,
Որ զայն լեցնես։

5 Երբ քաղցըր դէմքն տեսնեմ գըթած Փըրկչին,
Ծունըր դըրած անոր գահուն առջին,
Ո՛հ, յայնժամ իմ հոգիս ցնծմամբ զեղուն՝
Անոր խորքին, հըզօր, վըսեմ, բեղուն
Սէրն պիտ' երգէ։



Թարգ. Ց. Թ. ԳԱՅԱՃԱՆ

## 223 ՍԷՐ ՔՐԻՍՏՈՍԻ




ՀՌՈՎՄ. Ե. 7-9

2 Պէտք է որ ես զայն շատ սիրեմ,
Զի Նա այնչափ նախ զիս սիրեց.
Պէտք է անոր սիրտս նըւիրեմ,
Քանզի Նա զինքն ինծի շնորհեց։

3 Հոգւոյս համար նա զինք զոհեց,
Որպէս զի ես արդարանամ.
Մեղքիս համար մահ ճաշակեց,
Որպէս զի ես անմահանամ։

4 Արդեօք ո՞ր մարդ՝ կամ ո՞ր հրեշտակ,
Փրկչիս նըման ինձ սէր ցուցուց.
Կըրեց վասն իմ վիշտ դըժընդակ,
Եւ փրկութեան ինձ յոյս թողուց։

5 Տէր, քու սիրովդ իմ սիրտս վառէ,
Որ քեզ միայն սրտանց սիրեմ.
Եղբարցս համար ջիս սէր ազդէ,
Որ սէրս սիրոյդ նըմանցունեմ։

## 224 ՍԷՐ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ

ՀՌՈՎՄ. Ը. 35-39

1 Ով Տէր Յիսուս, քեզ կը սիրեմ,
Քանզի քու սէրդ ինձ շատ քաղցր է.
Ես բարձրաձայն պիտի երգեմ,
Թող զայն բոլոր աշխարհ լըսէ։

2 Այո, քաղցր ես հոգւոյս իմին,
Յոյս, փրկութիւն, կեանք ես ինծի.
Անարգ բան է զոհարն անգին,
Ոսկին ալ ինձ չնչին փոշի։

3 Քու մեծ շընորհքդ սրտիս վրայ, Տէր,
Միշտ կեանք տըւող հոսք կը բուրէ.
Կը բըժշկէ ամէն ցաւեր,
Բոլոր իմ անձս կը նորոգէ։

4 Ոչ նեղութիւն, ոչ հալածանք
Զիս քու սէրէդ կրնան զատել.
Ու ոչ ալ մահ եւ ոչ ալ կեանք
Զիս քու անձէդ կրնան բաժնել։

5 Պիտի պատմեմ սէրն մեծ Փրկչիս,
Մինչեւ վերջին իմ շունչս հատնի.
Յայնժամ, օրհնեալ Փրկիչ, հոգիս
Քու սուրբ գրկիդ մէջ թող հանգչի։

## 225 ՄԻՇՏ ՁՕՆՈՒԱԾ ՔՈՒ ՍՈՒՐԲ ԱՆՈՒԱՆ




ՀՌՈՎՄ. ԺԲ. 1

1 Առ, Տէր, կեանքս, ըլլայ թող ան
Միշտ ձօնուած քու սուրբ անուան.
Առ ձեռքերս, եւ թող շարժին
Միշտ հըլու՝ սիրոյդ ուժին.
Առ ոտքերս, եւ թող քալեն
Միշտ ուղիղ՝ քու սուրբ ճամբէն.
Առ իմ ձայնս, եւ թող, ով Տէրս,
Քեզ միայն ուղղեմ երգերս։

2 Առ շրթներս, անոնց վըրայ
Սուրբ պատգամդ թող միշտ թրթռայ.
Առ ինչքերս, տիրէ զանձիս,
Ձեմ պահեր բան մը անձիս.
Առ իմ խելքս, գործէ թող ան
Սուրբ կամքիդ միշտ համաձայն.
Ա՛ռ ժամերս, օրերս, որ յար
Քու սիրովդ սահին իսպառ։

3 Առ իմ կամքս, տիրէ անոր
Արդ, ով Տէր, կամքովդ հըզօր.
Առ նաեւ իմ սիրտըս չար,
Ձայն ըրէ հոգւոյդ տաճար.
Սէրս ալ առ, անոր զանձին
Դու եղիր տէրն առանձին.
Առ անձս ալ, թող այն, ով Հայր,
Միշտ ապրի լոկ քեզ համար։

Թարգ. Յ. Թ. ԴԱՑԱԽԵԱՆ

## 226 ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ







ՍԱՂ. ԼԶ. 7-9

2 Քու սէրդ այնչափ քաղցր է
Որ բանտն պալատ կ'ըլլայ.
Ուր ես ներկայ՝ դըրախտն հոն է,
Ուր չես՝ դըժոխք կ'ըլլայ։

3 Հրեշտակք սուրբ անդադար
Թող քընարներ զարնեն.
Երկինք հոն չը կրնար ըլլալ,
Թէ որ քեզ չը տեսնեն։

4 Եւ տիեզերքն ամէն
Ինծի իրաւցընէ
Հաճոյք մը տալ կարող ոչ են,
Թէ հեռանաս ինծմէ։

5 Սիրոյ ծովն, անսահման,
Ուրախութեամբ լեցուն,
Դու ես, Տէր, եւ սրտիս շրջան,
Հոգւոյս ցնծմանց կեդրոն։

## 227 ԿԱՏԱՐԵԱԼ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ




ԽՍ. ԻԶ. 3

2 «Խաղաղութի՞ւն, երջանկութիւն անբաւ.»
Ինչ որ ըլլայ, կամքն Յիսուսի է լաւ։

3 «Խաղաղութի՞ւն». փորձա՞նք կամ բիւրաւոր.
Գիրկն Յիսուսի պիտի հանգչինք անդորր։

4 «Խաղաղութի՞ւն». զատուա՞ծ ընկերներէ.
Զանոնք եւ մեզ մեր Տէրն կը պահպանէ։

5 «Խաղաղութի՞ւն». թող վաղը մութ ըլլայ.
Յիսուս կեցած է աթոռին վըրայ։

6 «Խաղաղութի՞ւն». թող գայ կենաց վախճան.
Մահուան վըրայ Յիսուս է յաղթական։

7 Հերի՛ք է. վիշտ եւ փորձութիւն կ'անցնի,
Պատրաստ է մեզ խաղաղութիւնն երկնի։

Թարգ. C. C. TRACY

## 228 ՓՐԿԻՉՍ ՄԻՇՏ Է ՄՕՏ




ԵԼԻՑ ԼԳ. 14, ՍԱՂ. ԼԴ. 7

2 Ալ չըր վախնամ, ու չըր թուլանամ,
Զի արթուն ըլլամ, թէ՛ քընանամ,
Հանգիստ վայ՛լեմ ես՛ կամ թէ թափառիմ,
Քաղցրը Փրկիչըս միշտ քովս ունիմ։
Երկնաւոր սուրբ հրեշտակներ, և այլն։

3 Հոս վայելածս է վայրկենական,
Բայց երկնաւոր վայելք կը մընան.
Հոս հաւատքով թող Փրկչիս հետ քալեմ,
Հոն յաւիտեան անոր սէրն վայելեմ։
Երկնաւոր սուրբ հրեշտակներ, և այլն։



Թարգ. ELIAS RIGGS

## 229 ՕՐՀՆԵԱԼ ԵՐԱՇԽԻՔ

Բ ՏԻՄ. Ա. 12






Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՆԵԱՆ

## 230 ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ




Փիլ. Դ. 4

1 Երջանիկ անոնք են
Որ Փրկչին կը լսեն,
Եւ իրենց գանձը վերն դիզեր են.
Լեզուներ կարող չեն
Սրբոց փառքը պատմել,
Որ Փրկչին սիրոյն համն առեր են։

2 Իմ կենացս օրերն
Ես պիտի օրհնեմ Տէրն.
Փրկութիւնը իրմով է միայն.
Ամէնքն ալ հաւատան
Եւ հասնին փրկութեան,
Մէկ գնծում ու մէկ երգ ունենան։

## 231 ՍՈՒՐԲ ԸԼԼԱԼՈՒ ԲԱՂՁԱՆՔ



## 232 ԵՐԱՆԵԼԻ ՕՐ




ԵՍ. ԽԴ. 5

2 Իմ սիրտս բոլոր անոր կու տամ
Որ իմ սիրոյս է արժանի.
Իր սեղանին երբ մօտենամ,
Ուրախ երգով իր տունն լեցուի։
Երանելի այն օրն ըսուի, և այլն։

3 Ահա Փրկչիս ես ուխտ ըրի,
Տէրոջն եմ ես ու իմս է ան.
Զիս ան կանչեց, անոր գացի
Ես՝ ճանչնալով ձայնն պատուական։
Երանելի այն օրն ըսուի, և այլն։

4 Փրկչիդ վըրայ յոյս դընելով,
Խռովեալ հոգիս, հանգիստ ըլլաս.
Ամէն բարիք վայ'լես իրմով,
Եւ իր քովէն չըհեռանաս։
Երանելի այն օրն ըսուի, և այլն։

5 Իմ ուխտըս, ով Փրկիչ Յիսուս,
Ամէն օր նորոգեմ պիտի.
Ու երբ հասնիմ մահուան ժամուս,
Երգեմ պիտի «Ուխտ սիրելի։»
Երանելի այն օրն ըսուի, և այլն։

Թարգ. I. F. PETTIBONE

## 231 ՍՈՒՐԲ ԸԼԼԱԼՈՒ ԲԱՂՁԱՆՔ

Ա ՊԵՏ. Ա. 15, 16

2 Ով Սուրբ Աստուած, դուն զիս սրբէ
Ամէն տեսակ մեղքէ.
Անմահ հոգիս դուն ազատէ
Մեղաց պատճառներէ։

3 Դուն իմ սրտիս նոր սէր ազդէ,
Որ սուրբ ըլլալ ջանամ.
Եւ իմ հոգիս լուսաւորէ,
Որ սուրբ օրէնքդ ճանչնամ։

4 Իմ սիրտըս, Տէր, քեզի դարձուր,
Որ միշտ մեղքէն փախչիմ.
Դուն Սուրբ Հոգւովդ ինծի շնորհք տուր,
Որ քեզ միայն յարիմ։

5 Ես կը բաղձամ սուրբ ըլլալու,
Որպէս զի դրախտ մտնեմ.
Ես կը ցանկամ սուրբ ըլլալու,
Որպէս զի քեզ տեսնեմ։

## 233 ԲԱՐԻ Է ԻՄ ՀՈԳԻՈՅՍ




ՍԱՂ. ՃԺ. 18, 22

2 Թէեւ փորձութիւնք ու դեւեր զիս պատեն,
Յիշեմ թէ գըթած Տէրն սիրուն
Իմ թշուառութիւնս նկատած է արդէն,
Ինձ համար թափած է իր արիւն։
Բարի է, և այլն։

3 Մեղքերս, ո՜հ, խորհուրդ մեծ եւ ըսքանչելի,
Մեղքերս, ո՛չ մասամբ այլ լըրիւ,
Խաչին վրայ գամուած, ոչ եւս ինձ կըրելի.
Փառք Տէրոջս, այժմ եւ միշտ փառք, պատիւ։
Բարի է, և այլն։

4 Տէր, շուտ զայ այն օրն երբ ցնդին սեւ ամպեր,
Հաւատքըն ըլլայ տեսութիւն.
Երբ փողը հընչէ, եւ իջնէ փառաց Տէրն,
Այս նաեւ բարի է իմ հոգւոյս։
Բարի է, և այլն։



Թարգ. Ս. Ե. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

# 234 ՍՈՒՐԲ ԸԼԼԱՄ







Ա. ՅՈՎՀ. Գ. 3

1 Ո՛հ թէ սուրբ ըլլամ ես,
Միշտ ա՛լ աւելի
Սիրտս, հոգիս եւ միտքըս
Քեզ հընազանդի.
Օրէ օր պարտքերըս
Աւելի սիրով
Կատարեմ, ով Տէրըս,
Քու Հոգւոյդ շնորհքով։

2 Քու Հոգիդ, ով Հայրըս,
Անդադար ինծ տուր,
Որ մաքուր ընէ զիս,
Աւելի մաքուր.
Եւ իմ հառաչանքըս
Դէպ ի վեր երթայ,
Միշտ իմ պաղատանքըս
Աստուծոյս ըլլայ։

3 Երբ շատնան վիշտերըս,
Վախս ու տարակոյս,
Ո՛հ, յանձնեմ հոգերըս
Միշտ իմ Աստուծոյս.
Ինք բոլոր խաւարըս
Լոյս պիտի ընէ,
Ինչ որ հիմա մութ է
Պիտի բացատրէ։

4 Բարձրը եւ ա՛լ բարձրը
Գիշերէս թռչիմ,
Մինչ երկնից սուրբ լոյսը
Բերկրութեամբ հասնիմ.
Թող ըլլայ մաղթանքըս
Քեզ ընդունելի.
Այս է, Տէր, իմ ջանքըս,
Դուն օգնէ ինծի։

Թարգ. ELIAS RIGGS

## 235 ՏԷՐ ԻՄ, ՓՐԿԻՉ, ԵԿՈՒՐ







ՍԱՂ. ԾԱ. 7, 10

2 Դուն տիրէ իմ մըտքին,
Հոգւոյս ալ կիրքերուն,
Մինչեւ հըպատակին
Քու զօրութեանդ անհուն։
Եկուր, Փըրկիչ, և այլն։

3 Ցայնժամ իմ սիրտս կ'ըլլայ
Քու սուրբ սիրոյդ խորան,
Որուն վըրայ շողայ
Սրբէն խաղաղութեան։
Եկուր, Փըրկիչ, և այլն։

Թարգ. Գ. Ց. ԿԻՒԼԵԱՆ

## 236 ՍՐԲՈՑ ՕՐԻՆԱԿԸ






## 237 ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ




ՀՌՈՎՄ. ԺԲ. 5

2 Մեր յոյսն ու վախն են հաւասար,
Նաեւ խնդում զըւարթարար.
Մեր մտմըտուք, հոգ, նեղութիւն
Ջունին ըլնաւ տարբերութիւն։

3 Մենք մեր եղբօր բոլոր վշտաց
Ենք մասնակից եւ արտասուաց.
Թէ մէկ եղբայր մեզմէ զատուի,
Մեզ ցաւ կու տայ անտանելի։

4 Բայց հաստատուն մեծ յոյս ունինք
Ձայն տեսնելու վերին երկինք.
Այս աներկբայ յոյս եւ հաւատ
Կ'ընեն ըզմեզ հոգէ ազատ։

5 Եւ միացած ուրախ սըրտով
Մենք այն օրուան կ'անձկանք սիրով.
Մեղք, վիշտ եւ հոգ յայնժամ փախչին,
Եւ սէր մաքուր ի մեզ հանգչի։

---

## 236 ՍՐԲՈՑ ՕՐԻՆԱԿԸ

ԵԲՐ. ԺԲ. 1

2 Հոս երբեմն իրենց մահինը
Արցունքով կը թրջէին,
Մեղքերու դառն փորձութեան դէմ
Միշտ կը պատերազմէին։

3 «Ո՞ւսկից էր ձեր յաղթութիւնը,»
Հարցընեմ. եւ միաբան
Յաղթանակն ու փրկութիւնը
Յիսուսի խաչին կու տան։

4 Դիտեցին անոր քայլերը,
Եւ անոնց հետեւեցան.
Մինչեւ որ հասան երկինքը,
Անոր սուրբ հանգիստն մըտան։

5 Գոհութիւն քեզի, մեր Տէրը,
Որ քայլերըդ մեզ կ'ուղղեն,
Եւ վըկաներուդ խումբերը
Նոյն ճամբան կը ցուցընեն։

Թարգ. ELIAS RIGGS

## 238 ԵՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ




ՄԱՏԹ. ԻԳ. 8

2 Մէկ ճամբայով կ'երթանք մէկ տուն,
Տուն լուսեղէն, յաւերժ սիրուն.
Ուր մահ կամ վախ չը կայ մեզի,
Ամէնքը հոն սիրով են լի։

3 Ի միասին հոն յաւիտեան
Պիտի բնակինք մենք համաձայն.
Ուստի սիրենք հոս մէկըզմէկ,
Մէկ սիրտ ըլլանք եւ մէկ խորհուրդ։

Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 239 ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ



## 240 ԽԱՉԸ ՏԱՆԻԼ




ՂՈՒԿ. Թ. 23

2 Ի՛նչ երջանիկ վերի սուրբերն,
Որ հոս կը տրտմէին.
Բայց հոն անխառն սէր կը վայ՛լեն,
Ցնծում ալ լիովին։

3 Օրհնեալ է խաչս, պիտի տանիմ,
Մինչեւ որ մահն ինծ գայ,
Ու վեր ելլեմ, պըսակս առնեմ.
Ինծի պըսակ մը կայ։

Թարգ. I. F. PETTIBONE

## 239 ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

ՑԱԿ. Ե. 13

1 Եկէք, Տէրն սիրողներ,
Պատմենք ցնծութիւննիս.
Մէկտեղ ելլեն մեր քաղցր երգեր
Մինչեւ աթոռն Փրկչիս։

2 Եւ թող անոնք չերգեն,
Որ Տէրը չը ճանչցան.
Բայց Արքային որդւոց ամէն
Վայել է որ փառք տան։

3 Հոս իր սուրբ Սիօնին
Ցնծումն կը վայելենք,
Մինչեւ հասնինք երկնաւորին,
Իր փառքն անհուն տեսնենք։

4 Ուստի մենք միշտ երգենք,
Բընաւ տրտում չըլլանք.
Էմմանուէլին հողէն կ'անցնինք,
Դէպ ի երկինք կ'երթանք։

## 241 ԱՅՍՕՐ ԱՅԳԻԻՍ ՄԷՋ ԳՈՐԾԷ




ՄԱՏԹ. ԻԱ. 28, 29

2 Եւ այս ձայնն ուղղակէս երկինքէն իջնելով՝
Մեզ, ուր որ թափառինք, կը գտնէ.
Թէ՛ դաշտի թէ՛ քաղքի մէջ մեզի համնելով,
Թէ՛ լըսենք եւ թէ՛ ոչ, անդադար գոչելով,
«Այսօր այգիիս մէջ գործէ։»

3 Ան մեր Հայրն է որ մեզ մեծ սիրով կը կանչէ,
Իր ձայնին հրնազանդ ըլլանք մենք.
Անդադար օրհնութիւն իր ձեռքէն մեզ կ'իջնէ,
Մենք ուրեմն, իր սիրոյն նուիրուած ի սրտէ՝
Այսօր այգիին մէջ գործենք։

## 242 ՈՐ Մ'ԱԼ ՏԷՐՈՋԸ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ




ՅՈՎՀ. Թ. 4

2 Որ մ'ալ գործել կրցած եմ
Տէր Յիսուսի համար.
Ինքն է իմ Տէրըս,
Իմ յոյսս ու սէրըս.
Թող հաւատարմաբար
Իմ Տէրս պատուեմ,
Անոր միշտ ծառայեմ.
Տէրոջըս սուրբ գործին մէջ, և այլն.

3 Որ մ'ալ շընորհուեցաւ ինծ.
Ի՛նչ բերկրութիւն եղաւ
Պատմել թէ Տէրը
Յայտնեց իր սէրը,
Մեզի համար մեռաւ.
Այս պատմելով՝
Իմ սիրտս լեցաւ սիրով.
Տէրոջըս սուրբ գործին մէջ, և այլն.

4 Որ մ'ալ ջանքով անցած է,
Աշխատանքով լեցուն,
Բայց յայտնուած է
Եւ մօտեցած է
Երկնից մէջ փառք անհուն.
Իմ Յիսուսիս
Յանձնեմ յոգնած հոգիս.
Տէրոջըս սուրբ գործին մէջ, և այլն.

5 Հանգիստ Տէր Յիսուսի հետ՝
Ջանքէն ետեւ կու գայ.
Քաղցր է այս ջանքը,
Այս աշխատանքը.
Եթէ բու կամքդ ըլլայ,
Ով Տէր, կ'ուզեմ
Որ օր մըն ալ գործեմ.
Տէրոջըս սուրբ գործին մէջ, և այլն.



Թարգ. Miss C. E. BUSH

## 243 ՀԱՑԴ ՁԳԷ ՋՐՈՑ ԵՐԵՍԸ



ԺՈՂ. • ԺԱ. 1, 2

1 Հացդ ձըգէ ջըրոց երեսը,
Մի կարծեր թէ կ'ընկղմի.
Թէ եւ ուշանայ արդիւնքը,
Անպատճառ գտնես պիտի։
Տուր բաժին եօթնին, ութին ալ,
Կարօտից առատ բաշխէ,
Զի Աստուած խոստում տուած է,
Որ քեզ աւելի օրհնէ։

2 Հացդ ձըգէ ջըրոց երեսը,
Զի մէկ սերմ տարուած ալեօք,
Բուսնելով հեռու երկրի մէջ՝
Կը բերէ պըտուղ առողք։
Նոյն կերպով բարի ջանիցդ մէջ
Քեզ կ'օգնեն բուռն ալիքներն՝
Փրկարար ճշմարտութիւնը
Քարոզել երկրիս ծայրերն։

3 Հացդ ձըգէ ջըրոց երեսը,
Ճոխ բարիք միշտ տարածէ,
Թըշուառաց հասցուր դարմանը,
Լըքեալներն մըխիթարէ։
Մի վախնար թէ քաղց հասնի քեզ,
Տէրն պիտոյքդ կը լեցընէ,
Միշտ կու տայ քեզ փոխարէնը.
Վարձքն ալ լի կը պարգեւէ։

## 244 ԵՐԳ ԿԵՆԱՑ




ԺԱՂ. ԼԶ. 9, ԴԱ. 14-16

2 Կեանք իրական է, փութաջան,
Եւ նըպատակ ունի.
Անոր վախճան չէ գերեզման,
Անդին ալ կը նայի։

3 Կեանքս օգտակար եւ թանկագին
Ընել ենք հրաւիրուած.
«Դուն հող էիր, դառնաս հողին,»
Հոգւոյն վրայ չէ ըսուած։

4 Ամէն դարու մեծ, բարերար
Մարդոց կեանքն կը փայլի.
Մեր ետեւէն հետք օգտակար
Ձըգել է պարտք մեզի։

5 Յառաջ երթանք, վեր նայելով
Մեր կեանքն վըսեմ ընենք.
Արթուն ըլլանք, եւ եռանդով
Տէրոջը ծառայենք։

Թարգ. ELIAS RIGGS

## 245 ԲԱՆ ՄԸ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ




Բ ԿՈՐ. Ե. 14, 15

1 Յիսուս, քու կեանքդ անգին
  Տըւիր ինծի.
Ես պարտական եմ կեանքս
  Զոհել քեզի։
Հոգիս թող քեզ պաշտէ,
Իր ուխտը կատարէ,
Նըւէր մ'ալ ընծայէ,
  Տէր իմ, քեզի։

2 Կ'երթամ աթոռն շնորհաց
  Յանուն Փրկչիս.
Հաւատքըս կը նայի
  Բարեխօսիս։
Օգնէ խաչս տանելու,
Մեծ սէրըդ պատմելու,
Մաղթանքըս ուղղելու
  Հօր Աստուծոյս։

3 Շնորհէ որ աշխատիմ
  Նըման քեզի.
Որ, օր իւրաքանչիւր,
  Գործ սիրելի,
Բարիք մը ըսկըսած,
Մէկ օրհնութիւն գործուած,
Մէկ կորուսեալ փրկուած,
  Ձեռօքս լինի։

4 Ինչ որ ունիմ եւ եմ՝
  Կու տամ քեզի.
Իմ անձս, տրտում, ուրախ,
  Քուկին լինի։
Եւ երբ երեսդ տեսնամ,
Վերն ալ առջիդ իյնամ,
Յայնժամ պիտի ըլլամ
  Նըւէր քեզի։

## 246 ԴՈՒՆ ՅՈԳՆԱ՞Ծ ԵՍ







ՄԱՏԹ. ԺԱ. 28, ՅՈՎՀ. Զ. 37

1 Դու յոգնած կամ վըհատա՞ծ ես,
Խիստ կը տառապի՞ս։
Տէր Յիսուս կ'ըսէ, «Եկուր ինծ,
Որ հանգչիս։»

2 Ապացոյց կա՞յ ցուցնելու ինծ
Թէ ուղղիչս է Ան։
«Ձեռքերուն, ոտքին, կողին վրայ
Վէրքեր կան։»

3 Կա՞յ զարդարելու պըսակ մը
Ճակատն Իշխանի։
«Կայ, այո՛, փուշէ դափնի մը
Հաւաստի։»

4 Ի՞նչ վարձք, եթէ զինք գտնեմ հոս,
Ու հետեւիմ միշտ։
«Շատ արցունք եւ աշխատանք կայ,
Շատ ալ վիշտ։»

5 Թէ խնդրեմ որ ընդունի ինք,
Կը մերժէ՞ զիս Ան։
«Ոչ, մինչեւ երկինք, երկիրն ալ
Վերջանան։»

6 Հետեւիմ, գտնեմ, մեռնիմ ալ,
Ինծ կու տա՞յ օրհնէք։
«Սուրբք՝ Այո, կ'ըսեն. վկայ են
Մարգարէք։» Ամէն։

Թարգ. ՊՕՂՈՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ

## 247 ՔՐԻՍՏՈՆԷԻՆ ԳՈՐԾԸ







ՄԱՐԿ. ԺԴ. 33,35

2 Բոլոր ընկերներուս
Հոգիներուն համար
Աշխատելով ներկայ դարուս
Ըլլամ միշտ օգտակար։

3 Ով Տէր, ինծի օգնէ
Առջեւըդ քալելու,
Եւ քու շնորհքովդ զիս պատրաստէ
Վերջին հաշիւս տալու։

4 Վառէ զիս նախանձով,
Հսկեմ, աղօթք ընեմ.
Զը կայ ամկէ զատ ապահով
Ուրիշ ճամբայ, գիտեմ։

5 Եթէ քեզի անսամ,
Ինծ կայ կեանք անվախճան.
Բայց եթէ ուխտադրուժ ըլլամ,
Մահ յաւիտենական։

Թարգ. ELIAS RIGGS

## 248 ՈՎ ՏԷՐ, ԹՈՂ ՔՈՒ ԶԵՏԴ ՔԱԼԵՄ






## 249 ԱՆՁՆՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ







ԴՈՒԿ. Թ. 23

2 Այս աշխարհիս սուտ բարիքներ,
Որոնց վըրայ կը յուսայի,
Ինծի եղան պարապ բաներ,
Ու քեզ միայն ես խիս ըրի։

3 Թող այս աշխարհ զիս անարգէ,
Տէր Յիսուսի նոյնպէս ըրաւ.
Մարդոց դատումն զիս կը մերժէ,
Բայց դուն զիս մի մերժեր բընաւ։

4 Կարող չէ վիշտ ինծ վընասել,
Երբոր Քրիստոս իմ հետըս է.
Ցաւ, նեղութիւն, տանջանք քաշել՝
Ինծ բերկրութիւն, ցնծում ալ է։

5 Ով իմ հոգիս, ուրախ եղիր,
Առջեւըդ փառք կայ անդադար.
Վըսեմ կոչումըդ լաւ ճանչցիր,
Մարմնոյ վիշտէն ալ մի վախնար։

## 248 ՈՎ ՏԷՐ, ԹՈՂ ՔՈՒ ՀԵՏԴ ՔԱԼԵՄ

ԿՈՂ. Ա. 10

1 Յօժար ծառայութեամբ, ով Տէր,
Ըլլամ քեզի խոնարհ ընկեր.
Սիրոյ գաղտնիքըդ ինծ յայտնէ,
Զիս համբերող ու քաղցր ըրէ։

2 Սիրով, գութով քեզ նըմանիմ,
Որ թուլասիրտն մեղմով շահիմ.
Որ մոլորեալը ետ բերեմ,
Եւ Հօրը տունն առաջնորդեմ։

3 Յիսուս, շնորհէ մըտերմութիւնդ,
Ինծ սորվեցուր համբերութիւնդ.
Սիրով, գործով քեզ հետ քալեմ,
Եւ բարիով չարին յաղթեմ։

4 Թող լոյս ծագի ճամբուս վըրան,
Յուսով փայլի թող ապագան.
Խաղաղութիւնդ ինծ տուր, ով Տէր,
Տուր որ ըլլամ քեզի ընկեր։

Թարգ. C. C. TRACY

## 250 ԳՈՐԾԵԼՈՒ ԱՏԵՆՆ




ՅՈՎՀ. Թ. 4, ՀՌՈՎՄ. ԺԳ. 11

2 Տես, որ մօտեցած է
Արդ օր հասարակ.
Կէս օրուան յորդորն է
Քեզ, միջահասակ։
Բեռ եւ տաքութի՛ւն կայ,
Գործըդ մի ձըգեր.
Քանզի վարձըդ մեծ է
Երբոր գայ գիշեր։

3 Կ'երկարին շուքերը,
Օրն կը վախճանի.
Իրիկուան խըրատն է
Քեզ, ով ծերունի։
Քիչ է ժամանակըդ,
Ձեռքըդ չը թուլնայ.
Կատարէ քու գործըդ,
Չի գիշեր կու գայ։

Թարգ. C. C. TRACY

## 251 ԽՈՐ ՁՈՐԸ



## 252 «ԱՂԷԿ ԵՂԱՒ ԻՆԾԻ ՈՐ ՎՇՏԱՑԱՅ»




ՍԱՂ. ԾԺԹ. 71

2 Ցերկինս՝ վարձքի ես ակն ունիմ,
Թէ հոս սիրով կրրեմ խաչն իմ.
Բայց կը մոռնամ թէ այս կենաց
Մէջ ալ առիթ է պարծանաց։

3 Եթէ Որդւոյդ գործն յաշխարհի
Չարչարանքով կը կատարուի,
Հարկաւ ինձ ալ պէտք են փուշեր,
Արժէք ունին եւ իմ ցաւեր։

4 Տէր, զիս լուա, ու սիրտս մաքրէ,
Թէեւ անցնիմ հուրէ, ջուրէ.
Եւ փորձութեանց դիմադրելով՝
Նոր զօրութիւն շահիմ հոգւով։

5 Իբրեւ մանուկ, Հայր, անվրդով,
Իմին բաժինս գրկեմ սիրով.
Փուշ, խաչ եւ ցաւ, վիշտեր համայն՝
Թող ինձ թըւին սիրոյդ նշան։

ՏԻԿԻՆ ՀՌԻՓՍԻՄԷ ՇՄԱՒՈՆԵԱՆ

---

## 251 ԽՈՐ ՁՈՐԸ

ՀՌՈՎՄ. Ը. 35-39

2 Ով Իսրայէլի տանողը,
Եկ ամպի, կրակի սիւնով.
Անվըտանգ անցուր մեր անձը
Այս խոր ձորէն։

3 Քաջ Հովիւ դուն, Տէր Յիսուս իմ,
Բաց քու սիրոյդ բազուկներ.
Հետս եղիր, զօրեղ պաշտպան իմ,
Այս խոր ձորէն։

4 Սուրբ Հոգի, հըզօր Աստուած մեր,
Թշնամեաց յաղթէ ուժովդ.
Մի՛ թողուր զիս դեռ չելած վեր
Այս խոր ձորէն։

5 Ոհ, ի՜նչ վիշտ ու ցաւ քաշած եմ
Հոս կեանքիս բաժին եղած.
Ընդունէ զիս երբ ելլեմ ես
Այս խոր ձորէն։

Ա. Հ. ՃԷՃԻՋԵԱՆ

## 253 ՆԱՒԸ ՓՈԹՈՐԿԻ ՄԷՋ




ՄԱՏԹ. Ը. 23-27

2 Միայն մէկ անձ չը սարսափած՝
Նոյն Նաւակին մէջ կար.
Ան ալ զըլուխը վար դըրած՝
Հանդարտ կը քընանար։
«Ո՜հ, Վարդապետ, քու հոգըդ չէ՞,»
Կ'ըսեն, «մենք կ'ընկղմինք.
Շուտով ելիր ու մեզ փրկէ.
Ահա կը կորսըւինք։»

3 Այն աղաղակն երբոր լսեց,
Անմիջապէս ելաւ,
Հովերն ու ծովն յանդիմանեց,
Խաղաղութիւն եղաւ։
Կ'ապշին այն ձայնը լըսողներ,
Եւ իրարու կ'ըսեն,
«Այս ո՞վ է որ ծովն ու հովեր
Անոր մըտիկ կ'ընեն։»

4 Երբ քու Նաւակըդ, ով հոգիս,
Ընկղմելու մօտ է,
Ցայնժամ վախով չը զարհուրիս,
Փրկչիդ աղաղակէ.
Այն որ երկինքը կը Նստի,
Կարող է քեզ փրկել,
Սաստել ամէն փոթորիկի,
Եւ «Լուռ կեցիր» ըսել։

5 Յիսուս, սաստէ զօրեղ խօսքովդ
Մեր թշնամիներուն.
Ալ մեզ չըսեն թէ «Աստուծմով
Չըկայ ձեզ փրկութիւն։»
Մեր հոգիին «Քաջ լեր» ըսէ.
Քու փրկութիւնդ ճանչնանք,
Եւ ազատուած ամէն չարէ՝
Քեզմով ուրախանանք։

Թարգ. ELIAS RIGGS

## 254 ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԷՄԸ




ՍԱՂ. ԿԱ. 2

2 Ո՛հ, մերթ օրն է ո՛րչափ երկար,
Եւ խոնջ եմ մարմնով բովանդակ.
Սակայն ես տաժանք չեմ ըզգար,
Հանգչիմ երբ Վէմին շուքին տակ։
Յայնժամ թողէք զիս, վեր թռչիմ
Դէպ ի Վէմն որ բարձր է քան զանձն իմ։

3 Մընալ կ'ուզեմ միշտ, Վէ՛մ, քու մօտ,
Աչքերս թէ խինդ կամ շիթ ծորեն.
Ճամբաս հարթ ըլլայ կամ լեռնոտ,
Անցնիմ ալ մահուան մութ ձորէն։
Յայնժամ թողէք զիս, վեր թռչիմ
Դէպ ի Վէմն որ բարձր է քան զանձն իմ։

Թարգ. Յ. Թ. ԴԱՑԱՆԵԱՆ

## 255 ԴՈՒՆ ԶԻՍ ԿԸ ՅԻՇԵՍ, ՏԷՐ




ԽԶԵԿ. ԺԶ. 60

2 Կեանքի հոգեր կու գան ուժգին
Մըթագնելու տըկար հոգին.
Կրնամ անոնց կուրծք պարզել ես
Մինչ դուն զիս կը յիշես։
Դուն, Տէր, զիս կը յիշես,
Ալ ի՞նչ վախնամ երբ մօտ ես ինծ,
Եւ, Տէր, զիս կը յիշես։

3 Թող մութ ամպեր գան ու երթան,
Դժուար կամ հարթ ըլլայ ճամբան.
Հոգ չեմ ըներ, վստահ եմ ես
Որ դուն զիս կը յիշես։
Դուն, Տէր, զիս կը յիշես,
Ալ ի՞նչ վախնամ երբ մօտ ես ինծ,
Եւ, Տէր, զիս կը յիշես։

Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՅԵԱՆ

## 256 ՄԻ ՁԻՋԱՆԻՐ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ




Բ ԹԵՍ. Գ. 3

2 Ատէ սըտութիւն եւ ամէն չար խօսքեր,
Եւ ապականիչ ընկերներ մի՛ սիրեր.
Վախցիր Աստուծմէ, սուրբ անունը յարգէ,
Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ։
Քու Փրկիչդ, եւ այլն։

3 Աստուած պիտի վարձք տայ ամէն յաղթողին,
Յաղթէ հաւատքով փորձութեան եւ մեղքին.
Արթուն եղիր միշտ, եռանդով աղօթէ,
Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ։
Քու Փրկիչդ, եւ այլն։

Թարգ. ELIAS RIGGS

## 257 ՀԵՌՈ՛Ւ, ԲԱԺԱԿ







ԱՌԱԿ. ԻԴ. 29-32

1 Ըմպելիքէ կենանք հեռի,
Հեռո՛ւ, հեռո՛ւ, բաժակ.
Զը գործածենք գինի, օղի,
Հեռո՛ւ, հեռո՛ւ, բաժակ։
Մեզ չէ պիտոյ, օգուտ չունի,
Վնասը շատ, վըտանգ ունի.
Հեռո՛ւ, բաժակ, հեռո՛ւ, բաժակ,
Հեռո՛ւ, հեռո՛ւ, բաժակ։

2 Տես սա արբշիռն ո՛րչափ տժգոյն,
Հեռո՛ւ, հեռո՛ւ, բաժակ.
Ինկած գետին, դէմքը դալկուն,
Հեռո՛ւ, հեռո՛ւ, բաժակ.
Իր հանդերձներն պատառ պատառ,
Իր դէմք տըխուր ու խեղազար,
3 Տարուէ տարի եւս աւելի
Սիրտս կը գտնամ չար, մեղսալի.
Տըգէտ եմ ես, յիմար, անզօր,
Իսկ թշնամիս՝ խիստ զօրաւոր։

4 Ով Հինաւուրց, անխախտ դու Վէմ,
Հոգւոյդ քաղցրիկ ձայնն կը լըսեմ
Թէ ի՛նչպէս լոյսն քու երեսաց
Ցըրուէ խաւարն, վանէ ի բաց։

5 Տըկարն ի՛նչպէս կը զօրանայ՝
Եթէ սրտանց քեզի հաւտայ,
Եւ թէ օրէնքըդ մընայուն
Կ'ընէ տըգէտը իմաստուն։

6 Ուստի, Հայր իմ, բռնէ ձեռքէս,
Որ հետեւիմ ո՛ւր զիս ուղղես.
Հաստատ գիտնամ ո՛չ կեանք, ո՛չ մահ,
Ո՛չ հրեշտակներ, ո՛չ չարին ահ,

7 Ո՛չ չարչարանք, ո՛չ նեղութիւն,
Ո՛չ թշնամեաց իշխանութիւն,
Ո՛չ վախ, վըտանգ, սիրելեաց սէր,
Ո՛չ ապառնի, ներկայ բաներ,

8 Ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն,
Եւ ո՛չ իրաց փոփոխութիւն,
Եւ ո՛չ երբեք մի արարած
Կարեն կորզել զիս քո ձեռաց։

ՏԻԿԻՆ ՀՈՒՓՕՐՄԸ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 338 ՏԱՐՈՒԱՆ ՎԱԽՃԱՆԻՆ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ




ՍԱՂ. ԽԸ. 14

2 Այս կեանքն է նըման երազի,
Ո՛հ թէ երազողն արթննար.
Տարին օրուան պէս կը թռչի,
Րոպէն թեւ ունի, չը կենար։
Տարին օրուան պէս կը թռչի,
Մօտ է ահաւոր դատաստան.
Վըճիռն ալ անայլայլելի,
Կա՛մ կեանք եւ կա՛մ մահ յաւիտեան ։

3 Արդեօք երբոր մահ ինծ հասնի,
Կրնա՞մ ես երգել յաղթանակ.
Ըսել թէ Հաւատքս պահեցի,
Եւ թէ կը մընայ ինծ պըսակ։
Ո՛հ թէ երբ ծըգեմ այս երկիր,
Տէրոջ քաղցըր ձայնն ինծ ըսէ,
«Իմ ուրախութիւնըս մըտիր,
Ու իմ աթոռիս վրայ նստէ։»

Թարգ. ELIAS RIGGS

## 339 ՆՈՐ ՏԱՐԻ



# 340 ՆՈՐ ՏԱՐԻ




Բ ՕՐ. ԼԱ. 8

2 Ո՛հ, կարո՞ղ է միտքն մանկան
Բախտը սահմանել,
Խորհուրդով իւր ապազան
Հօրմէն լաւ ընտրել։
Ցաւէտ բարիքներդ անհուն
Հարկ է միտք բերել,
Եւ գնծմամբ քու սուրբ անուն,
Հայր, փառաւորել։

3 Տէր, թէ որ մեզի մընան
Այժմու պարգեւներ,
Եւ կամ երկինքէն տեղան
Նոր օրհնութիւններ,
Եւ ինչ ալ այս նոր տարին
Մեզի ընծայէ,
Քու անունդ պաշտելի,
Հայր, փառաւորէ։

Թարգ. C. C. TRACY

# 339 ՆՈՐ ՏԱՐԻ

ՍԱՂ. Դ. 12

2 Ամէն վայրկեան մօտ կը բերէ
Զիս իմ կենացըս վախճանին.
Ամէն քայլ կը մօտեցընէ
Մահուան ու ցուրտ գերեզմանին։

3 Ինչ շուտ անցաւ անցեալ տարին,
Թռաւ, գընաց, անհետացաւ.
Անձն իմ, արդեօք ըրի՞ր բարին,
Թէ չարութիւնըդ աւելցաւ։

4 Վա՜յ ինձ, բազում անգամ մեղայ՝
Ժամերս պարապ տեղ վատնելով,
Բանքարթազոյց ծառայ եղայ՝
Կրցած բարիքըս չընելով։

5 Ով Տէր, բրէ ողորմութիւն,
Ինձ սորվեցուր համրել օրերս,
Որ ըստանամ իմաստութիւն,
Քեզ նուիրեմ բոլոր ժամերս։

Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 341 ԳԱՐՈՒՆ




ԳՈՐԾ. ԺԴ. 16

2 Շնորհաց ցօղեր, ո՜հ, ողողեն
Իմ մեղսալից հոգիս.
Եւ սէր հաճի փայլիլ վերէն
Տըխուր, աւեր սրտիս։
Մինչ իր բերքերն երկիր ձօնէ,
Թռչունն ալ՝ իր երգեր,
Խեղճ սիրտ, չունի՞ս մէկ բան զոնէ,
Գարուն քեզ չէ՞ եկեր։
Օրհնութիւն, փա՜ռք, եւայլն։

3 Շնչէ, Տէր, սէրըդ տաք, խորունկ,
Իբրեւ շունչ հարաւին,
Որ զան յառաջ բողբոջ ու խունկ,
Եւ ճոխ արդիւնք զիզուին։
Եւ երբ ծայնէդ երկիր ցնծայ,
Ծափեն ծոր եւ բլուր,
Թող սիրտս ալ քեզ բերէ ընծայ
Նոր երգ մը քաղցրալուր։
Օրհնութիւն, փա՜ռք, եւայլն։

Թարգ. Ց. Թ. ԳԱՅԱՆԵԱՆ

## 342 ԲԱՐԻ ՊԱՐԳԵՒՆԵՐ




ՍԱՂ. ձայն.

2 Սոսկ ան է Ըստեղծողը
Բոլոր արարածոց.
Ծաղկին կու տայ երանգ ու բոյր,
Աստղին ալ փայլ ու բոց.
Անոր կ'անսան կոհակն ու հով.
Ջագերն ան կը հոգայ.
Ցաւէտ մեզ, իր որդիներուն,
Կու տայ հաց առօրեայ.
Բոլոր այս պարգեւները, և այլն.

3 Արդ գոհութիւն քեզ, ո՛վ Հայր,
Պարգեւներուդ փոխան —
Ցանքի, հունձքի, առողջութեան,
Կեանքի եւ սընընդեան.
Սիրոյդ փոխան մեր ընծաներն,
Հայր, քեզ բերած ենք արդ.
Իսկ Դու մեզմէ կ'ուզես յաւէտ
Մեր սիրտը շնորհապարտ.
Բոլոր այս պարգեւները, և այլն.

Թարգ. Գ. Ց. ԿԻՒԼԵԱՆ

## 343 ՏԷՐ ԸՆԴ ՁԵԶ



## 344 ՀՈՒՆՁՔ




ԾՆՆ. Ը. 22

2 Այո, իր սուրբ անուն
Ձերմ զոհութեամբ անհուն
Արդ հռչակենք.
Երբ բարիքներ տեղան,
Եւ ճոխ է մեր սեղան,
Ցիշենք Տէր Եհովան,
Եւ զայն օրհնենք։

3 Օրհնենք մենք Տէրն հունձքին.
Ձեռք, սիրտ, ձայն միասին
Թող բարձրանան.
Արտէն ըշտեմարան
Երբոր բերենք որան,
Օրհնենք միաբերան
Տէր Եհովան։

Թարգ. Գ. Յ. ԿԻՒԼԵԱՆ

## 343 ՏԷՐ ԸՆԴ ՁԵԶ

Ա ՊԵՏ. Ե. 14

1 Տէր ընդ ձեզ մինչեւ զիրար տեսնենք.
Խորհուրդովն առաջնորդէ ձեզ,
Իր փարախը հաւաքէ ձեզ,
Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք։
Տէր ընդ ձեզ, Տէր ընդ ձեզ,
Մինչեւ վերը ժողովուինք,
Մեր Փրկիչն ալ տեսնենք,
Եւ մէկտեղ անոր երկրպագենք։

2 Տէր ընդ ձեզ մինչեւ զիրար տեսնենք.
Իր թեւոց ներքեւ ծածկէ ձեզ,
Մանանայ միշտ պատրաստէ ձեզ,
Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք։
Տէր ընդ ձեզ, և այլն։

3 Տէր ընդ ձեզ մինչեւ զիրար տեսնենք.
Երբ վըտանգ կամ վիշտ պատէ ձեզ,
Իր բազուկը պաշտպանէ ձեզ,
Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք։
Տէր ընդ ձեզ, Տէր ընդ ձեզ,
Մինչեւ վերը ժողովուինք,
Մեր Փրկիչն ալ տեսնենք,
Եւ մէկտեղ անոր երկրպագենք։

4 Տէր ընդ ձեզ մինչեւ զիրար տեսնենք.
Տարածէ ձեր վրայ իր սէրը,
Խափանէ մահուան խայթերը,
Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք։
Տէր ընդ ձեզ, և այլն։

## 345 ԳԵՂԵՑԻԿ ՁԵՌՔԵՐ




ԽՄ. ՏՐ. 7

1 Գեղեցի՜կ ձեռքեր փոքրիկ,
Որ Տէրոջ պատուէր գործեն.
Գեղեցի՜կ աչքեր փոքրիկ,
Վառուած լոյսով երկինքէն։
Ի՜նչ գեղեցիկ այն ձեռքեր փոքրիկ,
Որ Տէրոջ պատուէր գործեն.
Ի՜նչ գեղեցիկ այն աչքեր փոքրիկ,
Վառուած լոյսով երկինքէն։

2 Այդ բոլոր ձեռքեր փոքրիկ
Թող օգնեն Փրկչին փառքին.
Այդ բոլոր սրտեր փոքրիկ
Անոր սիրով թող յուզուին։
Ի՜նչ գեղեցիկ, և այլն։

3 Այդ բոլոր շրթներ փոքրիկ
Միշտ Փրկչին թող աղօթեն.
Թող քալեն ոտքեր փոքրիկ
Անոր գծած շաւիղէն։
Ի՜նչ գեղեցիկ այն ձեռքեր փոքրիկ,
Որ Տէրոջ պատուէր գործեն.
Ի՜նչ գեղեցիկ այն աչքեր փոքրիկ,
Վառուած լոյսով երկինքէն։

4 Ի՜նչ ընել որ կարենան
Ձեր ձեռքեր Տէրոջ համար,
Ձայն ըրէք դուք, զայն միայն,
Ուժով, սիրով, միշտ յօժար։
Ի՜նչ գեղեցիկ, և այլն։

Թարգ. Ա. Կ. ԿԻԼԻՃՊԷՆԿԵԱՆ

## 346 ՍԷՐ ՏԱՆ ՄԷՋ




Ա. ՅՈՎՀ. Դ. 18

3 Վերն երկինք կը ծիծաղի,
Երբ սէր կայ տան մէջ.
Վարն երկիր սիրով է լի,
Երբ սէր կայ տան մէջ։
Ձով ջուրերն, անոյշ երգերն,
Եւ ճաճանչազեղ եթերն,
Տէրն ալ կը հաւնի բարձրերն,
Երբ սէր կայ տան մէջ։
Սէր տան մէջ, սէր տան մէջ,
Տէրն ալ կը հաւնի բարձրերն
Երբ սէր կայ տան մէջ։

4 Յիսուս, գութըդ ինծ յայտնէ,
Յայնժամ սէր տան մէջ.
«Քուկդ եմ» իմ հոգւոյս ըսէ,
Յայնժամ սէր տան մէջ։
Թող քու լոյսըդ հրաշափառ,
Արեւէն ալ շատ պայծառ,
Փարատէ մէգն ու խաւար,
Յայնժամ սէր տան մէջ։
Սէր տան մէջ, սէր տան մէջ,
Փարատէ մէգն ու խաւար,
Յայնժամ սէր տան մէջ։

## 347 ՓՈՔՐ ՁԵՌՔԵՐ




Ժ.Ո.Գ. Ժ.Բ. 1

2 Ո՜հ, փոքր շրթունքը ի՜նչ կրնան ընել
Տէրոջը հաճելի.
Կրնան աղօթք մատուցանել
Եւ քաղցր խօսքեր արտասանել.
Այս շնորհքն ինձի՜ տրուի։

3 Ո՜հ, փոքր աչքերը ի՜նչ կրնան ընել
Տէրոջը հաճելի.
Կրնան դէպ ի երկինք նայիլ,
Եւ Սուրբ Մատեանն կարդալ սորվիլ.
Այս շնորհքն ինձի՜ տրուի։

4 Ո՜հ, փոքր սրտերը ի՜նչ կրնան ընել
Տէրոջը հաճելի.
Շնորհքով կրնան ապաւինիլ
Յիսուս Փրկչին, եւ զայն սիրել.
Այս շնորհքն ինձի՜ տրուի։

5 Ձեռքեր, շրթունք, սրտեր, երբ միաբան
Տէրոջը հաճելի
Գործեր կատարելու ջանան,
Փրկչին շատ սիրելի կ'ըլլան.
Այս շնորհքն ինձի՜ տրուի։

## 348 ՓՈՔՐ ԲԱՆԵՐ



## 349 ՏՂՈՒ ՄԸ ԱՂՕԹՔԸ




Ա ԹԱԳ. Գ. 10

2 Ինկած էակ մը ծընունդէս՝
Քեզի դէմ մեղք ըրի,
Եւ թէ որ դուն ինծի չօգնես,
Հոգիս կը կորսուի։

3 Բայց Տէր Յիսուս, հզօր Փրկիչ,
Մեղքերըս սրբելու
Մեռաւ, յարեաւ եւ համբարձաւ
Հոգիս ազատելու։

4 Պզտիկ տըղաք անոր թող գան
Որ մեղքերնին ներուին.
Զանոնք իրեն սիրով կ'առնէ,
Իրմով միշտ կ'օրհնուին։

5 Որոնք կանուխ զայն կը փնտռեն
Անշուշտ պիտի ապրին,
Յիսուս անոնց կ'առաջնորդէ
Որ հետը բընակին։

---

## 348 ՓՈՔՐ ԲԱՆԵՐ

ՄԱՏԹ. ԻԵ. 21

1 Փոքր կաթիլները
Ծովը կը կազմեն,
Աւազի հատերը
Լեռն ալ կը դիզեն։

2 Փոքր վայրկեանները
Թէպէտ բան մը չեն,
Բայց անթիւ դարերը
Անոնցմէ կ'ելլեն։

3 Փոքր յանցանքները
Սիրտն կ'ապականեն,
Եւ շատ մեծ մեղքերը
Անոնցմէ կ'ելլեն։

4 Փոքր բարիքները
Շատ մարդոց կ'ազդեն,
Եւ սիրոյ խօսքերը
Հոս երկինք կ'ընեն։

## 350 ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԴՊՐՈՑ




ՍԱԴ․ ՃԺԸ․ 24

1 Կիրակին մեղք է քունով անցընել.
Ուստի ես կանուխ կ'որոշեմ ելլել.
Աս կանոնն ալ միշտ պահելու ջանամ,
Կիրակի օրուան դպրոցէն չըմնամ։
Թռչուններն առտուն խնդազին կ'ելլեն,
Երգելով անտառն կը հընչեցընեն.
Նըմանող անոնց ինչո՞ւ ես չըլլամ,
Կիրակի օրուան դպրոցէն չըմնամ։

2 Երբ կու գայ գարուն, կամ փայլուն ամառ,
Ծաղիկներ, պըտուղ, մէ՛կը չուշանար.
Անդադար ես ալ փութաջան ըլլամ,
Կիրակի օրուան դըպրոցէն չըմնամ։
Աղօթքով՝ շընորհք Տէրոջմէ՛ն խնդրեմ,
Ու համարս ճշդիւ եռանդով սերտեմ.
Աս բարի կանոնն բընաւ չըմոռնամ,
Կիրակի օրուան դպրոցէն չըմնամ։

## 351 ՓԱՅԼԻՆՔ



ՄԱՏԹ. Ե. 16

2 Յիսուս կը պատուիրէ մեզ
Փայլիլ իրեն համար.
Գիտէ թէ մեր լոյսը
Աղօտ է թէ պայծառ.
Վերէն ինք կը դիտէ մեզ
Թէ արդեօք կը փայլի՞ս
Դուն՝ քու փոքր անկիւնիդ մէջ,
Եւ ես ալ՝ իմինիս։

3 Յիսուս կ'ուզէ որ լոյս տանք
Մեր ընկերաց համար.
Քանզի աշխարհիս մէջ կայ
Տեսակ տեսակ խաւար.
Մեղքեր, ցաւեր, վիշտեր կան,
Ուստի պէտք է փայլիս
Դուն՝ քու փոքր անկիւնիդ մէջ,
Եւ ես ալ՝ իմինիս։

Թարգ. Miss MARIA WEST

## 352 ՏԵՍ, ՄԵՂՈՒՆ ԱՇԽԱՏԱՍԷՐ




ԱՌԱԿ. Զ. 6-8

1 Տես, մեղուն աշխատասէր
Ամառուան մէջ կը գործէ,
Ժողվելու ալ զանց չըներ
Մեղր ամէն ընտիր ծաղկէ։

2 Տես, ի՜նչպէս փայլուն մոմով
Կը շինէ խորշեր իրեն,
Ու կը լեցընէ փութով
Իր անոյշ կերակուրէն։

3 Ես ալ օգտակար գործի
Տամ ջանքերըս անդադար,
Զի շատ որոգայթ ունի
Սատանան ծոյլին համար։

4 Թող բարի ուսմունքներով
Մանկութիւնըս անցընեմ,
Եւ սրտով ու նախանձով
Միշտ Տէրոջը ծառայեմ։

## 353 ՅԻՍՈՒՍԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ



## 354 ՓԱՌՔ ՏՈՒԷՔ







ՍԱՂ. Ը. 1, 2

2 Թէ որ ձեզ ատէ աշխարհ,
Փառք, փառք, փառք տըւէք.
Թէ որ դուք երգէք մինակ,
Փառք, փառք, փառք տըւէք։
Թէ որ միշտ, ցաւ ձեզ գտնայ,
Որ միշտ ամէնուն կ'ըլլայ,
Հոն ալ բարութիւն մը կայ.
Փառք, փառք, փառք տըւէք։

3 Կայ Միջնորդ մեզի համար,
Փառք, փառք, փառք տըւէք.
Իր անհուն սիրոյն համար
Փառք, փառք, փառք տըւէք։
Երբ մահուամբ երկինք ելլէք,
Դուք յայնժամ պիտի երգէք
Հրեշտակաց խումբին հետ մէկ.
Փառք, փառք, փառք տըւէք։

Թարգ. ԲԱՐՍՂ ՎԱՐԴՈՒԿԵԱՆ

---

## 353 ՅԻՍՈՒՍԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԿ. Ժ. 13-16

1 Երբոր կը կարդամ պատմութիւնը սիրուն,
Թէ Յիսուս երկրիս վրայ կը քալէր,
Թէ՝ բարի հովիւի պէս իր գառնուկներուն,
Ինք մարդոց նոյն աչքով կը նայէր.

2 Մանկունքը իր բազուկներուն մէջ կ'առնէր.
(Իր սէրը ինչ քաղցր ու ծըրի.)
Կը խորհիմ՝ երբ անմանըը տըղաքը կ'օրհնէր,
Ո՜հ թէ ես անոնց մէկն ըլլայի։

3 Ո՜հ թէ անոր ձեռքը գլխուս վրայ դրուէր,
Լըսէի ես այն ձայնն քաղցրութեան,
Եւ ինծի ալ անոնց պէս նայէր երբ կ'ըսէր,
«Թող տըւէք որ մանկունք ինծի գան։»

4 Բայց զիս ալ Փրկիչը իրեն կը կանչէ,
Որ իր սէրը ես ալ ժառանգեմ.
Ու թէ որ հոս զինքը խնդրեմ ի սրտէ,
Շուտով զայն պիտի վերը տեսնեմ։

Թարգ. ELIAS RIGGS

## 355 ՅԻՍՈՒՍ ՋԻՍ ԿԸ ՍԻՐԷ




ԳԱՂ. Բ. 20

1 Տէր Յիսուս զիս կը սիրէ,
Իմ Սուրբ Գիրքըս այս կ'ըսէ.
Ի՛նչ գութով ինք ընդունեց
Փոքր տղայքը, եւ օրհնեց.
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս.
Սուրբ Գիրքը այս կ'ըսէ.

2 Տէր Յիսուս զիս կը սիրէ,
Զիս իրեն կը հրաւիրէ.
Ինք տըւաւ ինծ կեանք անբաւ,
Երբ իմ տեղըս ինք մեռաւ.
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս.
Սուրբ Գիրքը այս կ'ըսէ.

3 Տէր Յիսուս զիս կը սիրէ,
Ապահով կ'առաջնորդէ.
Ինք է ինծ Հովիւ բարի,
Իր փարախն զիս կը տանի.
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս.
Սուրբ Գիրքը այս կ'ըսէ.

4 Ո՛հ, թէ ես ալ զինք սիրեմ,
Միշտ անոր ձայնին լըսեմ.
Մինչեւ վեր փոխադրըւիմ,
Եւ անոր հետ բնակիմ.
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս.
Սուրբ Գիրքը այս կ'ըսէ.

Թարգ. C. C. TRACY

## 356 ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՏՂԱՅՔ




ՅԱՅՏ. Է. 14

1 Տէրոջ աթոռն շրջապատած
Տըղայք կան բիւրաւոր,
Որոնց մեղքերը են թողուած,
Տեսքով են փառաւոր։
Կ'երգեն, Օրհնեալ, և այլն։

2 Ամբիծ, ճերմակ հանդերձներով՝
Տես ամէն մէկն հագուած,
Ու յաւիտենական լուսով
Դրախտի մէջ բընակած։
Կ'երգեն, Օրհնեալ, և այլն։

3 Այն երկնային աշխարհն փայլուն
Որո՞ւ ձեռքով եկան,
Ուր որ կայ սէր, խաղաղութիւն,
Ի՞նչ միջոցով մտան։
Կ'երգեն, Օրհնեալ, և այլն։

4 Փրկչին արիւնը թափուելով,
Անով մաքրուեցան.
Այն սուրբ արիւնը բացուելով՝
Ճերմակ, մաքուր եղան։
Կ'երգեն, Օրհնեալ, և այլն։

5 Փրկչին շընորհքը խնդրեցին
Որքան որ հոս կեցան,
Ու հիմա հոն կը բընակին,
Կ'օրհնեն զայն յաւիտեան։
Կ'երգեն, Օրհնեալ, և այլն։

## 357 ԲԱՐԻ ՀՈՎԻՒԸ




ՑՈՎՀ. Ժ. 27

2 Եւ քեզմէ թէ որ հեռանամ ես,
Անապատն ու լեռներն երթամ ես,
Գայլերէն շատ պիտի վախնամ ես,
Մեծ դող պիտի ունենամ։
Բայց զիս առ, կ'աղաչեմ, ով Տէրըս,
Զօրացուր իմ տըկար ոտքերըս,
Ու ներէ իմ անթիւ մեղքերըս,
Որ ես քու զառնուկդ ըլլամ։

3 Իմ ճամբաս թէեւ շատ երկայն է,
Բայց միշտ քու օգնութիւնդ ներկայ է.
Զիս յոգնածըս քու ձեռքդ բռնած է,
Քու քովըդ հանգիստ կ'ըլլամ։
Զիս ալ առ, կ'աղաչեմ, ով Տէրըս,
Զօրացուր իմ տըկար ոտքերըս,
Ու ներէ իմ անթիւ մեղքերըս,
Որ ես քու զառնուկդ ըլլամ։

4 Ով Յիսուս, թող քալեմ քու քովըդ,
Ո՛հ, լըւա զիս քու արիւնովըդ,
Իմ հոգիս տար երկինք սիրովըդ,
Որ հոն ապահով ըլլամ։
Հոն կ'ըլլամ ես Փրկչիս առջեւը,
Տամ քեզի գոհութիւն, պատիւը,
Զի դուն ես սիրելի Հովիւը,
Քու քովն յաւիտեան կենամ։

## 358 ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՕԹՔ



## 359 ՊԶՏԻԿ ՏՂՈՒ ՄԸ ՓԱՓԱՔԸ




ՄԱՏԹ. ԺԱ. 16

1 Հրեշտակ մ'ըլլալ կ'ուզեմ ես,
Երկինքը բնակիլ,
Թագ մ'ունենալ գլխուս վրայ,
Եւ սուրբ քընար զարնել.
Այն տեղ Փրկչիս առջեւը
Ցաղթողական երգեր
Պիտի անոյշ լեզուով մը
Երգեմ ցորեկ գիշեր։

2 Այն երջանիկ երկինքը
Ողբի մը ձայն չըլլար,
Եւ չարութիւն գործողը
Այն տեղ բնաւ չերթար.
Բայց օրհնութիւնն ու փառքը
Մաքուր եւ սուրբ սրտով
Պիտի տամ ես Տէրոջը
Անհուն ցընծութիւնով։

3 Ես յանցաւոր տղայ եմ,
Բայց Տէրը կը ներէ,
Եւ իր ծըրի շնորհքովը
Հոգիս պիտի փրկէ։
Ով սիրելի Փրկիչըս,
Երբ մեռնելու ըլլամ,
Հրեշտակներուն խումբովը
Շիտակ քու քովըդ գամ։

4 Ո՛հ, այն օրհնեալ ատեն ես
Հրեշտակ պիտի ըլլամ,
Սրբոց հետ միասին ես
Փրկչիս առջին կենամ.
Փառք, օրհնութիւն, պատիւը
Անոր մատուցանեմ,
Անթիւ օրեր իր քովը
Գիշեր ցորեկ երգեմ։

---

## 358 ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՕԹՔ

ՍԱՂ. ԿԱ. 1

1 Լըսէ իմ ձայն, ով իմ Աստուած,
Թարմ մանկական սըրտիկըս բաց,
Որ քաղցրահոտ ծաղկի նըման
Ըլլամ բազմաբուրեան։

2 Շընորհք տուր ինծ, ով Տէր արդար,
Եղիր ինծի միշտ հոգատար,
Որ առաւօտ եւ իրիկուն
Օրհնեմ քու սուրբ անունն։

3 Պարկեշտ ըլլամ ամէն ատեն,
Որ ուրիշներ ալ զիս չատեն,
Սիրեմ ընկերս սրտով մը հեզ,
Սիրեմ ծընողքս եւ քեզ։

4 Տուր, ծընողացս ուրախութեան
Պատճառ ըլլամ ամէն վայրկեան.
Եւ քեզ ըլլամ բարի որդի,
Ժառանգըդ արժանի։

## 360 ՏՂՈՒՆ ԱՂՕԹՔԸ



ԽՍ. խ. 11

1 Ով Փրկիչ մեր, կ'աղաչենք,
Խեղճ մեղանչական մենք ենք.
Միշտ յիշէ մեզ,
Միշտ սիրէ մեզ,
Քաղցըր խնամքդ կ'ուզենք։
Մեր Թագաւորն քեզ կ'անուանենք,
Մեր սրտերն կը նուիրենք.
Միշտ պահէ մեզ,
Եւ օրհնէ մեզ,
Մինչ երկնից մէջ սէրդ գովենք։

2 Դուն գըթած ես. երբոր մենք
Սուրբ ճամբէդ կը մոլորինք,
Դուն դարձուր մեզ,
Եւ ուղղէ մեզ,
Որ ետեւէդ քալենք։
Մեր Թագաւորն քեզ կ'անուանենք,
Մեր սրտերն կը նուիրենք.
Միշտ պահէ մեզ,
Եւ օրհնէ մեզ,
Մինչ երկնից մէջ սէրդ գովենք։

3 Տէր, շնորհէ որ, կեանքն անցած,
Քեզ տեսնենք, աթոռդ նըստած.
Հոն օրհնենք քեզ,
Եւ պատուենք քեզ,
Զի ենք քեզմով փրկուած։
Մեր Թագաւորն քեզ կ'անուանենք,
Մեր սրտերն կը նուիրենք.
Միշտ պահէ մեզ,
Եւ օրհնէ մեզ,
Մինչ երկնից մէջ սէրդ գովենք։

Թարգ. I. F. PETTIBONE

## 361 ՈՎՍԱՆՆԱ




Ղուկ. Բ. 13, 14

2 Ահա մանկունք ցնծմամբ կ'երգեն
Ովսաննա Քրիստոս Արքային.
Փրկչին գալուստն կը հռչակեն,
Եւ փրկութիւն մեղաւորին։
Փառաբանութիւն երգենք, եւ այլն։

3 Մեսիա անունն ցնծում տըւաւ
Ամէն Հրէի, հեթանոսի.
Զի իր արեամբ մեղքը վերցաւ,
Ուստի երգենք սէրն Յիսուսի,
Փառաբանութիւն երգենք, եւ այլն։

## 362 ԱՆՁՆԱՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ







ՍԱՂ. ՃԺԶ. 12-14

1 Տէր Յիսուսին ի՛նչ նըւիրեմ,
Որ զինքն ինծի տըւաւ.
Իմ սէրըս ի՛նչպէս ցուցընեմ,
Որ ինքն իմ տեղս մեռաւ,

2 Սէրս Յիսուսին կը նըւիրեմ
Մանկութենէս ի վեր.
Նըւաստ ընծաս, ես լաւ գիտեմ,
Բընաւ ինք չանարգեր։

3 Հոգիս Տէր Յիսուսին կու տամ.
Կարող է փրկելու
Եւ պահելու, մինչ ես երթամ
Երեսը տեսնելու։

4 Իմ Վարքս տամ Տէր Յիսուսին,
Բոլոր իմ խորհուրդներս,
Անոր ճշմարտութեան խօսքին.
Նըւիրելով ժամերս։

5 Իմ ժամանակս տամ Յիսուսին,
Իրեն հետեւելով.
Ո՛հ թէ բոլոր օրերս լեցուին
Սուրբ, օգտակար գործով։

6 Իմ ստացուածքս նըւիրեմ
Քեզ, Տէր Յիսուս, շատ չէ.
Սակայն ինչ որ ունիմ եւ եմ՝
Ընդունելով օրհնէ։

Թարգ. ELIAS RIGGS

# 363 ԵՐԲ ԻՐ ԳԱՆՁԸ




ՄԱՂ. Գ. 17

1 Երբ իր գանձը, երբ իր գանձը
ժողվէ մեր Փըրկիչը,
Իր բոլոր սիրելիները,
Իրեն սեփհական,
Պատուական քարերու պէս,
Առտուան աստղերուն պէս
Փայլելով՝ անոր թագը
Պիտի զարդարեն։

2 Արդարները, արդարները
Իր արքայութեան մէջ
Ժողվելով՝ իր աթոռին վրայ
Պիտի նստեցնէ։
Պատուական քարերու պէս,
Առտուան աստղերուն պէս
Փայլելով՝ անոր թագը
Պիտի զարդարեն։

3 Մանուկները, մանուկները,
Որ զինքը սիրած են,
Պիտ՝ ըլլան իր գոհարները,
Իրեն սեփհական։
Պատուական քարերու պէս,
Առտուան աստղերուն պէս
Փայլելով՝ անոր թագը
Պիտի զարդարեն։



Թարգ. ELIAS RIGGS

## 364 ՍՈՒՐԲ ՏՂԱՅՔ




ՂՈՒԿ. ԺԸ. 16

1 Մութ գետէն անդին կան
Շատ տըղայք փոքրիկ,
Որ մեղքէ ազատ են
Հոն միշտ երջանիկ։
Ամառուան ծաղիկներէն
Գեր ի վերոյ գեղով՝
Կը ցնծան ու միշտ կ՚երգեն
Նոր ընկըռուած փառքով։

2 Հոս անոնց աչքերը
Դառն կը թափէին
Արտասուք. իսկ վերը՝
Հիմա կը զմայլին։
Հիմա քաջավարժ մատերն
Քնարները կը զարնեն,
Եւ անոնց անոյշ երգերն
Փրկիչը կը գովեն։

3 Զի անոնց ամէնը
Ինքը հոն ժողվեց.
Մոլորած ատենը
Ինք զանոնք փնտռեց։
Ոչ ոսկի եւ ոչ զոհարք
Կրնար զանոնք փրկել.
Իր անգին արիւնն փրկանք
Տըւաւ Էմմանուէլ։

4 Այն տըղոց բաժինը
Ինծ ալ տըրուեցաւ.
Կը գովեմ Փրկիչըս
Որ իմ տեղս մեռաւ։
Ես անոր արեամբ փրկուած
Պիտի հոս խաչս տանիմ,
Ետքն ելլեմ ու հրեշտակաց
Դասուն հետ խառնըւիմ։

## 365 ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ ԳՈՐԾ ԵՐԿՆԻՑ ՄԷՋ




Ա. ԿՈՐ. Բ. 9

2 Աստուծոյ իմաստուն գործերուն վրայով
Պիտի հոն նոր բաներ միշտ սորվին,
Եւ երկրիս բարիներն հոն առաջ երթալով՝
Ուսուցիչ կ'ըլլան նոր հասնողին.
Պիտի գործ ունենանք,
Պիտի գործ ունենանք,
Տըղաքներ պիտի գործ ունենանք.
Այն փայլուն երկրին մէջ,
Ուր որ լոյս կայ անշէջ,
Տըղաքներ պիտի գործ ունենանք.

3 Եւ ինչպէս որ մեր Հայրը իր սուրբ հրեշտակներն
Կը ղրկէ իր որդւոց օգնելու,
Կարելի է մեզի ալ ղրկէ տղաքներն՝
Իր սիրոյն պատգամներն բերելու.
Պիտի գործ ունենանք,
Պիտի գործ ունենանք,
Տըղաքներ պիտի գործ ունենանք.
Այն փայլուն երկրին մէջ,
Ուր որ լոյս կայ անշէջ,
Տըղաքներ պիտի գործ ունենանք.

Թարգ. ELIAS RIGGS

## 366 ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ




ՍԱՂ. Գ. 5

3 Օգնէ ինծ որ ես կատարեմ,
Հայր իմ, առ քեզ իմ պարտքս ամէն.
Ըլլամ ազնիւ եւ բարեսիրտ
Ուրիշներուն չըլլամ ես բիրտ։

4 Ինչ որ ընեմ, գործեմ, խաղամ,
Օգնէ ինծ որ բարի ըլլամ.
Որչափ մեծնամ, ըլլամ սիրուն,
Հայր իմ, քեզի եւ ամենուն։

## 367 ՄԵՐ ՕՐԵՐԸ ԿԱՐՃ ԵՆ




ԵՍ. Խ. 6-8

2 Ի՜նչ կարճ են մեր օրեր՝
Նըման խոտի ծաղկին.
Երբ կը փըչեն սաստիկ հովեր,
Շուտով կը թառամին։

3 Ողորմութիւնքդ մեծ են,
Բընաւ վախճան չունին.
Եւ սերունդէ սերունդ՝ ամէն
Խոստումներդ կը կատարուին։

## 368 ԿԵՆԱՑՍ ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԱՊԱՒԷՆԸ




ՍԱՂ. Գ.

2 Դուն մարդն փոշի կը դարձունես,
«Մարդոց որդիք, դարձէք,» կ'ըսես.
Քանզի առջիդ հազար տարին
Նըման է երէկուան օրին։

3 Ջանոնք բոլոր անյայտ կ'ընես,
Կ'ըլլան շուտով երազի պէս.
Առտուն աղուոր ծաղիկ կու տան,
Բայց իրիկունը կը չորնան։

4 Մարդիկ քու ոյժըդ չեն ճանչնար,
Ով Տէր, քեզմէ ալ չեն վախնար.
Մեր օրերուն թիւն սորվեցուր,
Ու երկնային հանճար մեզ տուր։

5 Ծառաներուդ թող երեւնայ
Քու գործդ, եւ փառքդ յայտնի ըլլայ.
Տէր, թող քու լոյսդ մեզի ծագէ,
Դուն մեր ձեռաց գործերն օրհնէ։

Թարգ. ELIAS RIGGS

## 369 «ՀՈՍ ՄՆԱՅՈՒՆ ՔԱՂԱՔ ՉՈՒՆԻՆՔ»

ԵԲՐ. ԺԳ. 14

1 Այս աշխարհիս ունայնութիւն
Խաբեց, ո՜հ, ինչ մեծ բազմութիւն.
Չըլլայ մենք ալ անով խաբուինք.
Հոս մընայուն քաղաք չունինք։

2 Ագահութեան չար ծընունդներ՝
Ատելութիւն, նախանձ ու հեռ,
Մէկդի ձըգենք, հեռու փախչինք.
Հոս մընայուն քաղաք չունինք։

3 Ամէն ինչ որ շահինք հոս մենք,
Անով մարդոց բարիք ընենք.
Գանձ դիզելու թող չըզբաղինք.
Հոս մընայուն քաղաք չունինք։

4 Օ՜ն, ցնծումով դէպ ի երկինք
Քալենք, ան է մեր հայրենիք,
Թէ որ հաւատք ու սէր ունինք.
Հոս մընայուն քաղաք չունինք։

5 Բարի, խոհեմ ու գործունեայ
Կեանքեր վարենք, քանի լոյս կայ.
Երբ մահը գայ, հասնինք երկինք.
Հոս մընայուն քաղաք չունինք։



Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 370 ԵՐԿՆԻՑ ՀԱՄԱՐ ՓԱՓԱՔ




ՅԱԿ. Դ. 15

2 Տես, այն փառքը մեծափայլ է,
Զես կրնար նըկարագրել.
Հոն Յիսուս Փրկիչդ նստած է,
Սուրբերուն Արքայն եւ Տէր,
Բաց, եւ այլն։

3 Մեծ փառքով իր բոլորտիքը
Երջանիկ հոգիք կ'երգեն.
Յնծումով բոլոր երկինքը
Անդադար կը լեցընեն։
Բաց, եւ այլն։

## 371 ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ԵՐԳԸ



## 372 ՄԵՐ ԿԱՐՃ ԿԵԱՆՔԸ Ի՞ՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԾԵՆՔ




ՍԱՂ. ԼԹ. 4, 5, 13

2 Տէր, դիր առջիս երկնից լուսով
Այն օրն որ պիտի գաս ամպով,
Դատել բոլոր մարդիկ։
Հոն ես ներկայ ըլլամ պիտի,
Վըճիռս ալ անփոփոխ տրուի,
Թշուառ կամ երջանիկ։

3 Ով Հայր, հոգիս դուն նորոգէ,
Անվերջ կենաց խորհուրդն ազդէ
Իմ անըզգայ սրտիս։
Անոր արժէքն ինծ ըզգացուր,
Եւ զիս փրկէ մահէն տըխուր,
Անհուն սիրովն Փրկչիս։

4 Իմ ջանքըս թող միշտ այս ըլլայ
Եւ այս խորհուրդն առջեւս ներկայ,
Կոչումըս հաստատել։
Քու կամքդ ընել ինծի շնորհէ,
Եւ հայրական խրատիդ՝ օգնէ
Մինչ վերջը համբերել։

5 Յայնժամ, Տէր, անարժան հոգիս
Ուրախութեանդ մէջ ընդունիս.
Եւ թող թագաւորեմ
Հոն՝ ուր հաւատքը տեսութիւն
Կ՛ըլլայ, եւ յոյսն՝ երջանկութիւն.
Տեսնեմ քեզ եւ սիրեմ։

---

## 371 ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ԵՐԳԸ

ՅՈԲ. Է. 1-10

2 Դեռ քիչ մը ջանք ալ կայ,
Եւ քիչ մը աշխատանք,
Քանի մը օր ալ վշտալից,
Եւ ալ պիտի չը լանք։
Այն քաղցր օրուան համար,
Ով Տէր, եւ այլն։

3 Քանի մը սուրբ օրեր
Մենք հոս պիտի վայ՛լենք,
Եւ յաւիտենական հանգիստ
Շուտով պիտի մըտնենք։
Այն սուրբ օրուան համար,
Ով Տէր, եւ այլն։

4 Այն որ սիրով մեռաւ
Որ մեզ մահէն փրկէ,
Շուտով կրկին պիտի դառնայ
Ու մեզ իր քովն առնէ։
Այն մեծ օրուան համար,
Ով Տէր, եւ այլն։



Թարգ. I. F. PETTIBONE

## 373 ՄԵՐ ՀՕՐԸ ՏՈՒՆԸ




ՑՈՎՀ. ԺԴ. 2, 3

3 Տեսանք տըխուր աչքեր փակուած
Մեզմէ զատուող մեր սիրելեաց,
Բայց, ա՜հ, վերջին երգն ի՜նչ քաղցր էր,
«Գտնենք զիրար, շատ չի տեւեր։»
Հոսէ, խոր գետ, և այլն։

4 Ըստէպ փըշոտ վայրի ճամբայ
Կոխել, անցնիլ մեզ հարկ կ'ըլլայ.
Եթէ ունինք հաւատք, յոյս, սէր՝
Երնէկ մեզի, շատ չի տեւեր։
Հոսէ, խոր գետ, և այլն։

Թարգ. ՏԻԿԻՆ ՀՌԻՓՍԻՄԷ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 374 ԼՈՒՍՈՅ ԴՌՆԵՐՆ




ՄԱՐԿ. ԺԳ. 35-37

2 Անյայտ է ի՛նչ կայ իմ առջեւըս,
Թէ՛ վիշտ կամ թէ՛ անդորրութիւն.
Այլ գիտեմ թէ ճամբուս աւարտումը
Կայ պատրաստ երկնային օրհնութիւն։
Եւ ո՛ւր որ ճամբաս կը տանի զիս,
Թէ՛ լեռն դըժուարին թէ՛ դաշտերն,
Փրկչիս մեծ սիրովն միշտ քալեմ ես,
Մեղմ կ'ըլլան ա՛լ ճամբուս տագնապներն,
Եւ երբ իր քաղցր ձայնն, և այլն։

3 Անյայտ է ի՛նչ գործ կը սպասէ ինծ,
Ի՛նչ ջանք ապագայ օրերուս.
Լոկ կ'ուզեմ որ եւանդ պարզեւես ինծ,
Եւ օգնես ալ տըկար ձեռքերուս։
Եթէ ընդունայն լըքանիմ ես,
Եւ ցաւ չարաչար զիս նեղէ,
Տուր որ համբերեմ՝ մինչեւ որ Տէրս
Երկինքին մէջ զաղտնիքն բացատրէ։
Եւ երբ իր քաղցր ձայնն, և այլն։

## 375 ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ




Ա ԿՈՐ. ԺԵ. 55-57

2 Իմ սիրելի եղբարք, մի լաք.
Ուրախ եղէք, իմ բարեկամք.
Մեղքէն ազատ եմ, ոչ թշուառ.
Եմ երջանիկ միշտ կատարեալ.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն։

3 Խաւարն գընաց, է արշալոյս,
Ո՛հ, սուրբ քաղաք սփռեց իր լոյս.
Արդարութեան ծագէ արեւ,
Հոգիս տեսաւ դրախտն արդարեւ.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն։

4 Ո՛հ, այս ժողով է սրբազան,
Գառն է անոր գըլուխ, իշխան.
Որոնց փափաքն սուրբ, ջերմեռանդ
Երգէ Տէրոջ նոր երգ զըւարթ.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն։

5 Կարդամ եւ ես երգ յաղթութեան,
Ըլլամ այն սուրբ հօտին անդամ,
Լուսոյ ըզգեստ հագնիմ փայլուն,
Ընկերանամ երգիչ պարուն.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն։

Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ԲԻՐԼԻՉՃԵԱՆ

## 376 ՄԱՀՈՒԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ



## 377 ԿԱՐԵՒՈՐ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ




ԹՈՒՈՑ ԻԳ. 10

1 Աշխարհ եկայ, կ'ապրիմ,
Օրերս, տարիքս կ'անցնին.
Մըտայ հոս յոյսերով,
Խորհիմ, գործեմ, խօսիմ.
Բայց ետքը ո՞ւր։

2 Հասնիմ յաջողութեան,
Բարեաց եւ օրհնութեան,
Առատ զըւարճութեան,
Գրեթէ դրախտի նըման.
Բայց ետքը ո՞ւր։

3 Թէ շատ օրեր վայ'լեմ,
Առողջ կեանք ալ վարեմ,
Բայց վերջապէս կարճ է,
Յաւեր պիտի գտնեմ.
Եւ ետքը ո՞ւր։

4 Կ'ելլեմ ես այն ատեն
Ողորմութեան կեանքէն.
Յոյս, փրկութիւն մէկէն
Կ'անցնին մահուան զալէն.
Իսկ ետքը ո՞ւր։

5 Ահեղ փողին ձայնէն
Ատեանն պիտի ելլեմ,
Եւ մեծ Դատաւորէն
Վըճիռս պիտի լըսեմ.
Բայց ետքը ո՞ւր։

6 Ա՜հ, ո՞ւր անկէ ետեւ,
Մեզ ո՞վ կրնայ պատմել.
Մէկը երկինք կ'ելլէ,
Իսկ միւսն դըժոխք կ'իջնէ.
Ես յայնժամ ո՞ւր։

## 376 ՄԱՀՈՒԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ՆՈՐ. Թ. 27

1 Հարկ է մեռնիլ, պիտի մեռնիմ.
Դեռ չըմեռած, ով Աստուած իմ,
Խնդիրքս քեզի մատուցանեմ.
Դուն ալ լըսէ, Տէր, կ'աղաչեմ։

2 Ինծի հաւատք, յոյս եւ սուրբ սէր
Դուն պարգեւէ, խնդրեմ, ով Տէր,
Որ ուզածիդ պէս միշտ վարուիմ
Եւ երջանիկ մահուամբ մեռնիմ։

3 Մահուան ժամուս իմ քովս կեցիր,
Հըզօր բազուկդ գլխուս տակ դիր.
Վերջին ցաւերըս թեթեւցուր,
Հանգիստ, խաղաղ ինծ մահ մը տուր։

4 Հաւատքս, ով Տէր, միշտ կենդանի
Պահէ մինչեւ որ շունչս հատնի.
Եւ իմ հոգիս ան տեղը գայ
Ուր հաւատքի ա'լ պէտք չըկայ։



Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱՒՈՆԵԱՆ

# 378 ՄԵՌՆՈՂԻՆ ԵՐԳԸ




Բ ՏԻՄ. Դ. 6

2 Շուտով սրբոց հրճուանքն ու երգն
Անշուշտ պիտի լըսեմ.
Արդէն Յորդանանու եզերքն
Ոտքովըս կը կոխեմ։
Խումբեր հրեշտակաց, և այլն։

3 Ո՛հ, մօտեցայ իմ Հօրըս տան
Եւ ցնծութեամբ կ'երգեմ.
Պայծառ խումբեր ահա կու գան,
Թեւոց ձայնն կը լըսեմ։
Խումբեր հրեշտակաց, և այլն։

4 Իմ Յիսուսիս յանձնեմ իմ սիրտս,
Որ ինծ կու տայ պըսակ.
Ինք իր արեամբ սրբեց մեղքերս,
Կու տայ ինծ յաղթանակ։
Խումբեր հրեշտակաց, և այլն։

Թարգ. ELIAS RIGGS

## 379 ԳԵՏԻՆ ԵԶԵՐՔԸ




ՅԱՅՏ. ԻԲ. 1

2 Այն յստակ գետին եզերքը
Երբ ուրախութեամբ կոխենք,
Մենք ալ հոն երկնից երգերը
Անդադար պիտի երգենք։
Այո, մենք ալ, և այլն։

3 Այն պայծառ գետին եզերքը
Երբոր աչքերնիս տեսնէ,
Յայնժամ Աստուծոյ Գառնուկը
Արցունքնիս պիտի սրբէ։
Այո, մենք ալ, և այլն։

4 Այն հանդարտ գետին եզերքը
Քաղցրութեամբ կ'առաջնորդէ
Իր հօտին բարի Հովիւը,
Եւ զանոնք հոն կ'արածէ։
Այո, մենք ալ, և այլն։

5 Այն կենաց գետին եզերքը
Վերջն է մեր պանդխտութեան.
Հոն լեցուի պիտի մեր սիրտը
Քաղցրութեամբ խաղաղութեան։
Այո, մենք ալ, և այլն։



Թարգ. ELIAS RIGGS

# 380 ՄԱԶՈՒԱՆ ԳԵՏԸ




Փիլ. Ա. 21, 23

2 Արտասուաց ձորին այն կողմը՝
Սուրբ դաշտից վրայ շողշողուն
Կատարեալ երջանկութիւն կայ
Անվախճան դարեր փայլուն։
Ո՛հ, կ՚ուզեմ ըլլալ երկնից մէջ՝
Հրեշտակաց անշարժ տուներն,
Ուր չարերն տանջել կարող չեն,
Կը հանգչին ա՛լ յոգնածներն։

3 Նաւ պատրաստ է մութ գետին վրայ
Միւս եզերքն զիս տանելու,
Որ անցնի նեղուած հոգիս հոն՝
Ուր չըկայ բան նեղելու։
Ո՛հ, ցնծմամբ կ՚երթամ հանգիստը,
Ուր Յիսուս կայ եւ սուրբերն.
Հոն չարերն տանջել կարող չեն,
Կը հանգչին ա՛լ յոգնածներն։

Թարգ. ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

## 381 ՀՈՆ ՑԱՒ ՉԿԱՅ




ՅԱՅՏ. ԻԱ. 4

1 Սիրելիներս, եկէք,
Երբ մեռնելու մօտ եմ,
Երկնից վրայով ինծ երգեցէք,
Երգով թող վեր ելլեմ։
Հոն ցաւ, և այլն։

2 Երբ ճակատէս կաթին
Մահուան ցուրտ ծանր քրտինք,
Թող ցնծութեան երգեր լըսուին,
Հոս ըսկըսի երկինք։
Հոն ցաւ, և այլն։

3 Վախճանըս հասնելուն՝
Երեսըս դիտեցէք,
Որ վրաս երկնից խաղաղութիւն,
Փառաց նըշոյլ տեսնէք։
Հոն ցաւ, և այլն։

4 Թող Սիօնի երգերն
Լսեմ երբոր մեկնիմ.
Գտնեմ երգի քաղցր բարեւներն
Երբոր երկինք հասնիմ։
Հոն ցաւ, և այլն։

5 Ա՛լ չըտեսնող աչքերս
Սիրով դուք գոցեցէք,
Եւ պաղ ու անարիւն ձեռքերս
Կուրծքիս վրայ ծալլեցէք։
Հոն ցաւ, և այլն։

6 Շուրջ անկենդան մարմնոյս
Սիրելիներս գալով—
Թող հոն տիրէ վախի տեղ յոյս—
Երգեն երկնից վրայով։
Հոն ցաւ, և այլն։

Թարգ. ELIAS RIGGS

## 382 ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ՄԱՀԷՆ ՎԱԽՆԱԼՈՒ ՉԷ




ԵԲՐ. Բ. 14, 15

2 Չէ՞ որ մահն է միակ միջոց՝
Որով ազատ կ'ըլլանք ցաւոց
Եւ այս խաւար ու խոր ձորէն,
Ուր միշտ կու լանք մեր ծնած օրէն։

3 Չէ՞ որ մահն է միջոց միակ՝
Որով կրնանք ըլլալ գիտակ
Ան սուրբ, խորին խորհուրդներուն,
Որ հոս ծածուկ են ամէնուն։

4 Չէ՞ որ միայն մահով պիտի
Ապաշխարողն հաւասարի
Սուրբ հրեշտակաց՝ անմահութեամբ,
Երջանկութեամբ եւ զօրութեամբ։

5 Տէր, այս երկիւղն դուն փարատէ,
Չի այս մեզի մեծ արատ է.
Օրհնէ մեզ որ միշտ քաջ ըլլանք,
Եւ մահը թող սեպուի մեզ կեանք։

Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 383 ՄԱՀ ԾԵՐՈՒՆԻ ՊԱՇՏՕՆԷԻ

ՍԱՂ. ՃԺԶ. 15

1 Ով Աստուծոյ ծառայ բարի,
Հանգչէ գործքէդ շատ սիրելի.
Եղար աշխատաւոր քաջ, ժիր.
Տէրոջդ ուրախութիւնն մըտիր։

2 Կէս գիշերուան մէջ ձայն մ'եկաւ.
Յառնեց, ելաւ, ականջ դըրաւ.
Նետ մահացու զինք խոր խոցեց,
Ինկաւ, բայց վախ չըզգաց իր մէջ։

3 Անցան բոլոր ցաւերն մահուան
Եւ աշխատանք, վիշտ տրտմութեան.
Ա՛լ վերջացաւ կենաց խիստ գործ,
Խաղաղութիւն ունի անփորձ։

4 Ով Քրիստոսի ծառայ բարի,
Նոր գործդ է փառք տալ միշտ յերկնի.
Դարուց ի դարըս յաւիտեան
Հանգիր Տէրոջդ յուրախութեան։

Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԻՉՃԵԱՆ

## 385 Ո՞Վ ՊԻՏԻ ԻՆՁ ՀԱՆԴԻՊԻ




Ղ.ՈՒԿ. ԺԶ. 22

2 Երբ Փրկիչըս զիս կանչէ
Եւ տըխուր երկրէս ելլեմ,
Ո՞վ պիտի առաջնորդէ
Որ դըրախտ մտնեմ։
Պիտ' առաջնորդեն ինծ
Փառաւոր հրեշտակներ,
Վեր պիտի տանին զիս
Որ դըրախտ մտնեմ։

3 Բարեկամներէս հեռի,
Հոն ես զո՞վ պիտի սիրեմ.
Ո՞վ սիրէ զիս, ո՞վ տանի
Որ Փրկիչս տեսնեմ։
Հոն պիտի սիրեն զիս
Հրեշտակներ եւ սուրբեր,
Եւ պիտի տանին զիս
Որ Փրկիչս տեսնեմ։

---

## 384 ԳԵՐԵԶՄԱՆ

ՅՈՎՀ. Ի. 19

1 Բաց հիմա ծոցդ, ով գերեզման,
Նորէն եղիր մեր զանձարան.
Հոս տեղ մը տուր այս մարմինին,
Որ մունճ ննջէ մէջ փոշիին։

2 Ո՛չ ցաւ, ո՛չ վիշտ ու ո՛չ վախն ալ
Քու սահմաններդ կրնան մտնալ.
Ի Տէր ննջողն չզգար վայեր,
Ձայն կը հսկեն սուրբ հրեշտակներ։

3 Աստուածորդին ալ հոս ննջեց,
Եւ ինք ալ գերեզմանն օրհնեց.
Հանգչէ հոս դուն, ննջեալ մարմին,
Մինչեւ ծագի առտուն Փրկչին։

4 Ով առաւօտ Փրկչին, ծագէ.
Երկիր, անոր խօսքին լըսէ.
Քեզ պահ տըրուած այս զանձն հանէ,
Որ իր Տէրոջն առջեւ ելլէ։

## 386 ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԲԱՐԵԿԱՄԻ ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ




ՅԱՅՏ. Է. 14-17

1 Ինչո՞ւ վազեն մեր արցունքներն
եւ միշտ մեր | վրայ տի | րէ, ||
Երբ իր իմաստութեամբը Տէրն
Ի րենը | ետ կան | չէ։ ||
Չէ՞ որ հաւատացեալներուն
Օգուտ է | մահն ան | զամ. ||
Կեանք անվախճան եւ փառք կ'առնուն,
Պը | սակ ալ | անթա | ռամ։ ||

2 Իրենց գործն հոս աւարտեցին,
Մեղքէ ա | զատ ե | ղան, ||
Ա՛լ ցաւ կամ աշխատանք չունին,
Երկ | նից համ | գիստն մը | տան։ ||
Աստուած իրենն կանչեց իրեն,
Վիշտ չը տի | րէ մեր | վրայ. ||
Այլ մեր սրտերն թող միշտ ըսեն,
«Քու | կամքըդ, | Հայր, ըլ | լայ։» ||

Թարգ. ELIAS RIGGS

## 387 ՎԵՐՋԱՊԷՍ




ՅԱՅՏ. ԺԳ. 13

1 Վերջապէս գործդ աւարտած,
Տուն հասար ցաւէ դադրած.
Մութ զետէն անցար, ու վերն
Քեզ ողջեկ տուին հրեշտակներն։
Ո՜հ, շնորհաց, և այլն։

2 Մութ ալիք մինչ ուժգնակի
Բախէին քու նաւակի,
Երգեցիր զըւարթաբար,
«Դուռը բաց է ինձ համար։»
Ո՜հ, շնորհաց, և այլն։

3 Օր մը կարճ՝ ցնծման յերկրի
Մեղսալից պանդուխտն բերկրի.
Վերջն սիրոյ Թռիչքով թըռար,
Երկնային քու բնազաւառ։
Ո՜հ, շնորհաց, և այլն։

4 Երբ թրթռան վերջին շեշտեր,
Վերջ գտնեն գործք եւ միշտեր.
Ո՜հ, ցնծմամբ պիտի կրկին
Մենք զիրար գտնենք յերկին։
Ո՜հ, շնորհաց, և այլն։

Թարգ. Ա. Ե. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

## 388 ՎԵՐՋԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ա ԿՈՐ. ԺԳ. 12






Թարգ. C. C. TRACY

## 389 ԳԵՐԵԶՄԱՆ




Բ ԿՈՐ. Ե. 1, 2, 6-8

2 Երկդս օրհնեալ որ շուտ մըտան
Ժառանգութիւնն անմահական.
Ա՛լ չեն յոգնիր, չիք տրտմութիւն,
Պայծառ փայլին ի փառս անհուն։

3 Արդ, մեր արցունք թող ա՛լ ցամքի,
Եւ հառաչանք հեզիկ լըռուի.
Ուրախ սրտով արթուն սպասենք,
Որ երբ կոչուինք, նոր երգ երգենք։



Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՊԻՐԼԸՉԵԱՆ

## 390 ՈՉ, ՈՉ, ԱՍ ՉԷ ՄԵՌՆԻԼԸ




Փիլ. Գ. 20, 21

1 Ո՛չ, ո՛չ, աս չէ մեռնիլը.
Երթալ մեր Աստուծոյն,
Թողուլ աս մութ աշխարհքը,
Մտնել Տէրոջը փառքը,
Մեր հանգստեանը տունն։

2 Ո՛չ, ո՛չ, աս չէ մեռնիլը.
Մեր հայրենիքն երթալ,
Կըրել փառաց պըսակը,
Երգել ան յաղթանակը,
Կուէ ազատ ըլլալ։

3 Ո՛չ, ո՛չ, աս չէ մեռնիլը.
Երթալ բարի Հովուին,
Ճաշել անոյշ արօտը,
Եւ հոն պառկիլ ուր հօտը
Անվախ՝ միշտ կը հանգչին։

4 Ո՛չ, ո՛չ, աս չէ մեռնիլը,
Քեզ գալ, Փրկիչ մարդկան.
Հոդ կայ սիրոյ աղբիւրը,
Անսպառ կենաց ալ ջուրը,
Հոս՝ կաթիլներ միայն։

Թարգ. ELIAS RIGGS

## 391 ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ



## 392 ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ՕՐԸ




ՄԱՏԹ. ԺԶ. 27

2 Այն ատեն երկինք, երկիրը,
Լեռ եւ ծով պիտի փախչին.
Եւ ահով լեցուին չարերը՝
Երբ լսեն ձայնն հրեշտակին.
«Դատաստան կայ
Ամէնուդ պատրաստ հիմա։»

3 Բայց ինչպէս հաւ՚տացեալները
Հոն պիտի ուրախանան,
Աշխարհիս մերժած սուրբերը
Երբ երգեն միաբերան,
«Տէրն օրհնեալ է,
Մեզ իրեն կը հրաւիրէ։»

## 391 ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

ՄԱՏԹ. ԻԵ. 31-46

1 Վրճռեց Տէրն որ ամէն մարդիկ,
Հարուստ, աղքատ, մեծ ու պզտիկ,
Թէ՛ սուրբ ըլլան, թէ՛ անօրէն,
Մեռնին երթան այս աշխարհէն։

2 Ետքն ալ երթան ի դատաստան,
Իրենց գործոց հաշիւը տան.
Զի գայ պիտի դատող արդար՝
Դատել մարդիկ, բարի եւ չար։

3 Բարին եւ չարն պիտի զատէ,
Աջ ու ձախ կողմ պիտի դասէ.
Ամէն մարդու գործքին հաւ՚սար
Պիտի տայ վարձ, պատիժ յարմար։

4 Քեզ կ՚աղաչեմ հիմակուընէ,
Յիսուս, նոյն օրն զիս ընդունէ.
Աջ կողմըդ հոն զիս կայնեցուր,
Ընտրեալներուդ դասն ալ մտցուր.

5 Որ բաղձանքիս ես հասնելով,
Եւ տեսութեամբդ ըզմայլելով՝
Երգ օրհնութեան այն տեղն երգեմ,
Քեզ յաւիտեան փառաւորեմ։

## 393 ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ՕՐԸ




ՅԱՅՏ. Ի. 11, 12, 15

2 Այն օրը ես ո՞ւր գտնըւիմ,
Որ հիմա մահէն կը վախնամ.
Ի՞նչպէս քու առջեւըդ կայնիմ,
Ի՞նչպէս քու երեսըդ տեսնամ։

3 Օրհնեալ Տէր Յիսուս, ողորմէ.
Դուն, դուն ես աղբիւր փրկութեան.
Բոլոր իմ մեղքերըս քաւէ,
Եղիր իմ հոգւոյս ապաստան։

4 Հաւատքըս տըկար է, բայց դուն,
Ով Տէր, անիկա զօրացուր.
Իմ յոյսըս ըրէ հաստատուն,
Հոգիս շընորհքովըդ լեցուր։

5 Ու երբ վերջին փողը լըսուի,
Շնորհէ որ սրբոց հետ ելլեմ.
Աջ կողմըդ ինծի տեղ տըրուի,
Եւ միշտ գովութիւնըդ երգեմ։

## 394 Ո՞Վ ԵՆ ԱՍՈՆՔ



## 395 ՀԱՅՐԵՆԻՔՆ ԱՀԱ Կ'ԵՐԹԱՆՔ




ՅՈՎՀ. ԺԴ. 2, 3

2 Ոհ, ի՜նչ խաղաղ երկիր է ան,
Հայրենիքն ահա կ'երթանք.
Ուր աշխարհիս փիշտերն չըկան,
Հայրենիքն ահա կ'երթանք։
Կապեալը հոն է արձըկուած,
Յոգնածն անոյշ հանգիստ գըտած,
Եւ ցաւ ու մահ ա՛լ դադրած,
Հայրենիքն ահա կ'երթանք։

3 Կ'երթանք, ոհ, ի՜նչ ուրախութիւն,
Հայրենիքն ահա կ'երթանք.
Դրախտի յուսոյ ի՜նչ լիութիւն,
Հայրենիքն ահա կ'երթանք։
Մեր Հօրը տունն մեզի տեղ կայ,
Ուստի երբ մահը մօտենայ,
Մեր ազդակը աս ըլլայ,
Հայրենիքն ահա կ'երթանք։

Թարգ. ELIAS RIGGS

---

## 394 Ո՞Վ ԵՆ ԱՍՈՆՔ

ՅԱՅՏ. Է. 9-17

2 Հըրային տագնապներէն,
Մեծ նեղութենէ ելած՝
Աթոռին առջեւ կ'երգեն
Աստուծոյ կնքով կնքուած։
Հոս իրենց Փրկչին ուժով
Մըցելով, յաղթող ելան,
Լուսափայլ հանդերձներով
Հոն փառաց մէջ կը կենան։

3 Ա՛լ պիտի չանօթենան,
Ոչ կընան ալ ծարաւիլ.
Տաքութիւն անոնց վըրան
Ա՛լ կարող չէ յարձակիլ։
Գառն պիտի հովուէ զանոնք,
Գառն պիտի առաջնորդէ,
Աչքերէն ամէն արցունք
Ինքն Աստուած պիտի սրբէ։

Թարգ. ELIAS RIGGS

## 396 ՕՐՀՆԵԱԼ ԱՇԽԱՐՀ




Ա.ԿՈՐ. Բ. 9

2 Ամէն դէմք կը փայլի
Փառքով պատած.
Սէրն պիտի չը պակսի
Փրկչէն ծագած.
Ո՜հ, այն փառքին վազենք,
Ու պըսակը ժառանգենք,
Լուսոյ պէս հոն փայլինք՝
Միշտ ազատած։

3 Այն սուրբ աշխարհն թռչինք
Մեծ փափաքով.
Ինչո՞ւ ալ երկմըտինք՝
Ձը հաւ'տալով.
Երանելի կ'ըլլանք
Երբ մեղքէն ազատ մընանք,
Տէրոջը քովն երթանք
Միշտ ապահով։

4 Մեր Հօրը տանը մէջ
Խաւար չը կայ.
Լոյս կը փայլի անշէջ
Անոր վըրայ.
Ուստի շուտով ելլենք,
Եւ դէպ ի երկինք վազենք,
Ու երթալով երգենք
Ալէլուիա։

Թարգ. ELIAS RIGGS

## 397 ԵՐԿՆԱՒՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ



## 398 ԳԵՂԵՑԻԿ ՍԻՈՆ




ՅԱՅՏ. ԻԱ. 2-7

3 Ի՜նչ գեղեցիկ այն յաղթանակ.
Ամէն ճակտի վրայ կայ պըսակ.
Ի՜նչ գեղեցիկ ոսկի քընարք,
Որ Աստուծոյ կ'երգեն միշտ փառք։

4 Ի՜նչ գեղեցիկ է այն աթոռն,
Ուր է նստած մեր Թագաւորն.
Ի՜նչ գեղեցիկ բընակարան,
Սրբոց հանգիստը յաւիտեան։

Թարգ. ELIAS RIGGS

## 397 ԵՐԿՆԱՒՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Բ ՕՐ. ԼԴ. 1

1 Երկիր մը կայ ուր որ ցնծում
Սուրբերն կը լեցընէ,
Եւ լի ու անվախճան խնդում
Ամէն վիշտ կ'արտաքսէ։

2 Հոն միշտ ցորեկ է, միշտ գարուն,
Չըկայ գիշեր, ձըմեռ.
Ու անթառամ են եւ սիրուն
Դրախտին մէջ ծաղիկներ։

3 Միայն թէ նեղ գետին՝ մահուան
Ալիքը կը բաժնեն
Այն երջանիկ բընակարան
Մեր վշտալից երկրէն։

4 Այս յորդահոս ջուրէն անդին,
Հին Քանանու նըման,
Կանանչ արտերը կ'երեւին,
Մէջտեղը Յորդանան։

5 Մենք երկչոտներս կը սարսափինք
Այս նեղ գետէն անցնիլ.
Ահով եզերքը կը կայնինք,
Եւ կը վախնանք մըխիլ։

6 Եթէ մեզ, Մովսէսի նըման,
Փասգա ելլել տրուէր,
Ա՛լ մեզ մահուան ցուրտ Յորդանան
Պիտի չը վախցընէր։

Թարգ. ELIAS RIGGS

# 399 ՅՈԳՆԱԾԻՆ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԻՍՏ




ՆԲՐ. Գ. 9

1 Քրիստոնեայ, քու հայրենիքըդ
Փառաւոր հանգիստ մը կայ.
Հոն գընաց սիրած Փրկիչըդ,
Եւ նորէն քեզի կու գայ։
Յոգնածին հոն հանգիստ կայ, եւ այլն։

2 Քեզ կը պատրաստէ քու Տէրըդ
Մընայուն բընակարան.
Քանզի կենալու օրերըդ
Հոն սակաւ պիտի չըլլան։
Յոգնածին հոն հանգիստ կայ, եւ այլն։

3 Վիշտ կամ ցաւ այն սուրբ երկրին մէջ
Ա՛լ բընաւ պիտի չըլլայ.
Այլ սրբոց եւ հրեշտակաց մէջ
Քեզ կենաց պըսակ մը կայ։
Յոգնածին հոն հանգիստ կայ, եւ այլն։

4 Մահ, դըժոխք ա՛լ յաղթըւած են,
Փրկեալնե՛ր, ուրախացէք.
Սիօնի դռներն բացուած են.
Ցնծութեամբ պիտի մտնէք։
Յոգնածին հոն հանգիստ կայ, եւ այլն։

Թարգ. ELIAS RIGGS

## 400 «ՎԵՐԻ ԲԱՆԵՐԸ ՄՏԱԾԵՑԷՔ»



ԿՈՂ. Գ. 1, 2

1 Ո՛վ լուսափայլ երկինք,
Արեւդ Գառնուկն է ինք.
Լուսոյ որդիք հոդ են՝
Փառաւորեալ ամէնն.
Ո՛հ, իմ խորհուրդս միշտ վեր ելլէ,
Զար կիրք, մեղք սիրտս ա՛լ չը բռնէ։

2 Ամէնն սիրելիներ,
Է գործերնին լոկ սէր.
Հագած են սրբութիւն,
Ունին խաղաղութիւն.
Ո՛հ, իմ խորհուրդս միշտ վեր ելլէ,
Պիղծ հեշտութիւն սիրտս չը բռնէ։

3 Մեղք չը մտներ հոդ բնաւ,
Ամէն բան ճիշդ կարգաւ
Միշտ միաբան կ'ըլլայ,
Միմեանց վնասել չըկայ.
Ո՛հ, իմ խորհուրդս միշտ վեր ելլէ,
Հըպարտութիւն սիրտս չը բռնէ։

4 Սուրբերդ թագաւորներ
Են՝ դրած ոսկի պսակներ.
Ունին կեանք անվախճան,
Ուրախ են յաւիտեան.
Ո՛հ, իմ խորհուրդս միշտ վեր ելլէ,
Փառքն աշխարհի սիրտս չը բռնէ։

5 Փրկչին իմաստութեան
Ամէնքն հաղորդ կ'ըլլան.
Ծոխ գիտութեան փափաք
Հոդ կը լըցուի արագ.
Ո՛հ, իմ խորհուրդս միշտ վեր ելլէ,
Սուտ գիտութիւն սիրտս չը բռնէ։

6 Իմ փափաքներս բոլոր
Պիտի լըցուին այն օր,
Երբ հոդ ըլլամ բնակիչ
Փրկչիս շնորհիւն քաւիչ.
Արդ իմ խորհուրդս թող վեր ելլէ,
Զար կիրք, մեղք սիրտս ա՛լ չը բռնէ։

ՄԿՐՏԻՉ Տ. ԲԻՐԷՉՃԵԱՆ

## 401 ՍԻՐՈ՜ՒՆ ԱՊԱԳԱՅ




ՅԱՅՏ. Ե. 9-14

1 Կայ երկիր պանծալի եւ փայլուն,
Եւ կրնանք հաւատքով զայն տեսնել.
Հոն Աստուած պալատներ շողշողուն
Խոստացաւ մեզ համար պատրաստել։
Ո՜հ, սիրո՜ւն, ե. այլն։

2 Բարերար եւ սուրբ Հօր երկնային
Կ՚ընծայենք գոհութեան պարգեւներն.
Զի շնորհեց իր Որդին միածին,
Մեծ յոյսով ալ կ՚օրհնէ մեր օրերն։
Ո՜հ, սիրո՜ւն, ե. այլն։

3 Պիտ՝ երգենք քաղցրաձայն երգ Դառին,
Երբ հասնինք այն եզերքն գեղեցիկ.
Սրտերնիս ա՛լ պիտի չըր տրտմին,
Երբ կազմենք խումբ սրբոց երջանիկ։
Ո՜հ, սիրո՜ւն, ե. այլն։

4 Պիտ՝ հանգչինք այն եզերքն փառաւոր,
Եւ պըսակ անթառամ ժառանգենք.
Ձերծ մեղքէն, երջանիկ եւ անվորր,
Յաւիտեան մեր Փրկիչն ալ գովենք։
Ո՜հ, սիրո՜ւն, ե. այլն։

# 402 ԱԿՆ ՈՒՆԻՆՔ ՄԵՆՔ




ՂՈՒԿ. ԺԲ. 37

1 Ակն ունինք մենք, կըսպասենք մենք,
Այն լուսապայծառ օրուան,
Երբ շուքերը, խոնջ շուքերը,
Աշխարհէս պիտի վերնան։
Թող փուԹայ քաղցր արշալոյսը,
Եւ առաւօտեան մեծ յոյսը,
Թող փուԹայ քաղցր արշալոյսը
Խոստացեալ փայլուն օրուան։

2 Ակն ունինք մենք, կը սպասենք մենք
Ցուսալից առտուան աստղին,
Երբ անցնի մեղաց գիշերը,
Ցաւք ցնդին ալ լիովին։
Թող փուԹայ քաղցր արշալոյսը,
Եւ առաւօտեան մեծ յոյսը,
Թող փուԹայ քաղցր արշալոյսը
Խոստացեալ փայլուն օրուան։

3 Ակն ունինք մենք, կը սպասենք մենք
Տեառն ճաճանչազեղ օրուան,
Որ լուսաւորէ աշխարհը
Եւ ցոյց տայ երկնից ճամբան։
Թող փուԹայ քաղցր արշալոյսը,
Եւ առաւօտեան մեծ յոյսը,
Թող փուԹայ քաղցր արշալոյսը
Խոստացեալ փայլուն օրուան։

## 403 ՏԷՐՈՋՆ ՀԵՏ




Ա. ԹԵՍ. Դ. 16

1 «Տէրոջն հետ յաւիտեան,»
Ի՛նչ մըխիթարութիւն.
Անոր խօսքերն ինծի կու տան
Կեանք եւ անմահութիւն։
Մարմնոյս մէջ բանտարկուած՝
Պանդըխտութիւն կ'ընեմ.
Բայց Հայրենեացըս մօտեցած՝
Միշտ վրանըս կը կանգնեմ։

2 Իմ Հօրըս տունը վերն,
Հոգւոյս բընակարա՛ն.
Երբեմն անոր ոսկի դռներն
Ի՛նչ մօտ ինծ կ'երեւնան։
Բընակարա՛ն սիրուն,
Հոգւով կը հառաչեմ
Տեսնել սրբոց ժառանգութիւնն՝
Վերին Երուսաղէմ։

3 Բայց երբ իմ վրաս կ'ելլան
Երկմըտութեան ամպեր,
Նոյեան աղաւնիին նման՝
Հանգիստ մը չեմ գտներ։
Դարձեալ երբ կը ցըրուի
Այն մէգը գիշերուան,
Ուրախ սրտիս վրայ կը փայլի
Աղեղն խաղաղութեան։

## 404 ԲԵՒԼԱ ԵՐԿԻՐ



ՅԱՅՏ. ԻԲ. 1-5

1 Հասայ Բեւլա երկիր սիրուն,
Ուր վայելեմ շատ բերկրութիւն.
Հոս շարունակ կայ լոյս պայծառ,
Եւ օդ գարնան զըւարթարար։
Ո՛վ պերճ Բեւլա, եւ այլն։

2 Հոս պարտէզներ կան գեղեցիկ,
Ջուրերն են զով եւ թափանցիկ,
Եւ գունազեղ ծաղիկներէն
Անուշ հոտեր միշտ կը բուրեն։
Ո՛վ պերճ Բեւլա, եւ այլն։

3 Մեղմ զեփիւռներ ինծ կը բերեն
Ախորժ ձայներ սուրբ քաղաքէն,
Երբ փըրկուածներն, խումբ երկնային,
Ըղձիւ կ'երգեն երգ Գառնուկին։
Ո՛վ պերճ Բեւլա, եւ այլն։

4 Յիսուս է հոս ինծի ընկեր,
Կը հաղորդէ սիրոյ խօսքեր,
Չիս կը տանի կանաչ արօտ.
Իրօք այս տեղն երկնից է մօտ։
Ո՛վ պերճ Բեւլա, եւ այլն։

Թարգ. M. P. PARMELEE

# 405 ԵՐԿՆԻՑ ԵՐՋԱՆԻԿ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ




ԵՍ. ԼԵ. 10

1 Ե՞րբ պիտի մէկտեղ զանք
Եւ միշտ մընանք հոն.
Ու հանգիստ վայելենք
Եւ շատ բարիք հոն.
Աս չար աշխարհը միշտ
Միայն կու տայ մեզ վիշտ.
Հոս չենք գտներ հանգիստ
Բընաւ յաւիտեանս։

2 Ե՞րբ պիտի սէրն բղխի
Իբր կենաց ջուր զուտ,
Ու բընաւ չերեւի
Չար կիրք ու խօսք սուտ.
Երկինքն՝ ամէն հոգի
Միայն ցնծում ունի,
Եւ ոչ ցաւ կը քաշուի
Բընաւ յաւիտեանս։

3 Հոն շուտ տար մեր հոգին,
Դուն, ով Փրկիչ մեր.
Թող որդիքդ ժողովին,
Քեզ միշտ տեսնեն, Տէր.
Ուր որ անթիւ սուրբեր
Կ՚երգեն ցորեկ գիշեր.
Չեն դադարիր երգերն
Բընաւ յաւիտեանս։

4 Շուտ պիտի մէկտեղ զանք,
Եւ միշտ մընանք հոն.
Ու հանգիստ վայելենք
Եւ շատ բարիք հոն.
Մեր սիրտն հանգչի պիտի
Ջերծ ցաւերէն երկրի.
Մեր երգն ալ չը դադրի
Բընաւ յաւիտեանս։

## 406 ՏՈՒՆ ՈՒՆԻՄ Ի ԲԱՐՁՈՒՆՍ



ԵԲՐ. ԺԱ. 16

1 Ով տուն, որ ես վերն, ի բարձո՛ւնս,
Կառուցուած գետոյն քով լուսեղէն,
Ուր ճերմակ հանդերձներ ըզգեցած՝
Փրկեալներն անդադար նըւագեն
Ի բարձունս, և այլն։

2 Հո՛ն, իմ սիրելիք, ի բարձո՛ւնս,
Որ թողած են աշխարհս այս նըսեմ,
Ի՜նչ անխառն հրճուանքով արդ կ'երգեն
Աստուծոյ պալատին մէջ վըսեմ,
Ի բարձունս, և այլն։

3 Հո՛ն է իմ Փրկիչս, ի բարձո՛ւնս,
Որ խաչին վրայ մեռաւ ինծ համար,
Ես ալ ցաւ ու հոգերս հոս թողած՝
Սըլանամ այն երկիրը պայծառ,
Ի բարձունս, և այլն։

4 Օ՜ն, շուտ երթամ տունս, ի բարձո՛ւնս,
Քանզի ես կը տեսնեմ ծայրն ճամբուս.
Իմ սրտիս սիրելիքն, ի բարձո՛ւնս,
Անձկանօք կը սպասեն երթալուս,
Ի բարձունս, և այլն։

Թարգ. ՍՏԵՓԱՆ Ա. ՋՈՐԻԿԵԱՆ

## 407 ԵՐԿԻՆՔ




Ա ՑՈՎՀ. Գ. 2

2 Կ'ըսենք թէ ազատ է մեղքէն,
Թէ հոն չը կայ բան մը անարգ,
Ոչ վտանգ, թէ՛ ներսէն թէ՛ դուրսէն,
Բայց Յս. Քր.-ն է ի՛նչ փառք։

3 Կ'ըսենք թէ երկնից մէջ կայ սէր,
Երգոց անդադար արձագանգ,
Նաեւ բիւր ոսկի քընարներ,
Բայց Յս. Քր.-ն է ի՛նչ հրճուանք։

4 Գառնուկը իր փառքն է հագած
Վերի Սիոնին վրայ՝ կ'ըսենք,
Սրբոց մէջ աթոռն է նստած,
Բայց Յս. Քր.-ն է ի՛նչ սեպենք։

5 Փափաք երկնային, կ'աղաչենք,
Հոգիդ, Տէր, մեր մէջ ներգործէ,
Որ վերջը փորձով ճանաչենք,
Թէ Յս. Քր.-ն է ի՛նչ է։

Թարգ. ELIAS RIGGS

## 408 ԵՐԿՆԱՒՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄ



## 409 ԱՆՑԱԾ Է ՑԱՒԸ




ՑԱՅՏ. ԻԱ. 4

1 Անցած է ցաւ, արիւն, քրտինք,
Անցած է խաչ եւ նախատինք.
Անմահ լուսով փայլի երկինք։
Ալէլուիա։

2 Անցած է մութը գիշերուան,
Անցած է շուքն ահեղ մահուան,
Փոխուած է ցաւ՝ ուրախութեան։
Ալէլուիա։

3 Մեր հոգիներն մահուան շուքէն
Անմահ եղած պիտի ելլեն.
Ու յաղթական պիտի երգեն
Ալէլուիա։

4 Հիմա իսկ, Աստուծոյ սիրով,
Մեր վախերէն ազատելով,
Երգեն անմահութեան յուսով
Ալէլուիա։

Թարգ. C. C. TRACY

---

## 408 ԵՐԿՆԱՒՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՑԱՅՏ. ԻԱ. 1-3

2 Ե՞րբ, ո՛վ Տէրոջըս սուրբ քաղաք,
Պալատդ մտնեմ պիտի,
Ուր չարճըկուին սուրբ ժողովներն,
Հոն է միշտ Կիրակի։

3 Հոն երջանիկ են միշտ ամէնն,
Ո՛չ մեղք եւ ո՛չ վիշտ կայ.
Օրհնեա՛լ քաղաք, աս չար երկրէն
Հոգիս քեզի թող գայ։

4 Ինչո՞ւ մահուան ցաւէն խորշիմ,
Ինչո՞ւ վախնամ, դողամ.
Ժառանգութիւնս առջեւս ունիմ,
Պըսակն իմ անթառամ։

5 Երուսաղէ՛մ, տուն փառաւոր,
Քեզ սիրտըս կը տենչայ.
Ցայնժամ վիշտերս պիտի վերնան,
Երբ աչքըս քեզ տեսնայ։

## 410 ՏՈՒՆ ՓԱՌԱՒՈՐ




ՅԱՅՏ. ԻԲ. 1-5

2 Տո՜ւն՝ ուր զետին քով կենաց,
Տո՜ւն փառաւոր, տո՜ւն փառաւոր,
Ջերծ յերկրաւոր զբաղմանց,
Տո՜ւն վերին փառաւոր.
Տուն՝ ուր զոհէ ազատում կապեալն,
Տուն՝ ուր յաւէրժ ցաւք են դադարեալ,
Հոն խաղաղ կը բնակի փրկեալն,
Երջանիկ յաւիտեան։ Ո՜վ, և այլն։

3 Ո՜վ փառաւոր գահուն տուն,
Տո՜ւն փառաւոր, տո՜ւն փառաւոր,
Ո՜վ տուն երգչաց սուրբ դասուն,
Տո՜ւն վերին փառաւոր.
Սուրբ օծեալն հրեշտակաց պայծառ,
Փրկելոց, օրհնեալ բնազաւառ,
Ուր կը տիրէ ցնծում անըսպառ,
Տո՜ւնըդ ուրախարար։ Ո՜վ, և այլն։

4 Ո՜վ տուն յոսկի քաղաքի,
Տո՜ւն փառաւոր, տո՜ւն փառաւոր.
Քու հաճոյքդ ի՜նչ տենչալի,
Տո՜ւն վերին փառաւոր.
Ո՜վ տուն, դու գեղեցիկ օծեալան,
Տուն՝ ուր տըղայք Փրկիչն կը տեսնան,
Կ՚երկրպագեն նըմա անվախճան
Գովութեամբ յաւիտեան։ Ո՜վ, և այլն։

## 411 ՄԱՅՐ ՍԻՐԵԼԻ, ԵՐՈՒՍԱՂԷՄ




ՅԱՅՏ. ԻԱ. 22-27

2 Քեզ չսքողեր մէկ ամպ տըխուր,
Քու մէջդ գիշեր չի կայ,
Զի Աստուծոյ լուսոյն անշէջ
Ամէն հոգի շողայ։
Հոն չար կիրքերը տեղ չունին,
Նախանձ հոն չի տիրեր.
Ո՛չ սով, ո՛չ ցուրտ, ո՛չ տաքութիւն
Կ՚աւրէ այն հաճոյքներ։

3 Քու պարտէզներդ են զարդարուն
Անոյշ ծաղիկներով,
Բընակիչներդ կը յագենան
Անոյշ պըտուղներով,
Քու ջուրերուդ քով հրեշտակներ,
Կ՚երգեն երգեր վըսեմ.
Աչքերս քեզ ե՞րբ տեսնեն պիտի,
Ո՛վ Մայր Երուսաղէմ։

Թարգ. C. C. TRACY

## 412 ԴՐԱԽՏ



## 413 ՍՈՒՐԲԵՐ ՓԱՌԱՑ ՄԷՋ




ԵԲՐ. ԺԲ. 1

1 Բազում վըկայք հոս քեզ դաւանեցան,
Ով Տէր, եւ վիշտերէ հանգիստ անցան.
Կու տանք անոնց համար փառք քու անուան.
Ալէլուիա։

2 Դուն ոյժ էիր անոնց, բերդ հաստատուն,
Անոնց ուղղիչն ու առաջնորդը դուն,
Լուսոյդ խաւարն անոնց եղաւ փայլուն.
Ալէլուիա։

3 Մենք ալ դիտենք անոնց քաջ օրինակ,
Մերն ալ ըլլայ անոնց օրհնեալ վիճակ,
Անոնց նըման առնենք կենաց պըսակ.
Ալէլուիա։

4 Ո՜հ, միութիւն ընտիր, աստուածային,
Անոնք եւ մենք, Տէր, քոյդ են, մէկ մարմին.
Մենք ճիգ ունինք, անոնք փառքով փայլին.
Ալէլուիա։

5 Մօտ է հանգիստ, մօտ է դըրախտ սիրուն,
Եւ յարուցեալ սուրբեր, թըռով անհուն,
Ընկերք՝ Տէրոջը յաղթական ճամբուն.
Ալէլուիա։

6 Ահա, երկրիս հեռու սահմաններէն,
Սուրբեր խըռնեալ ի դուռ մարգարտեղէն՝
Հօր եւ Որդւոյ, Հոգւոյն Սրբոյ կ՚երգեն
Ալէլուիա։

Թարգ. C. C. TRACY

---

## 412 ԴՐԱԽՏ

Ղուկ. ԻԳ. 43

2 Անկում ահեղ մեղք եւ ամօթ
Հոն յաւիտեան են անծանօթ.
Մահ եւ անէծք, սուր բոցեղէն
Խորտակուած են սրբոց ցեղէն։ Եւ այլն։

3 Տխրած ճակատ, գլուխ ալեհեր,
Թափուր աթոռ, սիրտ կարեվէր,
Ու շիրիմներ չի տեսներ մարդ
Այն դրախտին մէջ լուսազըւարթ։ Եւ այլն։

4 Աւազակն իսկ, չըմեռած դեռ,
Զեղջուլ գոչեց, «Յիշէ զիս, Տէր.»
Եւ Տէրն ըսաւ անմիջապէս,
«Այսօր ինծ հետ դրախտ կը մտնես։» Եւ այլն։

5 Ո՜հ, օր անճառ, երբ իջնէ Տէր,
Պիտի դադրին անէծք, վիշտեր,
Եւ բիւր սուրբեր, քնարներ առած,
Պիտի գովեն դրախտն փառաց։ Եւ այլն։

# 414 ՆՈՐ ԵՐԳԸ




ՑԱՅՏ. ԺԴ. 1-3

2 Անբաւ դարեր մինչեւ անցնին,
Անբաւ սիրով պիտի լեցուին,
Եւ տեսարանք երջանկութեան
Անոնց առջեւ միշտ նոր ըլլան։
Այն երգը, ե. այլն։

3 Ո՛հ, գործ անոյշ՝ այն խորութիւնն
Շնորհաց ճանչնալ՝ ու բարձրութիւնն.
Մեղքէ՝ վիշտէ ազատ լինիլ,
Փրկչին հետ յաւիտեան ապրիլ։
Այն երգը, ե. այլն։

4 Ո՛հ, իմ հոգիս կը փափաքի
Որ թեւ պարզէ եւ վեր թռչի.
Սրբոց նոր երգն ես հոն երգեմ,
Փրկչիս առջեւ երկրպագեմ։
Այն երգը, ե. այլն։



Թարգ. R. M. COLE

# 415 ՓԱՌՔԻ ԵՐԳԸ




Ա. ՑՈՎՀ. Գ. 2

2 Երբ իմ Փրկիչս անհուն իր շնորհքով
Տեղ մը տայ ինծ երկնից մէջ իրեն քով,
Հոն ըլլալ, հոն զինք տեսնել ինծ համար
Փառք մը կ'արժէ դարերու համար։
Ո՛հ, այդ շատ մեծ, և այլն։

3 Թող սիրելիքս երկնից մէջ քովս ըլլան,
Եւ խրախճանք շուրջս հոսի գետի նման.
Բայց իմ Փրկչիս մէկ ժըպիտն ինծ համար
Փառք մը կ'արժէ դարերու անհամար։
Ո՛հ, այդ շատ մեծ, և այլն։

Թարգ. ՍԱՄՈՒԷԼ Կ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

# ԿՑՈՒՐԴՆԵՐ

## 416 Կ'ՕՐՀՆԵՆՔ ՔԵԶ, ԱՍՏՈՒԱԾ




Chorus
Soli
կեն, եր-կինք եւ զօ—րու-թիւնք երկ—նից Քե — զի քե—րով—բէք,
քե-րով-բէք եւ սե-րով-բէք ան-դա-դար կ'եր—գեն. Քե — զի
Adagio
քե-րով-բէք, քե-րով-բէք եւ սե-րով-բէք ան-դա-դար կ'եր-գեն. Սուրբ
ես, սուրբ ես, սուրբ ես դու, Տէր Աստ-ուած զօ—րաց.
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես դու, Տէր Աստ-ուած զօ-րաց.










## 417 ՈՎ ԱՍՏՈՒԱԾ, ԲԱՐՁՐԱՑԻՐ ԵՐԿԻՆՔԻՆ ՎՐԱՅ

ՍԱՂ. ԾԷ. 5, 7-11




լոր երկ — րի վրայ ըլ — լայ. Ով Տէր Աստուած, բարձ-րա-ցիր դու եր—կին—
Ով . . . .
քին վրայ, Եւ քու փառքդ բոլոր եր-կրի վրայ ըլ—լայ. իմ սիրտս պատ—
Եւ քու փառքդ բո-լոր եր-կրի . . . . . վրայ ըլ — լայ.
րաստ է, ով Տէր, իմ սիրտս պատրաստ է.
իմ սիրտս պատ-րաստ է, ով Տէր, իմ սիրտս պատ—
րաստ է, Պի—տի եր — գեմ ու սաղ-մոս պիտ' ը — սեմ. Զար-թի՛ր, ով իմ
փառ-քըս, զարթիր, քնար, տա-ւիղ. Զար-թի՛ր, ով իմ փառ-քըս, զար-թիր, քնար, տա—


ւիդ. Ես կա — նուխ պի — տի զարթ-նում. Ով Տէր, ժո—ղո—վըր-
դոց մէջ պի-տի քեզ գո—վեմ, Տէր, պի-տի քեզ գո-վեմ ժո—ղո-վըր — դոց մէջ.
Զի . . .
Քեզ սաղ-մոս պիտ' եր-գեմ բո-լոր ազ-գաց մէջ. զի մին-չեւ եր-կինք մեծ է
mp
Զի . . .
զը-թու-թիւնդ. զի մին-չեւ եր-կինք մեծ է զը-թու-թիւնդ, Տէր, մեծ է
զը-թու-թիւնդ, եւ մին-չեւ ամպերն ո-ղոր-մու-թիւնդ. Զի մին-չեւ եր-կինք մեծ է զը-թու-
Զի




## 12 ՍՈՒՐԲ ԵՍ, ՍՈՒՐԲ ԵՍ, ՍՈՒՐԲ ԵՍ

(Այս նոր թարգմանութիւնը կ'երգուի երգ 13ի եղանակով։)

1 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, ո՛վ հզօր Աստուած մեր,
Դէպ ի քեզ կ'ելլեն մեր երգերն առաւօտուն.
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, ո՛վ ամենողորմ Տէր,
Ո՛վ դու Երրեակ անձ, մի Աստուած անհուն։

2 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, քեզ կ'օրհնեն սուրբերը՝
Ոսկեղէն թագերը դըրած գահիդ քով պերճ.
Անդադար կ'երգեն քեզ հրեշտակաց խումբերը
Քեզ պաշտելով, Աստուածդ անսկիզբ, անվերջ։

3 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր, մեծ փառքովդ.
Դու մաքուր հոգւոյն կու տաս բարիքներդ բիւր.
Պըղծութեան նըշոյլ մը չի կենար քու քովդ,
Ո՛վ ջինջ սիրոյ ակ, սուրբ կեանքի աղբիւր։

4 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, ո՛վ հզօր Աստուած մեր,
Անհամար գործերդ կը գովեն քու վեհ անունն.
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, ո՛վ ամենողորմ Տէր,
Ո՛վ դու Երրեակ անձ, մի Աստուած անհուն։

# ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

## 418 ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ




2 Գանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ գըտող զիս արա։ Դուռն ողորմութեան, դաւանողիս բաց, դասեցո վերնոցն։

3 Երրեակ միութիւն, եղելոց խնամող, եւ ինձ ողորմեա։ Զարթիր, Տէր, յօգնել. զարթո ըզթմրեալս զուարթնոց նըմանել։

4 Էդ Հայր անըսկիզբն, էակից Որդի, է միշտ Սուրբ Հոգի։ Ընկալ զիս գթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր։

5 Թագաւոր փառաց, թողութեանց տըւող, թող ինձ ըզ յանցանս։ Ժողովող բարեաց, ժողովեա եւ զիս ժողովս անդրանկաց։

6 Ի քէն, Տէր, հայցեմ ի մարդասիրէդ ինձ բըժըշկութիւն։ Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լուծանող ցաւոյս։

7 Խորհրդոց գիտող, խաւարիս շնորհեա խորհուրդ լուսաւոր։ Ծընունդ Հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ ծագեա լոյս փառաց։

8 Կենարար Փրկիչ, կեցո ըզմեռեալս, կանգնեա ըզգլորեալս։ Հաստեա հաւատով, հաստատեա յուսով, հիմնեցո սիրով։

9 Ձայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձիր բարեաց շնորհեա։ Ղամբարամբ լուսոյ, ղեկավար ճարտար, ղօղեալս ամրացո։

10 Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց ճեպել ի յերկինս։ Միածինդ Հօր, մոյծ զիս յառագաստ մաքուր հարսանեացդ։

11 Յորժամ գաս փառօք յահագին աւուրն, յիշեա զիս, Քրիստոս։ Նորոգող հնութեանց, նորոգեա եւ զիս, նորոգ զարդարեա։

12 Շնորհատու բարեաց, շնորհեա զբաւութիւն, շնորհեա զթողութիւն։ Ուրախացո, Տէր, ոգւոյս փրկութեամբ, որ վասն եմ ի սուգ։

13 Չար մշակողին, չար սերմանց նորին չորացո ըզպտուղն։ Պարգեւիչ բարեաց, պարգեւեա հինգ պարտեաց թողութիւն։

14 Ջուր շնորհեա աչացս, ջերմ հեղուլ արտօսր, ջնջել ըզյանցանս։ Ռետինըդ քաղցու, ռամ հոգւոյս արբո, ռահ ցոյց ինձ լուսոյ։

15 Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա սիրտ իմ քարեղէն։ Վասըն զըթութեան, վասն ողորմութեան վերըստին կեցո։

16 Տենչալւոյդ տեսլեամբ տուր ինձ յագենալ, Տէր Յիսուս Քրիստոս։ Րաբունդ երկ-նաւոր, բուսեա զաշակերտս բամից երկնայնոց։

17 Ցօղ արեան քո, Տէր, ցօղեա ի հոգիս, ցնծացէ անձն իմ։ Իւծեալըս մեղօք, ւիւծեալ աղաչեմ ւիւսել ինձ բարիս։

